



Panicum

Panicum
ՊՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵԱՏԻ

Ե. ՏԱՐԻ 1968 ՆՈՅՐ. - ԴԵԿՏ. ԹԻՒ 11-12

disigned by A. R. ©

باکین
 مجلة شهرية ، أدبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد أرتين كارنيك قزاشياني

•

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

•

բ Ա գ ի ն
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
 ԵՆ ԱՐՈՒԾՍՅՈՒ

ՎԱՐՅՁ ԽՄԲԱԳԻՐ
 Կ. ՍԱՍՈՒՆԻ
 ԽՄԲԱԳԻՐ
 Գ. ՍՆԱԳԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ
 ԱՆԳԱՄՆԵՐ
 Յ. ԳԵՂԱՐԳ
 Ց. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
 Ն. ՊԱՐԹՅԱՆ
 Ժ. ԱԹԱՐԵԱՆ
 ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԳԱՄՆԵՐԵՆ
 † ԵՒ. ՊՅԱԶԵԱՆ

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- Ն. ՊԵՇԻԿՅԱՆ
- Յ. ԳԵՂԱՐԳ
- Բ. ԿՈՒՆԵԱՆ
- ԱՐՄԱՆՑ
- Ս. ՍԱՀԱԿԵԱՆ
- Ց. ՓԱՓԱԶԵԱՆ
- Ռ. ԳԱՌՕՆԷ
- Կ. ՍԱՍՈՒՆԻ
- Վ. ԳՐԱՍՄԱՆ
- ԱՐՇԻ
- Յ. ՄԵԼԳՈՆԵԱՆ
- Վ. ԲԱԳՂԱՍՍԱՐԵԱՆ
- Ա. ԵՐԿԱԹ
- Բ. ԹԱՇԵԱՆ
- Մ. ԹԵՕԼԵՕԼԵԱՆ
- Ե. ՍԻՄՔԵՇԵԱՆ
- Ն. ԶԱՐԵՈՒՑԵԱՆ
- Հ. ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ
-
- ՆՇՄԱՐՆԵՐ

Խմբագրութեան հասցէ
G. SASSOUNI
 Rue Sélim Boustani,
 Beyrouth-Liban
 Հեռագրային թիւ 290898

Բարձր

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

Է. ՅԱՐՐ, ՔԻՒ 11-12

ՆՈՅՄԱՐ - ԳՕԼՅՈՒՄԱՐ 1968

ՊԷՐՈՒՄ

Ա.Լ.ՊԵԱՆՆԵՐՈՒ ՄԷՉ

ՆՇԱՆ ՊԷՇԻԿՊԱՇԵԱՆ

Ա.

Այգեաններու մէջ եմ. Բարձր Սառուս :

Լեռն է ցամաքային կողմ: Լեռներն են կողմերումբեր:

Չեմ տեսած, գտնախոսարար, մեր լեռները հայրենի: Բայց, մաքի աչքով դիտուած, գիտեմ թէ անոնք աւելի արու են ու արքայական, աւելի վեհապետական եւ վեթիւարի:

Թէ լեռներուն արքայից արքան է մեր Արարատը, իր հասունութեամբ ու հասակով, իր գերագոյն գեղեցկութեամբ ամեհի:

Այգեանները կարծէք էզ են, գեղեցիկ ամազոններ, ու իրենց մազնիսով կը քաշեն այրիխաթները, արկածախնդիր դազաթասէրներ: Երբեմն մահը իր մազնիսը կ'ուղչէ անոնց, ու կը պատահին արկածներ:

Այլ են մեր լեռները: մեր Արարատը թէ՛ վեհապետ է, թէ՛ վեհափառ, ու լեռն է մեր սրբազան, ինչպէս լեռը Յուսիսայտա, ճափոններուն համար, ինչպէս լեռը Կալիսա, Հնդկաստանցիներուն համար, ու Պոլսո Օշան, մոնկոլներուն համար: Եւ ինչպէս Ուիտրոսն էր հին հելլեններուն եւ Հեթանոս հռոմէացիներուն համար ալ բլուրը Կապիտոլիոնի:

Այս լեռները դա՛հ են ու գահակալ, թաղ են ու խոյր եւ մեհեան ու միանգամայն մայր եկեղեցի: Աստուածանիսա բարձունքներ, սրբավայրերով լի:

Արդեանները զեղած իծաղ թագուհիներն են բարտաւոր միջաժայրի և Լեոնակումբ՝ կեղրոնը Եւրոպայի:

Լեոները կործնէ խորհրդանշաններ են քաջողութեան, եւ իրենց մէջ ու չուրջը ունին ամուսններ, ուր կը գարմանունին հիւծախտաւորներ:

Կայ ամա մը գտնուած վայրի մէջ, եւ կը դարմանունին մօտաւորապէս հինգ հարիւր տիկիներն ու օրիորդներ, եկած Յրանսայի բոլոր կողմերէն, բայց տաւալապէս մեծ քաղաքներէն, մասնաւորապէս մայրաստանէն, ուր կայ խնդում, վաղք, հեք, պակաս օդի, ապականութիւն, տաք-նապ, տառապանք, վախեր ու զրկոնք, որոնք կը պատրաստեն հիւծախտը եւ այլ հրէշներ անյաղթահարելի: Հիւծախտը՝ ա՛յլ ընտանեցած դազան մըն է, մանրադէտով միայն տեսանելի: Գիտութեան Գողիաթին դարչապարին տակն է հիմա:

Հիւծախտաւոր քաղաքացիները կը զրկուին լեոնանիստ ամուսնիցը, յանուն բժշկութեան, իսկ առողջ լեոնորդները կը հիւծին, երբ յանուն ապրուստի կ'իջնեն քաղաք ու կը զրկուին լեոնիցէ:

Ի՞նչպէս չհիւծի Հայութիւնը, հետո հայրենի լեոնիցէ: Ի՞նչպէս չհիւծիլ, առանց Արարտի: Ի՞նչպէս չհիւծի Սասունցին, առանց իր լեոնախարհին, ուր տեղի ունեցած են դուրսէն գիւցազնամարտներ հին ու նոր, դայիբոս եւ թորենիներու վճռակներուն դէմ:

Ի՞նչպէս չհիւծի ներկայ Հայաստանի Հայութիւնն անզամ, Արարատը իր տաքերուն առջեւ, այնքան մօտակայ ու նոյնքան եւ աւելի հեռակայ:

Այսքան անբարոյական անարգարութեան առջեւ՝ ի՞նչպէս չուեննայ հոգեկան հիւծախտ:

Սակայն, Արարատը կը բուժէ հեռուէն իսկ, հաւատարիմ Հայոց հոգիներուն մէջ մտած, նման Աստուծոյ:

Կուսուցանէ Հայութեան՝ մեծ դասը համբերութեան, յոյսի եւ հաւատքի: Միշտ նման Աստուծոյ: Զի նկարն է ան թէ՛ Հայութեան, թէ՛ Հաստիչին:



Լեոնախարհը այնպիսի ուժերն ունի է քարերու: Ժայռերու մրրիկ մը, որ անշարժացած է: Զիւներով կերտուած արձանախումբ, յարափոփոխ եւ մանզներով, տամբուռ լոյսերուն նկարչութեամբ:


Բարձունքներ, բնական բուրգեր, բլուրներ, եւ բիւրեղներ բազմամի: Արարչական դազաթական դժազրութիւններ բազմամեւ, բազմատեսակ: Ամպերէն վեր են եւ արեւուն դէմ յանդիման:

Ահա բարձրազաղաթը, Սպիտակ Լեռը, Մոն Պրանը յանդիմանակայ (4807 մեթր):

Եւ երկնակամարը լիովին լազուարթ: Լեոնախարհի սպիտակութեան մէկ անկիւնէն կ'երեւի Մէրլէ մաստուրին խոյսցող խալը, սեւ ու նրբենի:

Խա՛լ՝ որ ուղղուած է լեոնիբուն, լոյսին, Աստուծոյ Յանուն ցաւերուն եւ վիշտերուն մարդկութեան: Խա՛լ՝ որ հողիները կ'օրօթէ, յանուն խողաղութեան, որ կ'օրհնէ, յանուն հոգեկան հանդարտութեան: Զի մարդիկ կան, որոնց համար ամենայն ինչ անհաւատքի ու տուախտնք:

Անհաւատ անզամ կը արկաւորուի աւելի խալէն, նոյնիսկ



յեւրֆնապէս կը տեսնազրէ, Բարակ խալ մը, խորհրդանիշ չարչարանաց, կատարներուն անունն սպիտակութեան վրայ:

Մարդ կ'ուզէ ծնրազրել ու աղօթել, հոգեկան հզօրութեամբ: ցմրուր պարպուելի անդուններէ, անստուգութիւններէ, արձակել ամպերն ու ամպրտուները եւ լեցուել երգասաց երանութեամբ:

Ու կ'աղօթեմ լազօթող մարդոց համար, մասնաւորապէս վտանգուած Հայութեան համար, հիւանդներուն համար, որպէսզի անոնք արժանանան ուրախ վերադարձի, որպէսզի ամէն մէկ հիւծախառուր վերապսնէ իր բոյնը, զորովայլից զիրկերը իրեն սպասողներուն, նաեւ զրկուածներուն հացէ, քմպելիէ, սէրէ ու դեղէ:

Պահը սուրբ է խալով մը մատուռի, պահը սուրբ է սպիտակատեղի բարձունքներով ձիւնապատ: Պահը սուրբ է, զի լեռ մը տանար է, պահը սուրբ է, քանզի վայրն է աստուածաբնակ:

Կը շարունակեմ աղօթել:

- Ո՛վ Տէր, կշտացուր մարդկութիւնը հոգևով, մտքով ու մարմնով: Բարձրացո՛ւր: Եւ Ազատութիւն պարզեանա՛ր բոլոր ժողովրդոց: Տապալէ բռնակալները, որոնք կը ժպրհին պղծել սքանչելի ստեղծադործութիւնը, իսկ Հայերու տո՛ւր մեր հողերը, մեր քարերը, մեր լեռները, քանզի մեր քարերուն եւ հողերուն համար ունինք կարօտ կրակէ, քանզի Հայը իր հողերուն համար ձօթի է ու ծարաւի: Եւ քանզի Հայուն համար անապատներ, անդունդներ ու դերեզմանատեղիներ են՝ շքեղ ստանները Եւրոպայի, Ամերիկայի: Տո՛ւր մեզի հասնել Բեզի, մեր լեռներուն ստորտներէն, կողերէն ու արտեաններէն:

Ճ

Լեռնաշխարհը ինքն իսկ Աղօթք մըն է, բարձրացած բազում բառուկներով երկնակաբկատ:

Լեռն է անդրի Աղօթքի:

Մեր մուրազին աղօթասացներն են լեռները, որոնք կը պսպղան լուսահեղեղ լուստապակներով:

Այդ աղօթասացները կը խօսին Աստուծոյ հետ, արարչական բարբառով, այսինքն լուսութեամբ: մերթ ալ կը խօսին իրենց բարբառով, կայծակներու շալիւնով ու սրտումներով:

Սարերուն սրտութիւնն է սաստկազոյն ու սքանչելի:

Յաճախ աղօթքի մէջ են:

Փոխակերպուած են սպիտակազդեատ աղօթասացներու, մէկտեղուած խառնիխառն: Կ'աղօթեն իրենց ամբողջ էութեամբ, կ'աղօթեն հինաւորց Հայրապետներու պէս, հոգեւին թեւելով դէպի անբաւը անհասանելի: Կ'աղօթեն...

Լեռները ի՞նչ կը խնդրեն...

Ոչինչ իրենց համար...

Բայց վտաւաբար կը խնդրեն՝ վարը զտնուող մարդկութեան համար՝ խելք ու խիղճ: Իսկ իրենց մէջ ու շուրջը ապաստանած պարտեալներուն եւ պարտասուններուն համար ալ քաջողութիւն:

Պատգահիկ ձայնով մասնակից եմ իրենց աղօթքի համերգին, լուսութեան մէջ Ալպաններուն:

Եւ հողիս կը յորդի՝ կը յորդի լացով ու լազուարթով խնդութեան:

Հացս ու լազուարթն լիացած են լոյսովն Ատուծոյ :
Ալէլուիա՛, Ալէլուիա՛...

Բ.

Ալպեան լեռնագօտի ... Գերազոյն ու գեղեցկագոյն լեռնաշխարհը
Եւրոպայի : Եռանդիւղ լեռնաշղթայ : Տարածուած է արեւելքէն մինչեւ Ա-
ւրասիա : Հարուէն մինչեւ Միջերկրական ու Իտալիա : Արեւմուտքէն՝
Ֆրանսա : Իր մէջ ունի Ձութցերիան :

Բարտաւոր բարձունքներ, որոնց շուրջը շէն են բազմաթիւ սառան-
ներ, քաղաքներ ու քաղճարիւր գիւղեր :

Այ՛, բարտաւոր բարձունքներ, քանզի մնացած են անպիղծ, մար-
դակերպ զայլերէ ու բորենիներէ :

Ճ.

Կը նայի՛մ Ալպեաններուն, ու կը մտաբերեմ մեր ամբողջական հայ-
րենիքը, որ լարբիւրինթոս է լեռնագօտիներու : Անոնք ամէն ուղղութեամբ
ակնբուած են, զգեցած ձիւնապատ պատմուճաններ : Ի՛նչ աստուածազրոյ՛մ
հանդէսներ անգրիի : Ի՛նչ տիրաւոր տեսիլ արձաններու ալիկոծութեան,
ձիւներու եւ լոյսերու :

Կ'արժէ զան մայելել վերէն, օդանաւի մը մէջէն, շրջելով ու դիտե-
լով ամէն կոյս : Խորխորատներ ու խոյանքներ, վեհապետութիւններ ու վե-
հեր, անդունդներ ու արեւաններ իրերայաջորդ : Մին քան զմիւսը զար-
հուրելի եւ զմայլելի : Ապառ ապառաժներու, ժայթքում ժայռերու եւ քան-
դակազործութեան ի՛նչ աստուածային ցուցադրութիւն :

Դ.

Ալպեաններու մէջ կամ ժօա՛ մերկամարմին Մահը կը մօի, ու ման-
զաղովը յաճախ չ'երեւի : Ահա թէ ի՛նչու անթիւ ասաներ կան ամէն կողմ :
Փունդ առ դունդ այստեղ են՝ քաղաքներու մէջ զարնուածներ հիւծախտէ :
Այստեղ են, շնչելու համար օդ մաքրեի, մասունքներով լեռներուն տոկու-
նութեան, եւ գանկու իրենց հոպին, քանզի ուրացած էին, անտեսելով ա-
կը կրջանկութեանց :

Ե.

Նայելով Ալպեաններուն, կը մտաբերեմ մեր ամբողջական հայրե-
նիքը...

Մեր լեռները հայրենի եւ մեր լեռնորդիները աւաղ դեր կատարած
են, մեր դարաւոր զոյամարտին մէջ : Ամէն անգամ երբ հորդաներ յարձա-
կած են, լեռները պատասպարած են շատեր հայերէն, իսկ մեր լեռնորդիե-
րը իրենց դիրքերէն դիմադրած են թշնամիներուն, իրենց օժանդակ ունե-
նալով արմենուհիներ : Անչափահասներն ու ալիւորները՝ շուանէ ասնդուխ-
ներով կ'ելէին անվերելակելի ժայռերէն վեր, ապա կը քաշէին շուանէ
սանդուխները եւ կ'ըլլային անմերձենալի :

Յարձակումներու ենթակայ էին Հայք, որովհետեւ մեր երկիրը դե-
ւերուն երթեւեկի ճամբան էր, եւ որովհետեւ Հայոց բարեկեցութիւնը,
արդիւնք աշխատասիրութեան, մախանքը կը դրդուէր ազգերուն աւազակա-
բարոյ:

Ճ

Երկրագունտը իր յաւիտենական հուրովայթին մէջ է, մինչդեռ լեռ-
ները կարծէք կը քնանան դարաւոր նինջով, մտած սպիտակ վերմակներու
ներքեւ: Ամէն մէկ լեռ դողախարան մըն է առեղծուածի:

Լեռները այս աշխարհէն են, իրենց զեղեցիութիւնով, ու այս աշ-
խարհէն չեն՝ իրենց անտարբերութեամբ: Փիլիսոփայական քուն մըն է ի-
րենցը: Կարծէք կը խոկան, երազի մէջ կամ տեսիլի:

Հսկաներու կարաւաններ կանգ են առած, ու կը հանգչին յաւեր-
ժարար:

Քնացող լեռներուն օրօրներն են փոթորիկներն ու ձիւնամբրիկները,
շառաչելը կայծակներուն, սաստկաշունչ սուլոցները քամիներուն, եւ որո-
տումները ամպերուն:

Ամէն մէկ լեռ սրբատեղի մըն է խոկումի ու խորհուրդի: Նաեւ սպա-
սումի:

Հանքեր են համբերութեան՝ մանաւանդ մեր լեռները հայրենի:

Ճ

Հայաստանցի բարեկամ մը, ժամանակին, ինծի ըսած էր.

— Տեսած եմ մեր պատմական Հայաստանի թուր լեռները դրեթէ:
Քանի՞—քանի անգամ տեսայ նաեւ Ալպեանները եւ Ապենինեանները, որոնք
անուրանալի կերպով զեղեցիկ են ու մերթ ընդ մերթ միայն կը յիշեցնեն
լեռները Հայաստանի: Բայց ո՛ւր է մեր լեռներուն արքայութիւնը ամեհի,
ո՛ւր մեր լեռներուն վսեմագոյն վեհափառութիւնը, հնազարեան հեղինա-
կութիւնը, տանուտիրական տիրապետութիւնը: Մեր լեռները ... Անոնք
հնօրեայ հօգաներ, հնազարեան հայրապետներ են:

Մարդ կը պատկառի տեսնելով զանոնք: Կ'ուզէ խոնարհիլ, ծնրա-
դրել, երկիր պագանիլ ու տեսանազրել:

Անոնք ունին լուսեղէն մաշյութիւն մը, սպիտակ տիրութիւն մը,
ազգեցութիւն մը հոգեզրաւ, նաեւ խստութիւն մը խորհրդաւոր:

Անոնցմէ ամէն մէկը՝ երկնակարկառ տաճար մըն է:

Մեր լեռներն են մեր հազարամէկ եկեղեցիները:

Անոնք կը սպասեն արթնութեան ժամին, շէնութեան շարժին, վե-
րածնունդին...

Ճ

Ալպեան լեռնաշխարհը հսկայական կուստուն մըն է: Լեռները կուռ-
քեր են: Կուստունը պաշարուած է անթիւ ազոթատեղիներով քրիստոնէա-
կան:

Կուստունն ու եկեղեցիները հաշտ են իրարու հետ: Չկայ յարձա-
կում, այլ կայ համերաշխութիւն:

Եւ Աստուած կը ժպտի...

Գ.

Հետզհետէ կը մտերմանամ մանրամասնութեանց լեռներուն, որոնց-
մով շրջապատուած եմ :

Կը մտերմանամ մանուշակներուն, Հովաները համեստութիւն ալ կը
ծաղկեցնեն իրենց ծոցերուն մէջ, անոնք դարնանային մանուշակներն են,
իրենց խոնարհութեան շափ գեղեցիկ :

Կը մտերմանամ մարդոց հետ ալ: Թէ՛ լեռնորդիներուն, թէ՛ սանա-
ներու մէջ գանուղ հիւծախտաւորներուն, երկու սեռէ :

Ո՛րքան փոքրիկ են մարդիկ, բազումտեղով լեռանց հետ: Եւ միաժա-
մանակ ո՛րքան հսկայ են, իրենց դերձական ու գիտական թռիչքներով:

Աշխարհի մէջ ամենուրեք՝ ամէնէն փոքրիկ ու ամէնէն մեծ արարած-
ներն են մարդիկ:

Լեռները եղած են ասպնջական ապստաններ ապստամբներու, աւա-
զակներու եւ աստուածներու: Նաեւ արբուքեանց — մենաստաններու, մա-
տենաստաններու եւ մտտուածներու:

Անշուշտ Աստուածութիւնը տմենուրեք է տիեզերքի մէջ: Բայց կան
աստուածավայել վայրեր: Կան մեծ վայելուչ վայրեր ալ, որոնք աստուա-
ծանիտ են: Անոնցմէ մէկն է դազաթը Մոն Պլանի:

Մարդ կը գտայ որ Սպիտակ Լեռան կատարի ձիւներուն, ամպերուն
եւ լոյսերուն մէջ դոյ է Բանը բարձրագոյն, բուն Բանաստեղծը, տիեզե-
րաստեղծ Բանը, որ կը թրթռայ...

Բնութեան վեհագոյն վրձինը ներկած է ձիւներով՝ սարերուն ար-
տակներն ու եմակները: Մերթ հորիզոնական զծախաղեր ձիւնի, մերթ
ուղղահայեաց, մերթ զիկզակ, մերթ ալ նման ջրվէժի: Մեծերը ձիւնապատ
են ամբողջովին: Եւ արեւը ձիւներուն վրայ: Ձիւնը կը զիմազրէ արեգա-
կին, խկ արփին կը դարպասէ ձիւնին, հազարան ժպիտներով:

Լեռնաշխարհը կարծէք անտիկ է իր պատերով, պարիսպներով,
պատնէշներով եւ բուրգերով ու քարձունքներով: Մոն Պլանը կեդրոնական
կոթողն է, իբրև միջնաբերդ:

Մարդ կը զարհուրի, կը զարմանայ, կը զմայլի, որ հին օրերուն,
հանճարաթոյժ Անիերալ իր բանակով ի՛նչպէս անցաւ այս բարձունքներու
լարիւրինթոսին մէջէն, հարուածելու համար հսկան, որ Հոռովմն էր:

Անգամ մը, անձրեւը տեսց տիւ եւ գիշեր: Առաւօտուն լուսամու-
տէն տեսայ լեռները լուացուած: Ձիւններն իսկ կը փայլէին մաքրենի: Եւ
լեռներուն վրայ լազուարթ երկինքը, որ կ'օծէր լոյսով՝ լուացուած լեռնե-
րը: Բնութեան բազանիքէն նոր ելած սարերը կը նմանէին մաքրամաքուր
մէջ մէկ ամազոնի: Ձիւնները իրենց վրայ իբրև փրփուրներ հոտաւէտ:

Անուն լուսթիւնը լեզուն է լեռներուն: Սարերը կը համերգեն լուս-
թեամբ: Տիրութիւնը խոր ու խռովիչ է այդ երգեցողութեան, որ կ'ունկըն-
դրուի հոգեկան լսողութեամբ: Կարծէք աշխարհի լեռնակուտակ քարերն
անգամ զգայուն են ու կը կրեն վիշաբ տիեզերական: Հակառակ պայծառ
օրերու ժպիտներուն տեղատարափին: Տաամթիթ է տրամութիւնը լեռնե-
րուն, եւ նման չէ տիրութեան անապատներուն, որոնցը մարդկային է,
հակառակ իրենց անմարդարնակ տարածութեանց: Եւ գուցէ այդ իսկ է
պատճառը իրենց վիշտին: Մոայլութիւն մեկուսացումէ:

Լեռներուն առանձնութիւնը առասպելական դրոշմ ունի:
 Գաղանօրէն կը համերգեն լեռները լուսեամբ, լոյսին ու լազուար-
 թին ներքեւ իսկ լալով իրենց անշարժութեան համար կալանաւորի:
 Ըսուած է որ լեռը լեռան միանալ չի կրնար: Լեռը միացած է մե-
 նութեան եւ անկէ բխած մոայլութեան, եւ իր երգը հողերոսով է կարէ:

Ճ

Չարուեցաւ մեղի ծնիլ ու ապրիլ լեռներուն մէջ հայրենի, շնչի սըր-
 բազան օդը Հայաստանի, եւ անոր շնորհօք՝ ծերութեան մէջ իսկ մնալ Լե-
 բրտասարդ ու երջանիկ:

Չարուեցան մեղի երանութիւնները խաղաղութեան ու ազատութեան,
 ոչ իսկ ետքը պատերազմներէ: Մեր բաժինը եղաւ շտեմնել մեր լեռները,
 ու եօթն անգամ եօթնասուն լեռներէ եւ ձորերէ անդին, թափախիլ երկրէ-
 նրկիւր, քաղաքէ-քաղաք:

Մեր լեռները մեղի համար շեղան պտրդեւներ, այլ՝ պարզուպէս
 պատկերներ:

Կարծէք բաւական չըլլար մեր որբութիւնը, եղանք նաեւ խորթ զա-
 ւակներ, թէ՛ այլազգիներու, թէ՛ հայրենակիցներու համար:

Բայց մեր լեռը՝ մեր հողիին մէջն է, եւ մենք մեր լեռան մէջն ենք,
 թէ՛ ազատ, թէ՛ շղթայուած:

Ե՛րբ պիտի բացուի մերձեցումի փառաւոր, փրկարար փապուղի...
 Որպէսզի նոր Արմենակները վերելակեն լեռներն ի վեր Սասունի,
 Մեփանի, Նեմրուծի, Գրգուրի, Բիւրակնի, Վարաչի եւ Այրարտաի:

Որպէսզի Հայք ա՛լ չըլլան պակասաւոր, այլ լեռնան լեռներով, ամ-
 բողջական հայրենիքով ու Հայութեամբ:

Անհուն հաւատքով հարկ է քաշեն մեր լեռները հայրենի: Քաշեն դէ-
 պի ազատաւարութիւն:

Ի՞նչ յաղթանակ ու ի՞նչ ցաւ, էրբ Արմէններ կ'անցնին օտար բար-
 ձունքներէ, անհաղորդ հայ դապարձներու, հայ դժբէթներու:

Անոնց զործուշութեան Հայութեան կը հասնի պատառ մը պատիւ,
 իսկ պարունակութիւնը կը պատկանի օտարին:

Ճ

Մնաք բարով, լեռներ Ալպիան, մնաք բարով արզապոն զաղաթ
 Մոն Պլանի, որ դէմն էիք լուսամուտիս, իբրեւ զահերէն մին Ատուծոյ,
 մնաք բարով ժայռեղէն բուրգեր, բարձունքներ, մնաք բարեաւ բորբիզ:

Կը տեսնե՞մ ձեզ կրկին. կը տարակուսիմ տառապանքով: Ձի կեանքի
 մէջ սեւ ալիքն էր, որ բերաւ զիս՝ ձեր մօտ, ձեր մէջ, Այսուհետեւ տեսնե-
 լու չեմ լեռներ, ոչ ալ լեռները պիտի տեսնեն զիս: Այսուհետեւ զիս պիտի
 տեսնէ ոչ թէ բարձունք մը, այլ պզտիկ փոռ մը վախճանական:

Պիտի շտեմնեմ ա՛լ ձեզ, ինչպէս պիտի շտեմնեմ իմ շտեմած լեռնե-
 րը հայրենի:

Եղայ զրկանքով նահատակ, թող մնամ անխլատակ:
 Բայց յաջորդ Հայկակները թո՛ղ բարձրանան ազատօրէն՝ ազատն
 ի վեր ի Մատիս...

Թող ամէն մէկ հայու կոչումն ու տաքելութիւնը ըլլայ, գեղեցիկ ու օգտակար զործունէութեամբ՝ դադաթ մը բարձրտնայ, յանուն ազգին ու մարդկութեան:

Մեր նախահայրերը լեռնաբնակներ էին. ապագայ Արմէններն ալ ըլլան դադաթակեացներ, առանց քամահրելու ծործորներն ու ծովերը:

Գ.

Տեսայ Ալլիանները նաեւ լոյսով լիալուսնի:
Ի՞նչ շտաշլ շքեղութիւն էր հեքիաթական՝ համայնապատկերը լեռնաշխարհի:

Երկինքէն երկնուած լուսահանդէս էր, աւազ մասնակցութեամբ լուսնի, որ պարպած էր իր զանձարտնը արծաթի կեղորնական բուրդերուն վրայ:

Մոն Գլանը ողողուած էր իր շրջակայ սարերով, լուսավառութեամբ արծաթեայ:

Մոն Գլանը պատկառելի պատուանդանն էր Ատուծոյ, ու իր վրայ փռուած էին արծաթահիւս գորգեր:

Աջ ու աճեակ գաղաթներու վրայ ոսկի, իսկ կարկառուն միջնաբերդն էր արծաթազօծ:

Գիշերին կէսն էր, ու արշալոյս էր շողշողենի:
Կարծէք սարքուած էր հանդիսութիւն հարսանեկան:

Տեղա՛յր արծաթ ու ոսկի ու մարգրիտ եւ փպիտ...
Կը թուէր թէ պիտի յայտնուի թափօրը հարսնեւորներու, փողփողուն տարաշներով հնօրեայ:

Թէ պիտի կաթաւեն կոյսեր մերկամարմին, նաեւ պարիկ պարուհիներ, պճնուած ապտեղահիւս զարդարանքով:

Թէ հարսն ու փեսան, իբրեւ թագաւոր ու թագուհի, պիտի բարձրանան դադաթը գերիվեր, կանգնած երկինքէն իջող տարափին տակ արծաթի:

Թէ պիտի հնչեն նուագարաններ, ու լուսավառ լուռութիւնը պիտի վերածուի ցնծածայն տօնի:

Ո՛չ ոք կար հանդիսատես տեսիլին:
Թերեւս կը դիտէին մեռեալները մութին մէջջէն:

Հազուադիւրս տնցորդներէն ո՛չ մէկը արձակեց ակնարկ մը՝ այդ անդրաշխարհիկ երեւոյթին:

Դիւթուած դիտեցի երկարօրէն այդ վերնադաւառի արծաթալոյս հանդիսավայրը, ուր ո՛չ մէկ հերոս եղաւ տեսանելի:

Ձանցաւ աւետարներ ոչ մէկ սերովբէ:
Բայց բուն հերոսը Մոն Գլանն էր, իր յառաջապահ ու թիկնապահ լեռներով, որոնք լողցած, օծուած էին լուսնային պերճութեամբ:

Յերեկ էր լեռնաշխարհին մէջ, իսկ սարահարթին վրայ՝ դիշեր:
Ձէի տեսած ախն ու խաւարը միտամանակ միասին, դրացի:

Անցան երկու կոյսեր, իրենց ձեռքին մէջ մէկ փունջ մանուշակ:
Սարահարթին սանձներու աւանին բոլոր պերճաթաղարներն ու պարտէզները մանուշակներով են լի: Ալպիան այդ ծաղիկները կը բարբառին բուրբելով:

Որքան քիչ են մանուշակները մարդոց մէջ: Եւ որքան շատ են ժա-
նափուշերը, որոնք իրենք զիրենք կը խայթեն, ուրիշները խոցելէ աւելի:
Անցորդ աղջիկներէն մին, պաշտիկ մը կանկ առաւ, վեր նայեցաւ ու
սիրահարը կանչելու պէս աղաղակեց.

- Լուսա՛, լուսա՛...

Աւել զիշերն է սեւ գինի...

Աւել զիշեր, իսկ լեռներուն վրայ լուսահիւս գորգեր, որոնք կը սպա-
սեն պարիկներու, պարահանդէսի:

Տարիներ առաջ, հայ գրադիտուհի մը ինծի ըսած էր.

- Հայաստանի զիշերը անգամ սեւ չէ, այլ գոց կապտագոյն:

Գոց կապտադ՛ոյն ... Ի՞նչ անօրինակ գեղեցկութիւն ... Կապտայ
զիշեր ... Երկինք երկրի վրայ ... Հայաստանը գրկուած երկինքէն ...
Կապտոյ կենդանութիւն ... Լազուա՛րթ...

Ոմանք գոց կապտոյը կը տեսնեն սեւ:

Տեսողութեան նոյնութիւն չկայ, ինչպէս չկայ տեսանելու հանգի-
տութիւն:

Երբ մարմնական աչքերը բան մը կը տեսնեն տարբեր գոյներով ու
գեղեցկութեամբ, մտային աչքերը աւելի այլապէս կը տեսնեն:

Ահա հարսանեկան հանդէսը, առանց հարսի ու փեսայի:

Թէեւ զիւրերն մէջ կը հոսի հիմնեան գինի:

Դատարկ է հրաշագեղ հանդիսարահը լեռներուն:

Բանաստեղծութիւնը կայ, բայց բանաստեղծը չկայ: Մինչդեռ մեր
մէջ ընդհակառակն է...

Բնութեան բանաստեղծութիւնները կ'ուզեն բանաստեղծներ, յանուն
վերարտադրութեան, իսկ բանաստեղծները կ'ուզեն բանաստեղծութիւնը հա-
մայնապատկերներուն հայրենի:

Կեանքի մէջ միշտ բան մը պակաս է: Եւ պակասը ողբերգական է:
Քիչերու տրուած է լոյսը լիութեան: Եւ յաճախ անոնք ալ չեն գիտակցիլ,
չեն գնահատեր: Նախ հարկ է ճանչցած ըլլալ մեծ Տառապանքը, կարենալ
ըմբռնելու համար երջանկութիւն մը երանելի. պէտք է անցած ըլլալ
մահուան մօտէն, լիովին համեստելու համար գեղեցկութիւնն ու քաղցրու-
թիւնը կեանքի:

Մեզի պակասածը պարունակութիւնն է, մեր լեռներն են ու մեր լի-
ճերը, մեր դետերն ու մեր դետիները, մեր սրբատեղիները, մեր քարերն
ու մեր հողերը, ուր հերոսօրէն ու մարտիրոսաբար մահացաւ ժողովուրդ
մը, եւ մնաց առանց գերեզմանի: Վերապրողներն ալ մնացին չարաչար
անիրաւեալ:

Այստեղ հարանիք չկայ, իսկ այնտեղ կայ յուղարկուորութիւն,
մինչեւ յարութիւն, մինչեւ արշալոյսը յողթանակի:

Մոն Պլանի վրայ լուսավառ ամպ մը, իրրեւ վարագոյր կը թրթռայ
խորհրդաւորութեամբ:

Ամպին ետեւ կարծէք Մէկը կայ, Մէկը որ Ամբողջն է, Մէկը որ
Բանն է անվերծանելի, անհաշուելի, յաւիտեան անիմանալի...

Կրկին մնաք բարով, լեռներ ու լոյսեր Ալպեան, ձիւներ ու ձորեր,
մամուռներ ու մանուշակներ, տաճարներ ու տուններ սիրուն եւ սիրելի,
չքեղ իջեալներ, համեստ հիւղակներ ու ճամբաներ ուղիղ, ոլորապտոյտ,
զատիվեր կամ զատիվար, մնաք բարով բոլորիդ, բացի սանաներու հիւ-

ծախաւորներէն, որոնց կը բարեմտութեմ – երբքա՛ք բարոյ՛ ձեր բուն բոբ-
ները, ձեր տուները, առո՛ղջ հա արցունքներով խնդութեան...

Ամէն ոք իր Տունը ընտանեկան, իր Տունը տէրունական, իր Տունը
Հայրենի...

Ե.

«Ընաք բարոյներէ հոգը, զարձեալ Ալպեաններու մէջ եմ :
Հեքիաթը եւ իրականութիւնը...»

Մտած էինք Հեքիաթէ մը ներս : Արեւելքը լուսեղէն ու ձիւնապաս
լեռներու համալսանկարը, արեւմուտքը պարխոպներ ապառաժէ, որոնք կը
պաշտպանէին Հեքիաթը, իրականութեան դէմ աշխարհի :

Ընդմէջ արեւելքի ու արեւմուտքի՝ կայ սարահարթը իր կանաչալեղ
ծործորով ու գունազեղ տուներով :

Մայիս էր. բժշկական խորհուրդով, մէկ ամսուան համար եկած
էինք, թէ՛ օգտփոխութեան, թէ՛ հիւանդոսի :

Ապրեցանք շրջանակի մէջ Հեքիաթի :

Ամառ էր սարահարթին վրայ, թէեւ ցուրտ ամառ մը, իսկ բար-
ձունքներուն վրայ ձմեռ է, ձիւներով յախտենական :

Մեր տեսողութիւնը չէր յագնար դիտելով, մեր լսողութիւնը լեցը-
նել չէինք կրնար դրախտական դաշտալներով, իսկ մեր հոգին չէր դաճա-
նար անմերձ արեւցութեամբ ու յափշտակութիւնով :

Հեքիաթին հրաշքը գոյ էր ու անջնջի :

Հեքիաթը իր աստուածային արձանագործութեամբ կանգնած էր, իր
յարափոփոխ շքեղութեամբ, իրրեւ լեռնային ու դաշտային դրախտ, գըղ-
եակներով առի :

Եւ սակայն, կար նախազգացումս, զօր յայտնած էի ծանօթներուս,
մէկնէկ շարքներ առաջ, թէ պիտի պատահին աղէտներ անսպասելի :

Հայ ու Փրանսացի հարեւաններ ու բարեկամներ կը հարցնէին.

– Բայց կը վախնաք ի՞նչ բանէ... Ի՞նչ բանէ կը կասկածիք... Ի՞նչ
կը գուշակէք...»

– Որոշակէս ոչինչ կրնամ ըսել : Մարդարէ չեմ, այլ նախազգացող :
Պիտի պատահին շատ զժրախտ գէպքեր ... Ու ես պիտի դանուիմ մէջը
անեիք...

Նախազգացումս կը զտնէին տարօրինակ, անըմբռնելի :

Բայց զօրաւոր էր զգացումս՝ թէ սազնապ մը գալոց է, տազնապ
մը անխուսափելի :

Հակառակ նախազգացումիս ճամբորդեցի : Խոստացած էի գտնուիլ
Ալպեաններու մէջ : Դժուարին կարգադրութիւններ, արգելքներ հարթուած
էին : Ճակատազրականօրէն ճամբորդեցի :

Եւ եկաւ իրականութիւնը ու մտաւ Հեքիաթին մէջ :

Կարծէք պաշարուեցաւ, պարտուեցաւ Հեքիաթը, ու նահանջել իսկ
չկրցաւ, այլ դարձաւ դերի :

Իրականութիւնը իր կեղտոտ ու կոշտ պարշապարով կոխտոց ամէն
ինչ :

Մէջն բարձրացան նոր լեռներ : Հոգիեր, մտմտութիւններ լեռնակուտակ :
Ինկած էի անեիք մէջ...

Այլպե՛սնե՛րու մէջ մնալն էր անհնարին, իսկ մեկնելը՝ անկարելի :
Յկած էր իրականութիւնը անլուծելի :
Հրէշը հեքիաթին մէջ էր մտած :

Ահա իրականութիւնը իր տաղնապով ու տղեղութեամբ, դաժանու-
թիւնով ու դառնութեամբ եւ բրտութեամբ ու բարդութիւնով :

Ամբողջ Ֆրանսայի մէջ, բոլոր սենտիքաներուն կողմէ յայտարար-
ւած է ընդհանուր զործադուլ : Երկիրը անդամալուծուած է : Գնացքը կանգ
առած է, թղթատարութիւնը զադրած է զործելէ : Հեռագհետէ կը պակսի
ամէն ինչ : Փակուած են դրամատուններ ու պետական հաստատութիւններ :
Ոչ ոք կրնայ շարժիլ իր տեղէն : Իր գտնուած տեղը անհրաժեշտ է վճարել
վարձ, ապրուստ պէտք է : Թղթատարութիւնը մեզ զրկած է թերթերէ ու
նամակներէ : Կ'ընդունի միայն զինուորական եւ բժշկական վաւերացուած
զէրքեր : Միայն կառք ունեցողները կրնան ճամբորդել, եթէ կարօտ չեն
Էւանջիլ : Կտռք եւ Էւանջ ունեցողները ճամբորդ կը տանին Փարիզ, երթը
վաթսուս հազար Ֆրանքի : Մինչեւ փարիզ տասը ժամուան ճամբայ է դը-
նացքով :

Վա՛յ ու վա՛յ տնտեսապէս տկարներուն, երբ մանաւանդ ամէն ինչ
կը սղի, ամէն բան կը սպառի... :

Ի՞նչպէս կարելի է դուրս գալ այս ամբողջ անելին :

Տեղւոյն վրայ փոխատուութի՛ւն... Հրեշտակ մը անզամ շընեք այդ
բարեբը ո՛ւր ոքի : Այս օրերուն, երբ տաղնապին տնտղութիւնը ո՛չ ոք զիտէ :
Լուրերը օք օրի կը դառնան յոթի :

Ամէնօրեայ պատերազմ կայ, ուռնողներու եւ ոտտիկաններու մի-
ջեւ : Ամէն օր հարիւրաւոր վերաւորներ : Գըսնն թէ զործաւորներ, պաշ-
տօնեաներ ալ միացած են ուռնողներուն, մինչեւ անզամ վերոֆեւտօրներ,
եւ կը սարքեն ցոյցեր ու կ'ըլլան կռիւներ կատաղի :

Հեքիաթը հովի մէջ է, հեքիաթը ամպածրար է ու ցուրտ է, հակա-
ռակ որ վերջն է Մայիսի : Մուշ, մութ, անձրեւ, խոնաւութիւն : Հեքիաթն
ալ կարծէք զաշնակցած է ցուցարարներուն ու կռուողներուն հետ, սաստ-
կացնելով տաղնապը, որ արդէն է անտանելի :

Արեւն ալ գործադուլի մէջ է :

Անոնք՝ որոնք պիտի մեկնէին արձակուրդի, մնացին իրենց տեղերը,
զրկուելով արձակուրդէ : Աւելի դժբախտ են, սակայն, անոնք՝ որոնք, ար-
ձակուրդի մէջ էին, ու չեն կրնար վերադառնալ, մատնուած հազարումէկ
տաղնապի :

Ապաւինած են ողորմութեանը Ատուծոյ, սրուն երկասիրութիւնն է
հեքիաթը, իսկ իրականութիւնը զործն է սատանաներուն, որոնք մար-
դիկն են :

Ե՛րբ կարելի եղած է վայելիլ զբախտը, առանց պատժարար պա-
տահարի :



Ամէն ոք յուր մը կը հաղորդէ ու լուր մը կը սպասէ խօսակիցէն :
Լուրերը կը դառնան Փարիզի շուրջը՝ կռիւները կը շարունակուին
մօլեպօրէն :

Պահաս սննդեղէնի: Տազնապ մասնաւորապէս միտի, բանջարեղէնի, մրգեղէնի:

Ուտեստեղէնի առաքում չի կրնար կատարուիլ ղէպի մայրաքաղաք, դնացք ու բեռնակառք չըլլալուն:

Ֆազմաթիւ քաղաքներ Փարիզի ցուցարարներուն հետ են, ու կրնայ պայթիլ պատերազմ քաղաքացիական:

Լուրերուն ո՞րքանը սոսոյ պ ու ո՞րքանը սուտ են: Եւ ո՞րքան է շափազանցութիւնը:

Տեղւոյ մէջ ծանր է ծխախոտի տազնապը: Ամէնէն գործածական ու աժան ծխիկը, կալուազ պլէօ, անյայտացած է հրապարակէն:

Աղած են սննդեղէնները, որոնք արդէն սուղ էին, բաղաւորամաք պիներուն Փարիզի:

Տազնապ ու անել:

Կեանքս շարք մը եղած է անելներու: Ամէն անգամ, սուկայն, փըրկըւած էմ հրաշքով մը անյուսալի: Յոյսս ճակատագրիս վրայ է:

Ու կ'աղօթեմ...: Լակասութեան մէջ չեմ, այլ անելի մէջ:

ճ

Փրանսուհի մը ըսաւ.

- Որքան ճանչցայ ձեզ, հեղնող մըն էք ու երազող մը: Ասոնք ձեր մտքին ու հոգիին դրաղումներն են: Տեսակ մը կոչում: Սակայն, կ'ուզէի դիտնալ թէ ի՞նչ կ'երազէք:

- Մարդիկ ի՞նչ կ'երազեն... Միեւնոյն բանը գրեթէ... կեանք անտառապանք: Փափաքներու իրականացում: Ըլլալ առանց ցաւի, առանց վիշտի, առանց կարիքի: Կ'երազեն անկարելին... կապոյտ թռչունը:

- Յայտնի է որ շատ տառապած էք:

- Իմ տեղս ուրիշ մը կրնար խելագարիլ կամ մահանալ, կրնամ ըսել Աէթըրթընի պէս թէ «հազար տարի ապրած եմ»:

- Ի՞նչ հիմա...

- Գիտէք: Անելի մը մէջ եմ, հրէշի մը զիմացը ու շունիմ նահանջի ճամբայ: Միայն Աստուած կրնայ վիճակս դնել կարգի: Ոչ մէկ բարեկամ կրնայ օգնել ինծի, էթէ նոյնիսկ փափաքի: Կեղւոյս վրայ գտնուողները, առաւել կամ նուազ իմ վիճակիս մէջ են, բացի տեղացիներէն ու հիւծախաւորներէն, որոնք ունին բնակավայր եւ սնունդ:

- Եւ տեղացիներէն շատեր կը ջանան շահագործել այս վիճակը ողբայի:

- Գաւառացիները կը կարծեն, թէ մայրաքաղաքարնուկները միլիոնատէրներ են: Անչույտ կան միլիոնատէրներ, մանաւանդ մակարոյձներ: Մակայն, մարտիրոսներ ալ կան անհաշուելի: Գերիներ նոր տեսակի: Բայց միթէ գաւառական քաղաքներու մէջ մասնաւորապէս՝ չկա՞ն միլիոնատէրներ ու մակարոյձներ...

Ուրիշ Փրանսուհի մը կը զարմանար ու կը զայրանար որ Ալպիաններու աստուածային բնութեան մէջ, բնակիչները տղեղ են հսկում: Որովհետեւ այս մարդիկը սնանիլ ու հարստանալ կ'ուզեն: Ձեն կրնար ուտել լեռները, որոնք չունին նաեւ սակահանքեր: Անոնց միակ միջոցը այցելու-

ներուն արինը քամին է: Իսկ հիմա պատեհութիւնը եղական է, արինն քաշելու համար:

(Նկատած եմ որ բացառիկ դեղեցկութեամբ բնավայրերու մէջ, մարտիկ շատ տգեղ են հոգիով: Պատճառը բնութեան դեղեցկութիւններուն շահագործումն է: Ի՞նչ տարբերութիւն ունին այս մարդիկը դեղեցկուհիներ շահագործող կաւատներէ...):

Ձ

Տեղաւորուած հասարակաց նստարանի մը ծայրամասը, մէջս կ'ընկ- յուղիմ մտածումներով:

Թռչնիկները կը ճռուղեն անհոգաբար: Կան նաև դայլայլողներ, որոնք սաղարթախիտ ծառերուն մէջ դարձած են անտեսանելի: Երանելի՛ են, երանելի, երկցս երանելի:

Մարդը, օր մը, էթէ նոյնիսկ կարենայ թռչիլ, չի կընար աղբիլ տն- փոյթ կեանք թռչունի: Մարդը պարտի ունենալ անցազիր, սահման մը անցնելու համար: Պարտի ունենալ գրամ, զիչերելու համար իջեւանի մը մէջ ու ճաշելու համար: Պարտի ենթարկուիլ բազում օրինաց ու մանու- անդ անօրէնութեանց: Մարդը էթէ նոյնիսկ թռչիլ, օտքերը կաղուած պի- տի ըլլան օրէնքին թակարդներուն: Պիտի ըլլայ թռչուն թակարդի: Իսկ հիմա թակարդուած է թեւարեկ: Թակարդուած է անելի մէջ:

Ներքնապէս դո՛ւ են առեւտրականները: Ամէն ինչ սուղ կը վաճառեն, ու վճարելու անկարողին «չունինք» կը յայտարարեն:

Մարդը մարդուն մակարոյժն է:

Ու թռչունները կ'երգեն:

Ձ

Հակառակ ուսելու տիրահար մը շրջալուս, երկար, շատ երկար ա- տենէ ի վեր, մնացած ըլլալով կարօտ կերակուրի, կը խռովուիմ, երբ կ'անցնիմ սանաներու դէտնայարկ խոհանոցներու պատուհաններուն առջե-ւէն, որոնցմէ կ'արտաշնչուին պատրաստուող ճաշերուն բոյրերը, որոնք դարձած են ծայր աստիճան ախորժաբէր:

Քիմքս, ստամոքսս, հոգիս ալ, կ'ուզեն ճաշակել դո՛նէ պոլտական պատրաստութեամբ պնակ մը լուբիս: Կամ տապկուած գետնախնձոր գի- նիով ու սալաւով:

Կը քայլէի, երբ դէմս ելաւ ծանօթ Փրանսացի մը ու ողբերգական ձայնով եւ մեռով յայտնեց.

– Հաւկիթ՝ զնելու գացած էի, ու հաւկիթ շկայ յայտարարեց խա- նութպանը:

– Բայց դուք չէ՞ք գիտեր, թէ համաճարակ կայ դործադուլի: Թէ կո- վելը նոյնպէս դործադուլի մէջ են ու կաթ չեն տար, եզները միս չեն տար, իսկ հաւերը զադրած են հաւկիթ անելի: Հաւկիթ անելու կարգը մե՛րն է: Նոյնիսկ պողատու ծառերը դործադուլի մէջ են, ու միբզ տալու համար կը պահանջեն յաւելում գին: Վարունկը անզամ պահանջներ ներկայացու- ցած ու գոհացում ստացած է, քանի որ այսօր սղած էր, կրկնապատկելով իր գինը, ու հասցնելով աստիճանի մը պատկառելի:

Տ

Այլպեաններու մէջ, եւ բախալը շունեցայ Հանգիւելու Պօղոս Սնապեանի «Սո Այդ Եւրոն Եւ...» գիրքին հոտառու շանը, որ զիս առաջնորդէր էր հայ տիրոջ ծօտ, կամ էր տէրը բերէր ինծի:

Ս. երկու պանդուխտ հայեր ողջագուրուէինք, իբրեւ զիւտարարներ: Լրաւիրուէի հիւշակը հայուն: Իր սենեակին ու սրտին մէջ, մին բարեբով, միւսը բարութեամբ լի, գտնէի գոհունակութիւն եւ քաջալերանք, պատմելով մէկտէս լարերին թոսային, անել:

Իսոյց Այլպեանները ընդարձակ են, իսկ ես քալելու անկարող եմ:

Ո՛րք գտնել այդ համակրելի հայը կամ ուրիշ հայ մը, որ մնացած ըլլայ բարեմասնութիւններով հայկական:

Ընդարձակ է օտարութիւնը:

Կարելի չէ՞ յաղթել կոպիտ իրահանութեան, ու անուշ հուսկ ակնարկ մը արձակելով՝ հեռանալ Այլպեաններէն:

Տ

Ընդմիջտ անցած է դարը հեքիաթի:

Հիմա, զարն է գիտութեան, գիւտերու, գործարանի եւ գործադուլի: Հեքիաթը յաղթահարուած է մեքենաներէն, մեքենայութիւններէն:

Հեռացած է Հրեշտակը բանաստեղծութեան, ու հրէջն է, որ կը տիրապետէ, յանուն գիտութեան:

Այսքան յառաջդիմութիւն եւ այսքան անկում չէր տեսած մարդկութիւնը:

Պղծեցին ընկերավարութիւնը, ինչպէս որբայղծեցին քրիստոնէութիւնը:

Բարօրութիւններ կան կարգ մը վայրերու մէջ, որոնք արտաքին են: Հոգիներու մէջ կայ միայն սնանկութիւն:

Եւ սակայն, կան տակաւին առաքեալներու խմբակներ, որոնք կը յարատեւեն բարեգործել իարելունին մէջ, որ աշխարհն է:

Երկրազոռնար արեւուն շուրջը չէ որ կը թաւալի, այլ կը դառնայ դժոխքներուն շուրջը, մերթ այրուելով, մերթ սառելով, որովհետեւ մարդիկ ստեղծած են սառուցեալ գիտական դեհներ:

Մենք ճամբորդ ենք:

Աստուած կամք ու կորով պարգեւէ՝ մնացեալ մարտիրոսներուն:

Տ

Հոգիս լեցունած է տրամութեամբ: Նաեւ յուսահատութիւնով:

Գործադուլները կը շարունակուին յամառօրէն:

Տագնապը կը ծանրանայ:

Ո՛րք են պարիկները հեքիաթին, որ պարապ է, պարպուած պարիկներէ, որոնք չուած, չքացած են հեռաւոր քարայրներու մէջ:

Հոգիս թիմուած է տիրութիւնով: Եւ ես պարտաւոր եմ ուրիշը մը խիթարել, յուսադրել, հոգեղինել:

Ե՛րբ պիտի յայտնուի պարիկապետը իր մոլորական ցպիկով :
 Ա՛մէն գիշեր կը յուսանք լոյսը ողջունել աւետիսով :
 Լուսինն անդամ դործադուլի մէջ է :
 Բայց դործադուլի՞ մէջ ենք, թէ կենսադուլի, յուսադուլի, անմարդ-
 կային խղճադուլի :
 Ժողովուրդին համար դործողները, ժողովուրդը կը շարժարեն, նը-
 ման բացարձակ բռնակալի :



Վերջապէս, ծագեցաւ լուրը, նման լոյսի :
 Կինս եկաւ վարձած սենեակս, ու աւետեց .
 - Գործադուլները վերջացած են : Ա՛մէն բան կը բանի : Նաեւ շոգե-
 կառքը : Ա՛մէն ինչ կըրցայ կարգադրել : Ե՛րբ կը մեկնիս :
 - Վաղն էսկ :
 Կը տարուբերուինք մեծ ալիքներու մէջ յուզումի : Կ'ընկուզինք ալ
 ու կը վերելակենք...
 Ձե՛մ կրնար մոռնալ տանտիրոջս ու տանտիրուհիս վերաբերումը,
 այնքան ազնիւ, անսպասելի : Կը պնդեն նոյնիսկ որ տակաւին մնամ իրենց
 մօտ :
 Երբ առանձնացայ, սկսայ աղօթքի :
 Անհաւատները կրնան ունենալ քմիքազ : Բայց ես զանոնք կը հա-
 մարեմ էակներ արդահատելի :
 Բարձրացաւ աղօթքս, նման Մ'ոն Պլանի : Ասկայն ոչ ձիւնապատ, այլ
 ջերմեռանդ տաքութեամբ :
 Աղօթքը զօրք է հոգեկան եւ զէն ու զբան անպարտելի : Կը մաքրէ
 միտքը մառախուղէ, ու մարմինին կը պարզեւէ վստահութիւն, ողբերու-
 թիւն, եւ հաւատքին կ'ընծայէ ծղի :
 Աղօթքով թեւեցի ու դուրս ելայ անելէն, փրկուելով հրէշներէն
 բազմազլխանի :
 Կը մեկնիմ լուսակապոյտ երկինքով, լուսակապոյտ տրամադրու-
 թեամբ :
 Մնացեալը ... Ատուած ողորմած է, երբ աղօթքն է սրտաբուի :
 Լուսակապոյտ վերջին մնաց բարով մը Ալպիաններուն եւ իր մէջ
 ապրողներուն, թէ՛ շարերուն, թէ՛ բարիներուն... :

Ն. Գ.

Բլաքօ Կ'Անի

Յ. ԳԵՂԱՐԴ**ՀՈՎԸ**

Հովն է կրկին,
 Անկացեալ մօրըս հոգին...
 Կու գայ կապոյտ Անձամօրէն,
 Կը ճամբուրէ՛, կը կանչէ զիս իր գրգամքին.
 Կը փայփայէ, ա՛ն, մեղմօրէն՝
 Մեխակները՝ ծաղկամանին.
 Պատերն ի վեր լուս սենեակին
 Կը խորխորէ - ի՞նչ կը փնտռէ դողդոջագին -
 Կը շշջայ - ի՞նչ - քաղցրօրէ՛ն...
 Կարօտավառ կ'ելլեմ հետը բացուող դռներն,
 Կ'ուզեմ փարի՛լ իր հղանցքին,
 Երկրօգե՛լ ոտնամայմին...
 Ամերայի՛ն...

Լոյսերուն հետ եւ ստուերին՝
 Կը հեռանայ եկած ճամբէն,
 Կ'երթայ նորէն՝ Անձամօրին...

Լուս գիշերին՝
 Հա՛վն է նորէն, մօրըս հոգին...
 Կը փրսփրայ - ի՞նչ - գազանօրէն՝
 Տանըս քիւի՛ն...

ԳԻՇԵՐՈՒԱՆ ՆԵՏ**ԹԵՒԱՆՑՈՒԿ**

Մարգարտածաղիկը լուսնին
 Սեւ մազերու կռակին,
 Մարմարափայլ ուսը ուսիս
 Գիշերը՝ կա՛յս տարփուսիս՝
 Կարօտավառ ու մերկատիտ
 Աչքերու տեղ աստղեր վրձինս
 Կ'անցնի հետըս քեւ-քեւի
 Գիւղի ճամբէն ամայի...
 Հեւքը սրբոյն՝ Անհունինն է,
 Բառը՝ սօսափ ու կարկաչ է,
 Այնպէս փափուկ մարքը քաւիշ՝
 Որ կը մոռնամ խունկ ու հաշիշ...
 Կ'անգայտանամ տակաւ, հեռո՛ւն,
 Երգ ու նրագ օրօրուն:
 Ու կ'երկարի, մեղի՛ համար,
 Վըտիտ ճամբան դիւքավար՝
 Գէլի անտա՛ն: Հեռո՛ւն, հեռո՛ւն,
 Մերոյ խորհուրդ, լուսի՛ն:

ՀՐԱՇՔ

Ձեռքը փափուկ,
 Ձեռքը տափուկ,
 Երբոր, մանկիկ, դրպաւ ձեռքս՝
 Շէն օրերու գարկը սրտիս
 Հընչեց, նորէն, լուս կուրծքիս տակ...
 Ձգացի որ
 Կեանքը պզտոր
 Աւրիւր մըն է դեռ լուսավանկ -
 Երկիրը մեր
 Զէ՛ սառած դեռ,
 Արեւիկն հեռու աստղերում՝
 Յաւերժական կ'ընէ շարքերս -
 Դեռ չեմ միճակ,
 Տիեզերքի գմբեթին տակ՝
 Շունչդ է շունչիս ջերմ արձագանգ:

Տա՛մ ու պայծառ
 Ձեռքդ, մանուկ,
 Վերջուց վըշտի վիհէն խորունկ՝
 Սի՛րտըս, դարձուց՝ աստեղասուն:

Խ Ո Ր Հ Ո Ի Ր Դ

Մա՛րք է հիմա...
 Լեռներ հսկայ գոգն անհունին սուգանաւի պէս կ'ընկզմին,
 Բայց աչքեր կան խորը հողին՝ փայլուն լայտով մ'անդրերկրային:

Յո՛ւրտ է հիմա...
 Թռչունները դողողոջ բոյնէն ալ կը փախչին զէպի հարաւ,
 Բայց հողին տակ, բերաններ փակ՝ կ'նդրագուրուին սիրով մ'անբաւ:

Հո՛վ կայ հիմա...
 Ծառերը սէգ կը գալարուին, գըլուխ կու տան խոնարհ հողին,
 Բայց հողին տակ՝ ասուպահար մարմինները կը խաղաղին:

Ծա՛վն է սեռ՝,
 Ռը աստղին կը հեկեկայ փշրած երազն իր շափիւղայ,
 Բայց ծալափի շիրիմներէն լո՛ւս աղօթք մը կը բարձրանայ:

ԲԻԻԶԱՆԴ ԿՈՂԱՆԵԱՆ

Մ Տ Ո Ր Ո Ւ Մ Ն Ե Ր

Պօղոս Սնտպեան կը գրէ. «Գրականութենէն աւելի վոնմ գոքծ առայժմ ես չեմ կրնար երեսակայել ու առօրեայ տաղտուկները ո՛րքան շատնան, այնքան կ'արմատանայ սէրս այդ կլանող գեղեցկութեան հանդէպ»:

Պատուեանս՝ պարտէզին վրայ: Կիթառին նրգը: Կարմիր երգիչներ, մանկնակ հեռուն, դեղին լռյսեր: Արեւը: Ոչինչ: Արեւը:

Գտած եմ անձս: Անկաշկանդ, անտարագ, մաքուր: Մենք կը մըգնիմք միշտ ուրիշը ըլլալ, մինչ արեւոյ ժամանակը կ'ուզենք մեր ամօր գտնել: Գիշ անգամ մեր անձն ենք մենք: Պատահարները, արկածները, ռոքերգութիւնները չեն հետաքրքրեր արուեստս: Տաւը անբուն է: Պատճառները եւ գրգիռները արտաքին աշխարհէն կու գան, բայց արուեստս խըզւած է պատճառ ու հետեւանքի կապերէն: Ներսն է ամէն ինչ. ահա արդի մարդը:

Դասական քատրոնը, կ'ըսէ Ռեյ Տիւրամդ, մարդու պայքարն էր աստուածներու հետ. եղիսարէքեանը՝ մարդուն պայքարը մարդուն հետ. արդի քատրոնը՝ մարդուն պայքարը իր անձին դէմ:

Ըսած եմ. արուեստն է կրօնս: Կեանքի խորհուրդը պարփակուած է հոն: Ի՞նչը կամ ո՛վ կը փնտռենք արուեստի երկին մէջ: Բնութիւնը, դէպքերը, յէմքերը դուրսն են, կենդանի միս ու ոսկոր, բայց դուն կու գաս արուեստի երկին՝ փնտռելու գիս: Փնտռելու անձը:

Հրաշքը ծնաւ ինձի հետ, պիտի մեռնի ինձի հետ: Կեանքը ինձմէ առաջ գոյութիւն ունէր միլիոնաւոր տարիներ, եւ պիտի սեւէ ինձմէ ետք, միլիոնաւոր տարիներ: Այս հակադիր յանրժութեան մէջ, պահ մը միայն, կեանքը մերն է: Երբ դադրի գիտակցութիւնը, անմահութիւն պիտի չըլլայ: Իսկ եթէ պիտի սեւէ հոգիս առանց սսիս գիտակցութեան, ի՞նչ ունայնութիւն: Կը քուի սակայն, թէ կեանքը մէկ է, անբաժանելի, յաւտ ներկայ: Ապրիլ՝ կը նշանակէ հասնիլ լինելու գիտակցութեան: Արտաքին անօթը լրումն է գիտակցութեան: Բովանդակութիւնը նայնն է, տիեզերական ու անմահ:

Ոստի արբեցած եմ, որովհետև կեանքի հրաշքը գրկած եմ, իսկ է: Յաղթանակը կը գինովցնէ զիս: Ձկայ աւելի գեղեցիկ, աւելի վստմ բամ: Աւելի ուրախ: Անպարտելի եմ հիմա, ոչ ոք պիտի կարենայ կործանել զիս: Պիտի շվերջանամ: Արտաքին անօթը, զգեստի նման, կըմայ իյնալ որեւէ ատեն: Հիննալ, ծերանալ, տարբաւածուիլ: Կեանքին գմայլի մերկու- քիւնը կը մնայ:



Ի՛նչպէս եղաւ, որ մենք դաւանանցիկ մեր կոչումին: Գրականու- քիւնը գեղեցիկ քեզինքին, հրատարակագրութեամ, արագութեամ, մակե- րեանային գոյութեամ: Մեր ժամանակին ճայնը ըլլալու տեղ, եզամք կամչը մեծամասնութեամ:

Որքան ալ բառերը կրկնուած ըլլան ու մաշած, որքան ալ զգացում- ները արտայայտուած ըլլան, մեր դարը ունի անուանում, եզոր երգ մը: Մեր հիւանդագիւն հոգին բուժուած է, մեր մարմինը առողջ ու գեղեցիկ: Նոր, անհասար կշռոյթ մը, - եւ նոր ճամբաներ կ'որոնեն տիեզերքի տարա- ծուքիւնները: Նոր մարդ մը, աստղերու կարօտով տուայտող, տիեզերքի մէջ լողացող: Նոր մարդ մը՝ հինը ուրացող, հինէն դժգոհ, տարագնորէն յոգնած, արտայայտութեան նոր կերպերու երկունքէն բռնուած:

Նոր հայր: Հին ազգանքի մէջ մկրտուած, բայց լաւատես, դժգոհ, անհատապաշտ, սրտնող: Թերեւս հին տարագնորը պէտք է փոխել: Հին իմաստներ նոր կազապարներու մէջ ձուլել, ճամբաներ փոխել, բառերը նոր ձեւերով ու կշռոյթներով արտայայտել: Անցեալէն հեռանալ այլեւս ու սեփական ոմ մը կերտել: Ուրանալ թերեւս, քանզի գուցէ: Արցունքով, երկիւզածութեամբ, ցաւով քանդել: Յանուն նորին, վստմին, ցեղին, կեանքին ու ազգային: Որովհետև յարգանքը, աւանդութիւնը, վայսը մեզ կաշկանդած են: Մեզ պաշարած է միջակը, - մեծագոյնը ազէտնե- րուն:

Հարկ է յանդգնիլ, խիզախիլ, նետուիլ դէպի գալիքը, մեր առնական ժամանակը, լուսաւոր տարածութիւնները: Դէպի աստղերն ու տիեզերքը: Աւելի մեծ, լայն ու խոր մարդկայնութիւն մը: Դէպի մեր առաքելութիւ- նը: Մարդ լինելու վստմութիւնը եւ հայ լինելու խանդավառութիւնը:

Բ. Կ.

Հոս Անճեղք»



Ո Ր Ք Մ Ի Մ Ա Ս Ի Ս

Կարժիր Ռորչակն է սուրում արագ գլխիս վերել.
 Լեռնանում է տակաւ Դեղին Ապառնայիքն անագիւն.
 Մեւ Ընդվզումն է շարժում բաշն ու մոնչում.
 - Սունկն է անում միջուկային...

Մեքենան է անվերջ հաջում Յերիքանքի,
 եւ շաչում է ու շառաչում հայեռյաքնի մտրակը մերկ.
 Կնրտում կայ ատամների...
 Արեւի թէժ հսկայ փստէից նախնաժ
 Կաթկթում է արիւն եւ թոյն.
 Խեղդում է Դաւի նախնում
 Ազրիւրի պարզ երգը արծաթ.
 Տերունները փոխում են ձեւ, փոխում են գոյն.
 Տօզն է փոխում արեան շիթի ծաղկի թերթին,
 Ջայնից արագ սեւ, սրագլատեայ արծիւներ են անեղ թռչում.
 - Սունկն է անում միջուկային...

Հագիս թափուր, սիրտս լիքն է այս իրիկուն.
 Գլուխս վեր՝ գնում եմ եւ դէպի առաջ՝ աչքս Մասսին:
 Կարժիր Ռորչակն է սուրում անեղ գլխիս վերել,
 Գոռում-գոչում կայ ողբաձայն:

- Չեմ նայում յետ, չեմ նայում յետ, որ չդառնամ Աղէ Արձան,
 Հակատս բարձր՝ գնում եմ եւ դէպի առաջ:
 Մի վիրաւոր Ազաւնի է թառում ուսիս,
 Մինչ աչքիս մէջ արիւնում է Որբ մի Մասիս...

ԱՐՄԱՆՏ

Թեհրան

Ս. ՍԱՀԱԿԵԱՆ

MYSTIFICATIONS



*Օտար գրականութեանց թէ արուեստներու «փոքր պատմութեան» մէջ
հաղուագիւտ չեն Վիսքիֆիսալոնները, խաբաղուարճութիւնները՝ Եղ.
Տէմիրճիպաշեանի բառակերտութեամբ, ըսենք՝ գրական կոմ գեղարուես-
տական կատակները:*

*Անոնցմէ ամէնէն նշանաւորներէն մին, ինչ կը վերաբերի Ֆրանսա-
յի, Ռուսիոյ Տորթըլէսի կազմակերպած եւ «Հռչակաւար նկարիչ Պոսանայի»
մը վերադրած, բայց, իրականութեան մէջ, խոնարհ չորքոտանի մը կող-
մէ իր պաշտի կապուած վրձինի մը միջոցաւ ստեղծագործուած գերիբա-
պալտ նկարին պատմութիւնն է...*

*Ուրիշ մը, ստեղծին նոյնքան աղմուկ հանած, «Յեղափոխութեան
նահիւրայ իմաստի Սիմոն»ի չեմ յիշեր քանի Հարիւրամեակին յուշակո-
չումն է, որուն նախամեծարկ եղաւ, տանամեակներ առաջ, Փրանսացի
ուրիշ գրող մը, եւ որ Հարիւրաւոր կոչ-հրուէրներ գրուելէ եւ ի միջի աշ-
լոց ասանեակ մը սկազմակերպներու, երեսփոխաններու հաւանութիւնն ու
գնահատանքը եւ յուշատօնին՝ խօսք առնելու գրաւոր յանձնառութիւնը ա-
պահովելէ ետք, յայտարարեց, թէ էմիլիո Սիմոն անունով մէկը գոյու-
թիւն ունեցած չէ...*

»

*Մեր գրականութեան մէջ այս կարգի խաբաղուարճութիւններ կի-
բարկուած են շատ համեստ չափերով եւ ընդհանրապէս նորահաս գրողնե-
րու կողմէ՝ յամառօրէն մերժուող իրենց գրական փորձերը կողմնակի մի-
ջոցներով խմբագրութեանց պարտադրելու նպատակաւ:
Քանի մը նմուշներ...*

ՍՒՐԱՆՈՅՇ ՊԵՐՊԵՐԵԱՆ

*Մ. Շամտանճեանի «Ծաղիկ» շաբաթաթերթին 1903-ի մէկ համարին
մէջ այս ստորագրութեամբ լոյս տեսան թրքաուսներ եւ Դիւղիմ վարդիպ
խորագրուած երկու բանաստեղծութիւններ, որոնց կ'ընկերանար խմբա-
գրութեան հետեւեալ ծանօթութիւնը.*

«Այս անգամ ալ նորերու բաժնին մէջ հանձնարով տեղ կու տանք օրիորդի մը, որուն երկու բանաստեղծութիւնները թէեւ կարճ, սակայն ահա՛ ու խորհրդաւոր հրապոյր մը ունին...»

«Ուրախ ենք նաեւ, որ մեր հրաւիրին պատասխանելով, օր. Ս. Պէրպէրեան յայնձեռն է մեզի իր ինքնութիւնը: Եւ մենք կը ներկայացնենք զայն իբրեւ իրապէս գոյութիւն ունեցող նոր գրիչ մը եւ ոչ թէ աներեւոյթ կամ երեւակայական գրողուհի մը, որոնք վերջին տարիներուն հասու հոն ճշմարտացի ու թերեւս ալ կը ճշմարտան»:

Իսկ ժամանակակից «Հանրագիտակ»ը նոյն օրերուն լոյս կ'ընծայէր Մ. Կ. Մեծատուրեանի (Մեծարեւոյ) Յիշատակ բանաստեղծութիւնը, Հեռանալ լուսարանութեամբ...»

«Հրատարակելու առիթով այս քերթուածը չենք կրնար զուլել մեր զարմացումը այն միամտութեան վրայ, որով «Մառիկ»ի խմբագրութիւնը, իր վերջին թիւին մէջ, կը յայտարարէր թէ իր Միլիանոյ Պէրպէրեան աւխտակիցը ստուգիւ ազնիւ մըն է, միևնույն մեղի կը տեղեկացնեն, թէ այդ մտացածին օրիորդը նոյն ինքն այս բանաստեղծութիւնը ստորագրողն է» - եւսյն, եւսյն:

ԻՍԿՈՒՀԻ ՀՈՎԵԱՆ

Այն օրերուն, երբ վաճանքի թէքէեան Միլիանոյ Կիւրճեանի հետ «Մառիկ» կը հրատարակէր, օր մը, խմբագրական ժողովի մը ընթացքին, հանդէսին մտայն աշխատակից Եր. Օտեան կը յայտարարէ.

- Տղա՛ք, գիտէ՛ք, մեր հանդէսը մե՛ծ թերութիւն մը ունի...
- Ո՞րն է այդ թերութիւնը, - կը հարցնեն միւսները:
- Աշխատակցուհի չունինք:

- Ատկէ դիւրին ինչ կայ, - կ'ըսէ թէքէեան. - կ'անէ տպագրութեան պատրաստ իր վերջին քերթուածը (կարծեմ՝ Ամառ գիշերաւառ փոքորիկ, ստորագրութիւնը կը հանէ վեր, կը վերածէ ձոնի՝ առ վաճանքի թէքէեան, ու կը ստորագրէ՝ Իսկուհի Հովեան...»

Հարկ է դիտել տալ սակայն, որ եթէ Մեծարեւոյցի մը քննարկ տալերը դիւրաւ կարելի է վերագրել մանկամարդուհի մը գրչին, չեմ կարծեր որ ունէ մէկը հաւատացած ըլլայ, թէ թէքէեանի փոթորկաշունչ այդ քերթուածը ...ուհի մը ստեղծագործութիւնն է:

«ԱՐՏԱՇԷՍ ԹԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ»

Ուրիշ աչքըրաց մը, զոր կը ճանչնամ, բայց որ չի փափաքիր յայտնուած տեսնել իր ինքնութիւնը, ժամանակին Պարսամեաններու «Մառիկ» պարբերականին բաղմամբիւ քերթուածներ ղրկելէ հտք, անոնց անխտիր բուրբին ալ զամբիւղումէն ջղայնացած, հատ մըն ալ, «Տէրվիչները» խմբագրով, կը ղրկէ Արտաշէս Թարութեանեան ստորագրուած: Խմբագրութիւնը կը փութայ հրատարակել «Տէրվիչներ»ը ամբողջ էջի մը լայնքին եւ յոյժ այլանդակ ծովանոյլի մը - չես գիտեր ինչ առընչութեամբ - նկարով ալ պատկերագրողուած: Ա. Յարութեանեան մերժեց ոտանաւորին հայրու-

թիւեր, խաղը մէջտեղ ելաւ, Հեղինակին դիտողութիւնը - գուրեմն ստորագրութիւնն է ձեզի համար կարելորդ եւ ո՛չ թէ դրութեան իրական արժէքը՝ եւ հանդէսի հրատարակիչներուն պատէպատ արդարացումները բաւական զուարճացուցին ժամանակակից գրոց-բրոցները:

«ՎԱՀԱՆ ՏԵՐԵԱՆ»

Պատմողը Մահարին է (Չարենց-Նամէ)
Սմբադրում էր տարեգիրքը:
Գործուղեց Գրական Թանգարան Տէրեանից անտիպներ ընտրելու:
Ընտրեցի, գրեցի շոքս բանաստեղծութիւն եւ Կերկայացրի Տէրեանի բանաստեղծութիւնների հետ: Կը նկատի՞:
Աչքերը շողողացին:
- Մի տես, կարծես այսօր պրած լինեն: Հարկաւոր է շարել տալ:
Այդ մասին ես չէի մտածել:
Վերցրի բանաստեղծութիւնները, ջնկեցի իմ իններն ու գրպանեցի:
- Ինչո՞ւ վերցրիր, տո՛ւր էստեղ:
- Սրանք իմն են:
Աչքերում ամեհի Հուրեր...
- Սուկիմ սիմ, ինձ ոչ ոք միտաֆիկացիայի չէր ենթարկել:
Երեք օր շխտեց հետս:

ԿԱՐՊԻՍ Ա. ԱԹՈՒՆԵԱՆ

Այս մէկուն մեղքը կը ծանրանայ իմ վզին:
Տարիներ, բաւական տարիներ տառջ, մեր քաղաքին մէջ լոյս տեսնող հայաթերթ մը, մայրերու օրուան առթիւ, դրական մրցում մը բացած էր, նիւթը՝ բնական է՝ մայրը, տրամադրած՝ մրցանակներ եւ ծանուցած «Ժուռի»-ին կազմը:
Անմեղ կատակ մը ընելու համար ժուռի անդամներէն մէկուն, որ բարեկամս էր, եւ առանց երբեք մտքէս անցնելու, թէ խաղս կրնայ յաջողիլ, հազիւ սքօղուած ստորագրութեամբ մը, ինչո՞րոյ առարկայ թերթին ղեկեցի Կարապետ Ա. Ոսկեանի իմ սերունդին հայերէնի դասազբեբէն անբաժան «Մայրական գիրկ» քաջածանօթ քերթուածին մեքենադուած մէկ օրինակը:
Եկուր տես որ, իմ շար բախտէս, ժուռին մրցանակով մը վարձատրեց Ոսկեանի քերթուածը, եւ հարկ տեսայ գրելու հետագայ նամակներէն առաջինը: Բայց իմ աւելի շար, չարաչար բախտէս, թերթին խմբագրապետը, որ միանգամայն ժուռի անդամ էր, յոյժ գայրացած, «Ասիկա պզտիկ մարդու գործ է»... «Ասիկա մեր քերթիմ դէմ դաւ մըն է»-ի նման արտայայտութիւններ թոյլ տուած ըլլալով ինքզինքին, պտրտեց համարեցի շարունակել երկնային թղթակցութիւնս...
Բոլորովին դիպուածով սկսած երկնային նամակներու այս շարքը, որ շտրտող նամակէն ետք կանգ տուաւ, կրնար աւելի երկարիլ. աղօտ կերպով ծրագրուած էին յաջորդ քանի մը նամակները. տրուելիք շահեկան

ուրիշ լուրեր կային էնդիի գէմէն. թերևս ստեղծուէր Մապլվարեան թըղ-
թակցութեան նման բան մը, եթէ...

Եթէ, դժբախտաբար, նախ շյաշունէք նանճ մը, ոսկեհեղուկ բա-
ժակ մը դարհըրը ապականոց ճանճերու ցեղէն ճանճ մը, որ տեղական
թերթուկի մը մէջ սկսու գռեհկացեալ անդրաշխարհեան նամակազրութեան
դադարաւորը:

Եթէ, աւելին, իմ իմաստուն բարեկամս Բ. Թ., հետզհետէ լոյս ըն-
ծայելով զիրո՞ թերթին մէջ «փոխանորդեալիտ» նամակները, իբրև գնա-
հատուք, զոհունակ ժպիտով մը շյաշտարէր...

Եւ ի՞նչ կ'ուզէք որ յայտարարէր այդ «յիմար»ը (կնքահայր՝ Յ. Օ-
շական):

- Նշան Պէշիկթաշլեանի ոճը որդեգրեր ես ուրեմն...

- Ո՛վ աստուածն իմ հայրերուս, ա՛ս էք պակաս. հիմակ ալ Նշան
Պէշիկթաշլեանի ազդեցութիւնը՝ երզնիական տողերուս վրայ, կարծես
բաւական չըլլար միւս «ազդեցութիւն»ը բանաստեղծութեանս վրայ. կար-
ծես ն. Պէշիկթաշլեանի մենաշնորհն էր նմանաձայն քանի մը բառ քով-քո-
վի բերելու դիտք...

Չայրացած վար դբի գրիչս, պատուեցի նոթերս ու դադրեցաւ թըղ-
թակցութիւնս



Վերջերս ձեռքս անցան վեցտասնամեայ այդ նամակները բովանդա-
կող «խունացած» կտրոնները: Ձեռ գիտեր կ'արժէ՞ր օրաթերթի մը հաւա-
քածոններուն փոշիներուն մէջէն դուրս հանել գանոնք, զիչ մը իրենց դրա-
կան ներդրակ արժէքին, զիչ մըն ալ սփիւռքահայ մեր ժամանակակից
լրագրագրական բարձրուն մասին վկայութիւն մը արձանադրող էջեր
իբրև:

Ս. Ս.

ՆԱՄԱԿ... ԵՐԿԻՆՔԷՆ

Ա.

Նրկնից Արքայութիւն, 16 Մայիս 1953

Յարգոյ հարգազուրթիւն Օրաքերթի

Ձեր բերթիմ - գոր կանոնաւորաբար կը ստանամք այստեղ - առջի
օրումն (Նշ. 14 Մայիս 1953) քիւիմ մէջ ուրախութեամբ տեսայ, որ իմ
մէկ ճերբուածս՝ «Մայրական Գիրկ», առնուած իմ «Սրտի ժամեր» նա-

տարեւ, Մայրերու Օրուան առթիւ ձեր կազմակերպած գրական մրցում-
մին... երբորդ մրցանակի արժանացեր է:

Այս ալ ի՛մ հակատագիրս է կ'երեւի. քերթուածներս հասօրի մէջ
ամփոփուէր են յետ մահու, 1911-ին, Կ. Պոլիս. գրական մրցանակի կ'ար-
ժանանամ զարձեւոյ մահէս ետք, 1953-ին:

Կը թուի, թէ կատակասէր բարեկամ մը փափաքեր է մէկ քարոյ մէ-
կէ աւելի թռչուններ գարնել, եւ, թէ՛ փորձի ենթարկելու համար ձեր
ժխտի յարգելի անդամներուն գրական հմտութիւնը, եւ թէ՛, միեւնոյն
ատեն, յայտնելու ճշտակաւ իր վերապահութիւնն ու թերահաստատու-
թիւնը գրական ընտած մրցումներուն հանդէպ ընդհանրապէս, ձեզի զըը-
կեր է վերոյիշեալ քերթուածը, թեքեւ իմն այլակերպելով անունս ու մտ-
կանունս: Անէն պարագայի, շնորհակալ եմ թէ՛ իրեն եւ թէ՛ մամուտեզ
ժխտի յարգելի անդամներուն՝ գիտակցաբար եւ անգիտակցաբար գրասէր
հանրութեան ուշադրութիւնը երաւիրած ըլլալուն համար իմ գրեթէ մտա-
թրած անունիս ու գործիս վրայ:

Ինչ որ ինձի քիչ մը գարնանք կը պատճառէ, այն է, որ ժխտի յար-
գելի անդամներէն մէկը, յամբարակեան կազմէն ուրիշի մը հետ միասնա-
բար իր երատարակած «Կեանք եւ Գիր» հանդէսին մէջ ատենիս կարն ալ-
նարկ մը նուիրած էր ինձի ու քերթուած մըն ալ արտատպած ինձմէ:

Այս տաղերը կը գրեմ ձեզի պարգապէս, արպէսզի խնդն Պր. Կարպիս
Ա. Արթուրեանը, որ գոյութիւն չունի, բանագոյութեամբ ամբաստանող-
ներ չգտնուին:

Ձերդ, երկնաւառ օրհնութիւններով,
ԿԱՐԱՊԵՏ Ա. ՈՍԿԵԱՆ

Յ. Գ. — Շնորհակալ կ'ըլլամ, եթէ իմ շահած գրական մրցանակն
հաճիք դրկել ինձի *օղակի* քղթատարով, հետեւեալ հասցէին.

Կարապետ Ա. Ռակեան,
Երկնից արձայութիւն, 7-րդ յարկ,
Բանաստեղծներու թաղամաս,
Հայոց Ափարթըման

Բ.

Երկնից Արձայութիւն, 20 Մայիս 1963

Յարգոյ հմբարութիւն Օրաթերթի

Յետ մահու իմ գրական մրցանակ ստացած ըլլալուս լուրը – իբրեւ
աննախընթաց նարութիւն – բաւական հետաքրքրութիւն ստեղծեց այստեղ:
Ա՛յ շնորհաւորոզ շնորհաւորոզի: Կարծեմ մէկ հատիկ նախանձող մը կայ,
բայց ընդհանուր գոհունակութեան մէջ այդ տուածին *ախուր ժպիտը* կը
մնայ գրեթէ աննշմարելի:

Այսպէս, Կիրակի առտու – մայիսեան ազուր օր մըն էր – երբ փո-
ղոց իջայ շրջագայելու, դէմս ելաւ մեծ բարեկամս աւ անուանակիցս՝
Պոսէթը:

- Ջերմագին շնորհաւորութիւններ, Mon cher poète, - ըսաւ երկու ձեռքերը պարզած վրաս վազելով ու անմիջապէս.

- Venez, on va fêter ça, - ըսելը ու զիս ուսերէս բռնած «Պատմաս» ննկտարատունէն ներս հրելը մէկ եղաւ:

Նստանք սեղանի մը շուրջ. ու մինչ սպասեակ-քերտվրէն մեր աղբս-պըրանքը կ'ստնէր.

- Այժմ դուք կը վճարէք իմ սուրճը, - ըսաւ *Շիբլանդադէն Վահան Թէթէհանին*, որուն հետ տասպալի կը խաղար մեզմէ քիչ անդին, ուրիշ սեղանի մը առջեւ: Թէթէհանին քէն-քերտնէն յայտնի էր, որ առաջին փառքին տարաւած էր...

Իսկ անկին մը՝ *Փօլ-Գլոսէլ* - զիտէ քէ ի'նչ դիւանագէտ է - համազարտ-հանգարտ կը ջանար համոզել *Օմար Մայեան*ը, որ կաթ-դիւրեմութիւնը ընդունի:

- Այսպէ՛ս ուրեմն, - ըսաւ Պատիւր, - չէի կրնար երեւակայել, որ ձեր ժողովուրդին գրական հետաքրքրութիւնը կը տարածուի մինչեւ յաւիտեանկանութեան սահմանները: Հիմա ինծի համոյ՛քը պիտի ընես քու քերթուածդ կարգալու եւ քարգմանելու:

Պարեգօտիս գրպանէն - հոս գրեթէ ամէնքս ալ պարեգօտ կը հագնինք. Եգիպտոսի ընկերներուն *կէլէպիէի*ն պէս բամ մըն է - հանցի ձեր քերթի 14 կալիքի քիւր, գոր մասունքի մը պէս պահած էի հոն, ու գահագում տուի իր բազմոցին:

- Բայց գէշ չէ, ce n'est pas mal du tout, - ըսաւ խմնդավառուած աշտ հաշտով իրական հրաշալիք մը պէտք է ըլլայ «առաջին մրցանակ»ը. պարեգօք չարաչար կը գործածեն քու հաճոյակատարութիւնդ, եթէ խնդրեմ որ գայն ալ...

- Բայց մե՛ծ համոյ՛քով, Վարպե՛տ, - փութացի պատասխանել ու անցայ գործի:

Երբ ընթերցումը աւարտեցի, խօսակիցս պահ մը լուռ մնաց. յետոյ ըսաւ, շրթունքները ծռնտկելով.

- Ձեմ կրնար ըսել, քէ նշանաւոր բան է իրբեւ երաժշտականութիւն. բայց քարգմանէ՛ ինծի, կը խնդրեմ:

Սկսայ քարգմանել, որքան որ քարգմանելի էր քերթուածը: Աւարտելու մօտ էի, երբ սարսփելի քահ-քահ մը փրցուց «ճաւի Մաղիկներ»ուն հեղինակը եւ նոյնքան սարսփելի հարուած մը իջեցնելով կռահիս.

- Մօ՛, չըսե՛ս, լուսազբար ենք եզեր, sacré farceur, va!

Ջարմացած՝ երեսը կը նայէի:

- Առաջին մրցանակն ալ ինծի տուեր են, - ըսաւ խնդուքին մէջ խնդրելով:

- Իրաւ որ չեմ հասկնար, Վարպե՛տ, - ըսի բալորովիմ ապշահար:

- *Բայց, cela crève les yeux, mon cher, «ի՛նչ» է աշտ քերթուածը, այսինքն՝ անոր կազապարը, որուն մէջ ձեր լաուրեստ բանաստեղծը հայերէն բառեր ու պատկերներ քափեր է. եթէ չես հաստար, ահա՛ւս պիկ՝ ու իր հնամաշ *առաջ աջ շամպուի*ն գրպանէն հանելով «ճաւի Մաղիկներ»ու փոքրադիր հրատարակութիւն մը, բացաւ 72-րդ էջը ու աչքիս տալիս դրաւ *«Ենկճերուն Մահը»* (La mort des pauvres) քերթուածը:*

Ազնի սիկին եւ յարգելի պարանայ Ժիւռիի անդամներ, եւ կարգացի խնդրոյ առարկայ քերթուածը, բայց, սարսափելով անգիտակցաբար կամ ակամայ կալմանկցութիւն մը ընելու գաղափարէն, չեմ ուզեր կարծիք յայտնել ու ձեզ նախապաշարել թեր կամ դէմ: Կը փափաքէի սակայն գիտնալ, թէ ի՞նչ կը խորհիք դուք ֆրանսացի բանաստեղծին այս անորակելի յատկանութեան մասին:

Ձերդ՝ երկնային օրհնութիւններով

Կ. Ա. Ոսկեան

(Վասն հարագատ ընդօրինակութեան)

Յ. Գ.- Տակաւին չեմ ստացած շահած մրցանակս՝ Ալլոյանեանն «Հայաստանի պատմական սահմանները»: Նայնպէս չեմ ստացած ձեր թերթի Մայիս 16-ի Շարաք օրումն թիւը եւ յաջորդ թիւերը:

Նոյն

Գ.

Երկնից Արեւայութիւն, 27 Մայիս 1953

Յարգոյ խմբագրութիւն Օրաթերթի

Ձեր թերթին Մայիս 16-ի թիւը եւ յաջորդ համարները ստացանք: Ուրեմն, մեր անծանօթ բարեկամին շնորհիւ իմ շահած մրցանակս որոշած է՛ք յատկացնել պէլլուֆարմակ պ. Գ.ին:

Առաջին անգամը չէ, որ նման անիրաւութեան մը գոն կ'երթամ ես. - Երիտասարդ էի. կը պատրաստուէի պանթա մտնելու - ա՛յ գրաւելու համար, պարզապէս իբրեւ պաշտօնետ: «Մրցութիւն» անցուցի եւ երկրորդ հանդիսացայ: Պաշտօնը, սակայն, ստացաւ ուրիշ մը. Ուսագ կարող, բայց թիկունք ունեցող մէկը: Այս անիրաւութիւնը դառնացուց իմ ամբողջ երկրաւոր կեանքս: Ձխտիեցա՞ք, թէ ձեր կարգադրութիւնը կրճար դառնացնել յաւիտենական կեանքս ալ: Կը յայտնեմ, գոնէ բարութիւնը ունեցած մրցանակ-գրքին անունը թերթին վրայ գրելու սանկ ձօն մը. «Առ Պրն. Գ. ի Պէլլուֆ, վազանեռիկ քերթող կարապետ Ոսկեանէն, յիշատակ *անմուտացութեան*»:

Մինչ ձեր թերթերը աչքէ կ'անցնէի ծանօթ ներկայարարան մէջ, մէկտեղ աւելի օտար գրչի ելքայրներ, կ'երեւի յագումն նկատելով, բռնա կամ եւ

- Ի՞նչ ունիս, - հարցացին:

Ու երբ կացութիւնը պարզեցի.

- Բայց ա՛յսքան աննեղ, ի՞նչ կ'ըսեմ, հրեշտակայի՛ն եւ գուտ գրական կատակի մը ներքեւ դու կամ դիւ տեսնելը, իրաւ որ, հոյակապ է. ի՞նչ վառ երեւակայութիւն... - բաւ անուցուէ մէկը հիացումով:

- Ասոր համար մենք Արեւմուտի մէջ աւելի բարեկիրք բառ մը ու-

մինք, - յարեց ուրիշ մը, - կ'ըսեմք mystification եւ այնքան սովորական է, որ ամէն *ժիւղի* գիտէ ասիկա, եւ սկիզբէն այժմ լաւ կը բաճայ «մաքան-նենգութեան» ստաբիլ առնելու համար: Եթէ բռնեց, կը ժպտի ու մէկ կողմ կը դնէ «ապրանք»ը. եթէ փախցուց, դարձեալ կը ժպտի, բայց ա՛յ բերանը չի բանար:

- Եւ դիտած է՞ք, - աւելցուց երրորդ մը, - որ նման անմեղունակ կատակներ աւելի զրակամ հետաքրքրութիւն կրնան ստեղծել երբեմն, քան մանուածապատ կամ պազածապար խմբագրական մը:

Եւ ի՞նչ են, ազնիւ պարոններ, սա «պարտիկ» եւայլն մակդիրները, որոնցմով կը փորձէք պատուել մեր անծանօթ բարեկամը:

Այո՛, կան «պարտիկ» թուացող, այսինքն՝ պարզ, համեստ, ցուցա-մալուքենէ չուխորժող մարդիկ: Մարդիկ ալ կան, որ մեծ...ամիս են, ա-մէն ճարի տակէն դուրս կու գան, իրենց ունեցած բոլոր տիտղոսները օրն ի քուն իրենց անունին առջեւէն կը բռնեն-կը տանին սպիտակ սագեքու պըզ-տիկ երամի մը պէս. չնզըլ-մնզըլներով բաղնիք կը մտնեն. հոգի կու տան՝ բազումրին միտն կամ նայարարի մը ջարդին հետ հանդիպում ունենալու համար, եւայլն, եւայլն:

Եւ կը խորհիմ, թէ պէտք չէ մեղադրել ո՛չ առաջինները, ո՛չ ալ վերջինները: Խտանուածքի խնդիր է, ճաշակի հարց, պարզապէս:

Վերադառնալով մրցանակի հարցին, պէտք է գիտնա՞ք, սակայն, որ զիս, եւ հետեւաբար երկնաւայուքիւնը, *Ալլոյոյանեանի* արձակէն զրկող մեր այս որոշումը մագ մնաց որ ունենար յայժ Ժանքակշիւ հետեւա՞նքներ: Ահա՛ թէ ինչպէս.

Խումբ մը տախարիներ, չկարենալով հաշտուիլ այդ գազափարին հետ, կ'որոշեն Գարբիէլը կաշառել եւ ծամ առաջ առեւանգել տալ բազ-մարդին հեղինակը, այն վստահութեամբ, թէ ի հարկէ միասին պիտի թե-րէ իր երկերուն չվանաաւուծ օրինակները: Բարեբախտաբար, աւելի ծան-րագլուխ մարդիկ դուրսի հասր կ'առնեն վերջին յայտին եւ դաւադիրներուն մօտ կը փութացնեն *Աբրահամ Ալլոյոյանէ* եւ *Բիւզանդ Քէչեանէ* քաղկա-ցած պատուիրակութիւն մը, որ կը յաջողի համոզել զանոնք, որ հաստի-րութիւն չընեն, ասեմ մը դեռ գահանամ «Մնացորդաց»ով, ու առնուածք երկու տասնեակ տարի ետ հանգիստ քաղուն մեծանուն բանասէրը, որպէս-զի ծամանակ ունենայ աւարտելու, ի միջի այլոց, Հայ Սելիվրիի, Տէվէ-լիի, Գընուլլի, Ջէննիլիի, Չարամնագի, Ջոնկուլտագի, Այսալփալփի, Գըզըլըրմափի եւ... Ունիվերսալի (բոլորն ալ հայ) պատմութիւնները:

Ի դէպ, Ալլոյոյանեան ըսի ու միտնս ինկաւ. քիչ մնաց պիտի մտնա-յին ամէնէն կարեւորը:

Երկու օր առաջ լուր բերին, թէ *Սրբիմեանը* զիս կ'ուզէ: Ելայ գացի: Հայրիկը նստած էր իր լայնշի *ժիւղի*ին վրայ, գիտութեան ծառին տակ, աջ ծունկը տնկած, ծունկին վրայ *պատուանիէ* մը բաշած ու *պատ-տանիէ*ին վրայ ալ հանգչեցուցած իր օրենքալ Ս. ազը, մի՛շտ այնպէս՝ ինչ-պէս սովորութիւն ունէր ասեմօք նստելու ելմիտծնի իր վեհարանին պար-տէզին մէջ:

Սրբ մտեցայ ու աջը առի.
- Ե՛՛՛, ա՛պուշ (*), - ըսաւ հայրական շեշտով մը, - իմացայ՝ գիր կը խաւրբս անդիի տպուշներուն:

(*) *Սրբիմեան* այս ձեւով իստ. կ'ուղղէր իր շուրջներսուն:

Գլխով հաստատական ճշան ըրի:

- Որ այդպէս... - Հայրիկ այստեղ մօրուհովը դէպի առաջ շարժում մը ըրաւ, աչ ձեռքին ցուցամատն ու միջամատը բքամատին միացուց եւ սկսաւ օդին մէջ ձախէն աչ կարն պիւքնք մը ձեւացնել:

Ըսել կ'ուզէր.- Գրէ:

Նոյնութեամբ գրի առի ինչ որ ան սուս սուս ինծի եւ մայնութեամբ ալ կը հազարդեմ ձեզի:

Անա՛ այդ պատգամը.

«հայոց հայրիկ կ'ատէ.

«Ըստ հին դիցարանութեան, Աստղիկ որպէս մածիշտ ունի երեք Շնորհ. Մշոյ գուսանն ամէն հեքիաբէ վերջ ունի երկինքէն ինկած երեք յնձոր. Վան ունի երեք տառ եւ... տառէս. հայ գրականութիւն ունի երեք Արշակ:

«Ինչո՞ւ սօսեն զԱրշակ Այսոյանն, սօսեն, կրկնատօնն, եռատօնն ու քառատօնն զԱրշակ Չօպանեան եւ մտածան կ'անն գմեր Արշակ:

«հայոց հայրիկ մտած չէ...

«Որ մինչեւ երեք ամիս սօնեցին ոչ գյուրելեան Սաֆրաստոցն Արշակայ, որ ընթեանու գրեւեազիրսն քարածայռին Վանայ, հայրիկ կ'իմեաց ինչ կ'անէ»:

- Եւ ի՞նչ կ'ընէք, Հայրի՛կ,- ըսի,- եթէ շանսն ձեր բարձր հրամանաց:

Հայրիկ յօնքերը աւելի պատեց, աչքերէն շանքեր արձակեց եւ իր միւտնաբայր շրթերէն հատիկ-հատիկ կապարի պէս ծանր ինկան հետեւեալ բառերը.

- «Կիլիկիոյ կաթողիկոսն կ'անեմ զՄիջոյն Նաթանեան»:

Ինծի այնպէս թուեցաւ, յարգելի պարուններ, թէ ասիկա չոր պատճառաւոր մը չէր: Եւ պարտականութիւնս կատարեցի: Ա՛լ դա՛հ գիտէք:

Ձերդ, երկնառաք ողբոյններով,
Կ. Ա. Ոսկեան

(Վասն հարագաս ընդօրինակութեան)

Գ.

Երկնից Արքայութիւն, ... Յունիս 1963

Յարգելի Խմբագրութիւն Օրաթերթի

Նամակս ուշացաւ, որովհետեւ, առանց մասնաւոր արտօնութեան ձեզի հետ մշակութային կապ պահած ըլլալուս համար, մէկ շաբաթով... դժոխիք զրկուած էի:

Արդէն, գրեթէ սիրտ չունէի գրելու, զի կը տեսնեմ, որ զուարթախոնութիւնը շատ ալ յարգի չէ ձեր կողմերը:

Հիմա ցատով կ'իմանամ, թէ ձեր Թերթի Ազեմադարիոյ մորտաք

նիմֆ, - յարեց ուրիշ մը, - կ'ըսեմք mystification եւ այնքան սովորական է, որ ամէն *փիւսի* գիտէ ստիկա, եւ սկիզբէն այժը լուս կը բանայ *ստիկա-ննգուքեան* առաջը առնելու համար: Եթէ բռնեց, կը ծախի ու մէկ կազմ կը դնէ «սպրանք»ը. եթէ փայտաց, դարձեալ կը ծախի, բայց ա'լ բնական չի բանար:

- Եւ դիտած է՞ք, - անկողաց երբայդ մը, - որ մտնան անմեղունակ կատակներ ասելի գրական հետաքրքրութիւն կրնան ստեղծել երբեմն, ինչն մտնածապատ կամ պարզածապար խմբագրական մը:

Եւ ի՞նչ են, ազնիւ պարոններ, սա «սպրանք»ը եւ այլն մակդիրները, որոնցմով կը փորձէ պատուել մեր անձամբ բարեկամը:

Այո՛, կան «սպրանք» բուցող, այսինքն՝ պարզ, համեստ, ցուցա-մուտքեմէ չախորժող մարդիկ: Մարդիկ այ կան, որ մեծ...ամիս են, ամէն քարի տակէն դուրս կու գան, իրենց ունեցած բոլոր տիտղոսները օրն ի բուն իրենց տնտեսի տնտեսի կը բռնեն-կը տանին սպիտակ սագերու պղզ-տիկ երամի մը պէտ. չնգըլ-մնգըլներով բազմիք կը մտնեն. հոգի կու տան՝ թագաւորին ձեռք կամ մայրաքարի մը զարդիկ հետ հանդիպում ունենալու համար, եւ այլն, եւ այլն:

Եւ կը խորհիմ, թէ պէտք չէ մեղադրել ո'չ առաջինները, ո'չ ալ վերջինները: Խառնածոքի խնդիր է, ճաշակի հարց, պարզապէս:

Վերադառնալով մրցանակի հարցին, պէտք է գիտնալ, սակայն, որ զիս, եւ հետեւաբար երկնահայութիւնը, *Ալյոյասեանի* արձակէն գրկող ձեր այս որոշումը մազ մնաց որ ունենար յայտ ծանրակշիռ հետեւանքներ: Անա՛ թէ ինչպէս.

Խումբ մը տախտիկներ, չկարծեալով հաշտուիլ այդ գաղափարին հետ, կ'արձեն Գարրիլը կաշտուիլ եւ ժամ առաջ առեւանգել սով բագ-մարդին հեղինակը, այն վստահութեամբ, թէ ի հարկէ միասին պիտի բեր-րէ իր երկերուն չվաճառուած օրինակները: Բարեբախտաբար, աւելի ծան-րագոյն մարդիկ դուրս հուր կ'տանն վերջին ըստէին եւ դաւադիրներուն մօտ կը փութացնեն *Արքայական Այվագեանէ* եւ *Բիւզանդ Քէչեանէ* բազկա-ցած պատուիրակութիւն մը, որ կը յաջողի համոզել գանձի, որ հաստի-րութիւն չընեն, ասեմ մը դեռ գոհանան Վնացորդացով, ու առնուազմ երկու տասնակ տարի եւս հանգիստ թողուն մեծամուն բանասէրը, որպէս-գի ժամանակ ունենայ աւարտելու, ի միջի այլոց, Հայ Սիլիվրիի, Տէվէ-լիի, Գրմալըի, Ջէնիբրիի, Ջարսանգի, Ջոնկուտագի, Այսալապի, Գրգըրմաքի եւ... Ունիվերսալի (բարձր ալ հայ) պատմութիւնները:

Ի շեղ, Ալյոյասեան ըսի ու միտքս ինկաւ. քիչ մնաց պիտի մտնա-լին ամէնէն կարեւորը:

Սրկու օր առաջ լուր բերին, թէ *Միլիտանը* զիս կ'ուզէ: Սլայ գացի: Հայրիկը նստած էր իր լայնշի *միլիտան* վրայ, գիտութեան ծռռիւն տակ, աջ ծունկը սնկած, ծունկին վրայ *պատմութիւն* մը քաշած ու *պատ-մութիւն* վրայ ալ հանգչեցուցած իր օրինեալ Ս. աջը, մի'շո այնպէս՝ ինչ-պէս սովորութիւն ունէր ստեղծ նստելու եզմիածնի իր վեհարանին պար-տէզին մէջ:

Սրբ մտնեցայ ու աջը առի.

- Ե՛՛՛, ա'պուշ (*), - ըստ հայրական շեշտով մը, - իմացայ՝ գիր կը յարես անդիի ապուշներուն:

(*) *Միլիտան* այս անուով խոսք կ'ուղղէր իր շուրջիններուն:

Գլխով հաստատական մշան ըրի:

- Որ այդպէս... - Հայրիկ այստեղ մտնուովը դէպի առաջ շարժում մը ըրաւ, աջ ձեռքին ցուցամատն ու միջամատը բթմատին միացուց եւ սկսաւ օդին մէջ ձախէն աջ կարն ալիքներ մը ձեւացնել:

Ըսել կ'ուզէր... Գրէ:

Նոյնութեամբ գրի առի ինչ որ ամ տուն տուաւ ինծի եւ մոյնութեամբ ալ կը հաղորդեմ ձեզի:

Անա՛ այդ պատգամը.

«հայոց հայրիկ կ'ասէ.

«Ըստ էին դիցարանութեան, Աստղիկ որպէս ծածիշտ ունի երեք Շնորհ. Մշոյ գուսանն ամէն հեքիաթէ վերջ ունի երկինքէն ինկած երեք խնձոր. Վան ունի երեք տառ եւ... տառերս. հայ գրականութիւն ունի երեք Արշակ:

«Ինչո՞ւ տօննն զԱրշակ Այսոյանեան, տօնեմ, կրկնատօնն, Յատուօնն ու քառատօնն զԱրշակ Զօրանեան եւ մտահան կ'աննն գմեր Արշակ:

«հայոց հայրիկ մեռած չէ...

«Որ մինչեւ երեք ամիս տօնեցին ոչ գլխովեան Սաֆրաստոցն Արշակայ, որ ընթեանու գրեւորագիրսն քարածայուն Վանայ, հայրիկ կ'իմանայ ինչ կ'անէ»:

- Եւ ի՞նչ կ'ընէք, Հայրիկ,- ըսի,- Եթէ չամսան ձեր բարձր հրամանաց:

Հայրիկ յօները ասելի պատուց, աչքերէն շանթեր արձակեց եւ իր միտումաբար շքեմերէն հատիկ-հատիկ կապարի պէս ծանր ինկան հետեւեալ բառերը.

- «Կիլիկիայ կաթողիկոսն կ'անեմ զՄիջոյնէն Նաթանեան»:

Ինծի այնպէս քուեցաւ, յարգելի պարոններ, թէ առիկա չոր սպառնալիք մը չէր: Ես պարտականութիւնս կատարեցի: Ա՛լ դուք գիտէք:

Ձերդ, երկնառաք ռզոյններով,

Կ. Ա. Ոսկեան

(Վանն հարազատ ընդօրինակութեան)

Գ.

Երկնից Արքայութիւն, ... Յունիս 1953

Յարգույ հմբագրութիւն Օրաթերթի

Նամակս ուշացաւ, որովհետեւ, առանց մտամտար արտօնութեան ձեզի հետ մշակութային կապ պահած ըլլալուս համար, մէկ շաբաթով... դժտիք որկուած էի:

Արդէն, գրեթէ սիրտ չունէի գրելու, զի կը տեսնեմ, որ զուարթախոհութիւնը շատ ալ յարգի չէ ձեր կողմերը:

Հիմա ցառով կ'իմանամ, թէ ձեր թերթի Ազեւամագրիոյ մտաբաց

մասնանիւղին մէջ, ձեր աշխատակիցներէն մէկը, ակնարկելով իմ քղթակ-
ցութիւններուս, *խաբէութեան* եւ այլն խօսքեր ըրեր է:

Պարտք կը զգամ վստահեցնել ձեզ, քէ այն բոլոր տեղեկութիւննե-
րը, զորս ցարդ պատիւը ունեցայ հազարդելու ձեզի քիչ մը ծուռիկ-մուռիկ
նամբաներով, նշարտութիւն են եւ իրականութիւն միայն, եւ երեսակա-
յութեան մասնիկ մը իսկ գոյութիւն չունի անոնց մէջ:

Միակ կէտը, որուն մասին քերտու իրատունք ունենալ տարակուսե-
լու, *խաբէութիւնն է, սո՛ւտ է* յայտարարելու, ան ալ ձեր երբեմնի խմբա-
գրաստիւն՝ վառան Թէֆէնանի ներկայութիւնն է այստեղ, Արքայութեան
մէջ:

Եւ սակայն, եթէ օր մը - հեռուո՞ր օր մը - բարեբախտութիւնը ու-
նենալ դո՛ւք ալ շնորհ բերելու մեր կողմերը, ձեր աչքերով պիտի տեսնէք,
քէ ան իրօք այստեղ է:

Թէ ի՛նչպէս Թէֆէնան ազատեցաւ «յաւերժանոր դժոխքին խոցում-
ներէն, բացերէն», որոնց դատապարտուած էր առջի օրէն՝ բանաստեղծ
Ժագ Ս. Յակոբեանի ցուցումներով («Մարդ մը Մեռաւ», էջ 38), անա՛ւ ա-
տար պատմութիւնը: Տեղին է յարեիլ, քէ ասանկ առիթով մըն է, որ պը-
տասանուած պիտի ըլլայ, եիմա չեմ յիշեր որո՞ւ կողմէ, սա նշանաւոր
խօսքը. «Աստուած իմ, ես քշեամիներս կը ճանչնամ. բարեկամներէ՛ս
փրկէ դուն զիս»:

Թէֆէնան, ուրեմն, դեռ դժոխքին դռնէն ներս չմտած, կը սկսի աս-
տանութիւններ - դուք պիտի բռնէք «անհամ կատակներ», «խաբէութիւն-
ներ», «զեղծարարութիւններ» եւ այլն - ընել:

Այսպէս՝ ծերունի կարճատեւ դճնապան - սատանային տաճարին մէջ
անուրը արձանագրել կու տայ - իսկուհի Հովեան (*): Կ'առաջնորդեն զնե-
քը կանոնց բաժինը: Չ'ախորժիլը, մամուռնդ որ հոն կը գտնէ իր նախկին
տանտիրուհիներէն մէկ-երկուքը: Ատեն մը յետոյ, հանրու բազմութեան
մէջտեղը կանգնած *կուկուլիկու* կանչող ախաղաղի մը նման, հրաբորբոք
բու՛մբի մը վրայ կը բարձրանայ ու .

- Ես տգամարդ ե՛մ,- կը պոռայ:
- Անո՞ւնդ:
- Պո՛ւմ...

Կ'իմանան՝ Պու՛մ: Կը տանին հրէական գեեեն: Կը նայի շուրջը՝ հա-
րիւր հազար լիւի եւ Գոռէն: Լեռն Անէմեանն ալ հոն է - ձեր քերթի եր-
բեմնի ինքնակալներէն: - Ամէն մարդ բան մը կ'առնէ կը ծախէ: Լե-
ւան Անէմեանն ալ «Փունջ»ի հին թիւեր ու հեղինակի իրատունք կը ծախէ:
Կատարեալ *marché aux puces*:

- Լեւո՛ն,- կ'ըսէ,- այրած կտուտի իւղին հետը վնաս է իմ քա-
հերուս. հիմա հագս պիտի բռնէ. Ելի՛ր անցնիմք հայկական դժոխք:

- Ես այս *սթոք*ը չսպառած՝ Հայաստան *պիլէ* չեմ երբար,- կը պա-
տասխանէ Անէմեան,- եթէ դուն կ'առաջարկես, գնա՛: Ես ետէն միջոցը կը
գտնեմ ինքզինքս առկէ դուրս նետելու...:

Թէֆէնան կը կանգնի հնավաճառներէ կազմուած շրջանակի մը կեդ-
րոնը եւ շուրջի վաճառատներուն խլացուցիչ ազմուկին մէջ ինքզինքը լը-

(*) *Վազան Թէֆէնանի ծանկանաւորներն:*

սելի ընկելու համար իր յոգնած քոֆերում բոլոր ուժովը կ'ապագակէ, ինչ-պէս իր գծրախտ բարեկամը՝ Արփիարեան, իր վերջին վայրկեանին.

- Հա՛յ եմ:

Կը տանին զինքը հայկական դժոխք: Այս ո՛րքան ծանօթ...

Թէ՛է՛հեան հո՛ն ալ սատանութիւններ կ'ընէ (թէ ի՛նչ սատանութիւններ, ասիկա չեմ ուզեր ըսել, բայց, եթէ ուշադրութեամբ հետեւիք հետազայ տողերուն, կը հասկնաք): Կարն՝ ա՛յն աստիճան եւ յամառօրէն դժգոհ կը քաղու իր շրջապատը, որ օր մըն ալ բազմահարիւր ստորագրութիւններով պոչաւորուած հանրագրութիւն մը կը ներկայացնեն Սանդա-բապետիւն, Թէ՛է՛հեանի՝ դժոխքէն արտախումբը պահանջող:

Սաքայել տեղի կու տայ եւ նայն օրը, երեկոյին, «Հրաշալի Յարու-թեան» հեղինակը ինքզինք կը գտնէ դժոխքի պարիսպներուն դուրսի կողմը: Եւ որպէսզի ա՛յ մէկ դուռ չբախտ, աչ իսկ արժայութեան դուռը, երկար ստեղ կը քափառի ու ման լանդին մէջ:

Աստու մըն ալ տեսնէ, որ, ճերքակալուած տեսնանապահ ֆերով-բէնքու շրջուն պահակագունդի մը կողմէ, իբրեւ կասկածելի կամ լրտես, ան բերուեցաւ արժայութեան արտաքին պահականոցը:

- Ձեր քուզքերը, - պահանջեց հրեշտակապետ սպան:

Թէ՛է՛հեան հանդարտօրէն ծոցէն հանեց «Եկեղեցին Հայկական»ը, աչ կողմի գրպանէն՝ «Աստուածներգութիւն» շարքի ֆերքուածներուն տրցակը «Եւ ա՛հա հունձքն երկու սփիւ մէջ պարփակ...»

ու լոկիկ երկարեց երկնաւոր պաշտօնատարին:

Հրեշտակապետը, հագիւ աղնարկ մը նետած այդ քուզքերուն վը-րայ, յարգամքով ռոֆի ելաւ, աքոռ առաջարկեց նորեկին, ու քուզքերը տեղաւորելով հետստեղծի գործիքին մէջ, քարճագոյն իշխանութեան հրահանգին սպասեց:

Հրամանը չուշացաւ.

- Քոքայէ դուրս, առանց անցագրի, վիզայի կամ այլ ճեւղերպու-թեան, ընդունիլ բանաստեղծը արժայութեանէն ներս իբրեւ պատուոյ քաղա-քացի եւ տալ իրեն մշտատու ընկույթեան իրաւունք:

Գունապան հրեշտակները, իրենք ալ քիչ մը զարմացած այս մերկա-պարանոց կողմնակցութեան ի տես, կոնակի վրայ բացին դարպասին մայր դուռը նոր քաղաքացիին առջեւ եւ այդ յիշատակելի օրէն ի վեր մեզի բը-նակակից է վախան Թէ՛է՛հեան:

Այստեղ աչ ոք դժգոհ է իրմէ - քանի որ հոս չկան ա՛յ խնկարկութիւն պահանջող ազգային բարեբարներ, ո՛չ քաղաքամբ մուրացող սկսնակ գը-րողներ, եւ աչ ալ ուրիշ մանրութիւններ...

Ինքն ալ գոհ կը քուի, քէն երբեմն աննշան միջուկով մը պատճառ կ'ըլլայ, որ ան առիթը գտնէ չափելու իր ամենամտերիւմ բարեկամներն իսկ:

Ահա՛ անանցմէ ամենավերջինը.

Անցեալ օր, առտու կանուխ, անուվոր իրարանցում մը կը տիրէր մեր քաղաքսին մէջ: Անծանօթներ - կամ անծանօթ մը - գիշերանց գաղ-տագողի մտեր էին մէկէ աւելի սրբուհիներու ննջասենակները, եւ...

Ոմանք Նար Պէլին կողմը նայիլ սկսան: Կային ալ, որ Օշականի ա-նունը կը փափայտին:

Ոստիկանական ճննութիւնէն յայտնի եղաւ սակայն, որ սրբուհիներուն գորդասեպաններուն վրայէն անհետացեր էին *օ աբ թորոնէի* բոլոր շիշերը... միայն: Ուրիշ կտորած քափած բան չկար: Ու, կէտորուան մօտ, շիշերը, բոլորովին դատարկուած վիճակի մէջ, գտնուեցան Նրուանդ Օտեանի մահնակալին տակէն:

— Այս ի՞նչ անկենցազագիտութիւն է ... ի՞նչ պիտի ընէիր սա *զը-խըմները*, սրտմտեցաւ թէ՛՛էեան:

— Ալճալը ի՞նչ կ'ընեն... դիմադարձեց Օտեան, գրեթէ ննջացած, որ զինքը չի՞ն հասկնար...

Օրինագանցութիւնը բաւական ծանրակշիռ էր, բայց սրբուհիները իրենք իսկ, քէեւ քիչ մը յուսախար, երբ տեսան Օտեանի հայկական քիթն ու հայրական բարի մայրածէր, խնորեցին ռստիկանապետէն, որ յանդիմանութիւն իսկ չկրէ յանցագործը:

Եւ կարծեմ անո՞նց ալ բարեխօսութեամբ է, որ, այդ օրէն ի վեր, կրկնապատկուեցաւ «Փանջունի»ի հեղինակին զբոս կենաց»ի բաժինը:

Օտեան, բնականաբար, գոհ է այս կարգադրութիւնէ: Եւ իբ գոհու-նակութիւնը գոհունակութիւն կը պատճառէ բոլորքին, բոլորին: Ա՛յնքան սիրուած է ան հոս համայն երկնահայութեան իր ... գաւորթալտեութեան համար:

Ձերդ երկնառաք ողջոյններով

Կ. Ա. Ոսկեան

(Վասն հարագատ ընդօրինակութեան)



ՅԱԿՈՐ ՓԱՓԱՋԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՃԱՌԱՆԻՇ...

Փարիզը կը սկսի էյֆելի աշտարակով:

Հոնտոնը կը սկսի Պիկ Պէնի ժամացոյցով:

Պուրճ Համուտը կը սկսի իր կօշկակարներով:

Կօշկակարները կ'ըսեն, թէ իրենք երկրաշփոխներ են մորթի եւ կաշիի: Աստիճանական կարգով կօշկակարները կ'ըսեն, թէ իրենք զեղագործներէն մէկ աստիճան վեր եւ բժիշկներէն մէկ աստիճան վար են: Կարգ մը կօշկակարներ ալ կ'ըսեն, թէ իրենք բժիշկներէն ալ բարձր են, բայց նկատելով որ օր մը պիտի հիւանդանան, շատ կը յարգեն բժիշկները...

Պուրճ Համուտի մէջ կօշկակար կը նշանակէ պատերու վրայ փակցուած մերկ նկարներով խանդավառ բանուոր, ազնիւներուն խօսք նետող մարդ:

Պուրճ Համուտի շիրքաւ հասկնալ որ կօշկակար կը նշանակէ կօշիկ շինող:

Պուրճ Համուտի կօշկակարներն ալ սպաննացին բուլիկ ձգել նրբասրունք օրերդները, որպէսզի հասկնան կօշկակար բառին իմաստը:

Մենք կը կարծենք, թէ օր մը աղջիկները բուլիկ պիտի քալեն, հսկասակ կօշկակարներու թախանձանքին:



Կօշկակարը հպարտ է իր արհեստով, հպարտ է նաեւ պատերուն վրայ փակցուած պատկերներով: Անոնցմէ կ'առնէ իր

ներշնչումը՝ պատրաստելու համար նուրբ ու զեղեցիկ կօշիկներ:

Պուրճ Համուտի աղջիկ մը որչա՛փ հպարտ պիտի զգար ինքզինքը, եթէ Համբարձն նուրբ ու կոնկուած փոքրիկ պարոն մը խօսք նետէր իրեն: Բայց միշտ նուաստացած կը զգայ ինքզինք, եթէ այդ պարոնը ըլլայ Պուրճ Համուտի կօշկակար մը: Բայց սիրոյ պատմութիւնը կ'ըսէ...

Սօսք նետելու իրաւունքը բոլոր մարդոց է, իսկ այդ խօսքը ստանալու իրաւունքը բոլոր աղջիկներուն: Հետեւաբար Պուրճ Համուտի կօշկակարը ամենաշատ իրաւունք ունի Պուրճ Համուտի աղջկան խօսք նետելու:

Կօշկակարին դուրսը հայկական հիւանդանոցի պէտք ունի: Ականջը խուլ է, որովհետեւ թրքերէն երգեր մտիկ կ'ընէ: Բերանը ծուռ է եւ անմաքուր, որովհետեւ թրքերէն կը խօսի: Աչքերը կոյր են, որովհետեւ թրքերէն ֆիլմեր կը դեմտէ:

Ամէն կօշկակար սիրահար է Փուֆպուլի կամ օղիի:

Յաճախ երկուքին...

Ճութպուլի դաշտին մէջ իրմէ շատ պոռացող շկայ, զինուան մէջ իրմէ շատ խմող շկայ:

Եթէ պատահի որ կօշկակարին ծօռ դպրոցական մը մտնէ, կը դադրի ուսանող ըլլալէ, որովհետեւ կօշկակարին համար աշխարհի վրայ մէկ ուսումնարան կայ՝ իր աշխատանոցը:

Կօշկակարը արուեստագէտ է կօշկակի, բայց մանաւանդ արուեստագէտ է հայհոյանքի, իր հայհոյանքներուն մէջ կինը ներկայ է միշտ:

Ատուածաշունչը կ'ըսէ, թէ հայհոյանքը մեղք է:

Կօշկակարները կ'ըսեն, թէ հայհոյանքը զովացուցիչ մըն է սքանչելի, եւ հանգարտեցուցիչ մը անփոխարինելի: Կը յիշեմ կօշկակար մը, որ ամէն հայհոյանքէ ետք, սրտի մեծ գոհունակութեամբ օ՛ր կը քաշէր, կարծէք սաք օրին ստո ջուր խմած ըլլար:

Բարեկամ մը կ'այցելէ բժիշկի մը: Բժիշկը կը քննէ եւ վայն առողջ կը զտնէ: Կը քննէ ուղեղը ու կը տեսնէ որ մարզոցմէ դժգոհ է: Դեզի ածան զեղազիր մը գրեմ կ'ըսէ, ու կը գրէ՝

«Եթէ հայհոյել գիտես, հայհոյէ՛, եթէ չես դիտեր, շարսթ մը Պուրճ համուտցի կօշկակարի մօտ աչկերս եղիր»:

Կիտուրթի՛նը պաշտես ածան զեղազիր դրող բժիշկներուն:

Տղան շարսթ մը աշխատեցաւ Պուրճ համուտցի կօշկակարի մը մօտ եւ շատ արագ տպաքննեցաւ: Դարձաւ մոլիին հանդարտեցուցիչներու:

Տ՞

Կօշկակարը վատ, շար, բարի, համեստ, կոշտ ու անտաշ մարդ է:

Բայց կօշկակարը հայ է, հայ է կօշկակարի ոճով: Կօշկակարը հայոց պատմութիւնը չի վիտեր, բայց շատ լաւ կը ճանչնայ միջնադարին համբաւ շահած իւրաքանչիւր հայ արուեստագէտին նըւաճումները:

Կօշկակարը մեծ է, որովհետեւ ձեռքին մէջ մուրճ եւ աքցան ունի եւ անուէլ՝ Պուրճ համուտցի է:

Տ՞

Կոթ'ւ: Կոթ'ւ Պուրճ համուտցի համար տարբեր սահմանում ունի: Ուրիշ տեղեր կը ուրիշ թերեւս տեղի ունենայ երկու մարդոց կամ երկու կիներու միջեւ, բայց Պուրճ համուտցի մէջ ամբողջ ընտանեկի

մը անդամները կը կոռւին ուրիշի մը դէմ, կամ թաղի մը մէկ մասը քանի մը ընտանեկներէ կազմուած թաղի մը ուրիշ մէկ մասին դէմ: Կոթ'ւը կ'ըլլայ հըրապարակային, որպէսզի ամէն Պուրճ համուտցի կարելիութիւն ունենայ վիճելու եւ դատելու: Կոթ'ւին տեւողութիւնը ժամեր, անոր արդիւնք քէնիքը տարիներ կը տեսնեն: Կոթ'ւին պատճառը ինքնին անչառն է, փոքրիկներէն կ'անցնի ծնողներուն, ծնողներէն՝ թաղամասերուն: Կոթ'ւ մեր Պուրճ համուտցի համար կը նշանակէ տեղւոյն վրայ ծեծել, ծեծուիլ, վիճարանիլ եւ եթէ կարելիութիւն կայ՝ հաշտուիլ:

Պուրճ համուտցի գլխաւոր փողոցը Աւեսն է, որովհետեւ հոն է Պուրճ համուտցի «գայլիմներ» կեդրոնը:

Եթէ երկու գայլիմներ՝ կուրին՝ հապուտ կը պատեն: Եթէ երեք գայլիմներ՝ կուրին՝ գլուխ կը պատեն: Եթէ երեքէն աւելի գայլիմներ՝ կուրին՝ ըստ լորն ալ հիւանդոց կը փոխադրուին: Ամէն Պուրճ համուտցի, բանուոր, աշակերտ, համալսարանական, կին, պատու, երիտասարդ արդէն կէս մը գայլիմ է: Քիչ մը ծեծելով, ծեծուելով կը կոփուի ու կը դառնայ գայլիմ կատարեալ:

«Գայլիմ»ը Պուրճ համուտցի ամբողջ շացուցիչ տարրն է: Առանց «գայլիմ»ի Պուրճ համուտցի կարելի չէ երեւակայել:

Տ՞

Վատ, շար, անպիտան, պիղծ, փախուկ, անբարոյական, յիմար, անկուտի, նեխած, փնացած բառերուն հոմանիշն է Պուրճ համուտցի շօֆէրը:

Տ՞

Ժամանակին հայրս կ'ըսէր, թէ Պուրճ համուտցի մէջ մէկ մարդ տասը կին կ'արժէ: Չհաւատացի, մանուկ էի... Բայց յետոյ հաստատեցի, թէ հայրս փորձառութեամբ կը խօսի եղեր:

Անցաւ օր, հօրս ըսի որ մարդը անպիտ է եւ կիները չափանիշ չեն կրնար ըլլալ անոր: Հայրս լիաթոք խնդարով ըսաւ:

- Տղար դուն է ես չափաւորական էի:

Պուրճ Համուտի մէջ ամէն բան յառաջդիմութեան մէջ է՝ դպրոց, թատրոն, արհեստ, արուեստ, շինարարութիւն, հւայն: Բայց Պուրճ Համուտի մէջ ամէնէն յառաջդիմ արուեստը բաժնաւորութիւնն է, որովհետեւ հոն մեծ թիւ մը կը ներկայացնեն այդ մարդին յառաջդիմութեան նախազայմանը համարուող կիները:

Պուրճ Համուտի մէջ կին մը իր հարեանուհիին այցելութիւն կու տայ միայն ու միայն երկու խօսք խօսելու, բայց...

Պուրճ Համուտի մէջ կին մը ոչ ոքէ կը վախնայ, ոչ իսկ ամուսինէն, ընդհանրապէս, երբեմն ամուսինը կը վախնայ իրմէ: Անոնք կը սարսափին միայն իրենց զործակիցներէն...

Պուրճ Համուտի աղջիկները ամէն արարածի սէս ունին ոտքեր, ձեռքեր, աչքեր, քիթ, բերան, մտքեր, յօնքեր, բայց իրենց կը պակսի այն՝ ինչ որ կը պակսի բոլոր աղջիկներուն...

Ժամանակին Պուրճ Համուտի երիտասարդներուն կը պակսէր այն՝ ինչ որ չէր պակսեր աղջիկներուն՝ երկար մազեր... Հիմա Պուրճ Համուտի երիտասարդութեան կը պակսի այն՝ ինչ որ կը պակսի բոլոր աղջիկներուն...

Պուրճ Համուտիցի՞ն...

Պուրճ Համուտիցին խիստ զգայուն է: Եթէ կ'ուզես Պուրճ Համուտիցիին համարութիւնը շահիլ, քնքրութեամբ ըսէ անոր, թէ ինք Պուրճ Համուտիցի է: Եթէ կ'ուզես զայրացնել զայն, արհամարհանքով ըսէ իրեն, թէ ինք Պուրճ Համուտիցի է:

Եթէ հայը աշխարհի անջնե կը հըպարտանայ «մեզ հայ են ասում» ըսելով, Պուրճ Համուտիցին իր քաղաքի մեծ թաղամասերուն մէջ բնակողներուն առջեւ կը հպարտանայ իրեն Պուրճ Համուտիցի կ'ըսեն ըսելով:

Ամէն մարդ կը վախնայ Պուրճ Համուտիցիին, որովհետեւ ան կուտարար է:

Իրապէ՛ս: Փայտի գործածութիւնը մեղի համար դարձած է դիտութիւն, մեր փայտը յարզի է, անոր համար, որ կըտարուկ է եւ ազդու, զայն կը գործածենք ուր որ անկ է:

Եթէ մէկը փորձէ Պուրճ Համուտը տրհամարհել «Պայիմ»ին առջեւ, Պուրճ Համուտիցի «Պայիմ»ը լաւ դիտէ, թէ ինքն է շահած Պուրճ Համուտի դէշ անունը եւ որպէս պատասխանատու բռունցքը պիտի ծօծէ ու դիմացինը ճօճուի օդին մէջ: Պուրճ Համուտիցի «Պայիմ»ը միջին ճամբայ չի ճանչնար, երբ ան զայրանայ ամբողջ թաղը կ'ալիկածի:

Պուրճ Համուտիցին դժուար հասկնալի մարդ է, զայն հասկնալու համար սպրեւու է Պուրճ Համուտի մէջ, եւ մասնակցելու է անոր քէֆերուն, ցաւերուն, կոխներուն, տառնապններուն:

Մեր դրացի ծերուկ Մկրտիչ համար ամբողջ աշխարհի մայրաքաղաքը Պուրճ Համուտն է: Բայց Պուրճ Համուտը արտասահմանի մայրաքաղաքն է, որովհետեւ հոն կը դռնենք հայու իսկական նըկարադիրը: Հոն է միամիտ հայը, վաճառականը, խորամանկը, շարք, բարին, ազգասէրը, ազգատեսցը, տղէտը, զարգացածը, շարյին:

Պուրճ Համուտի մէջ ամէն մարդ ղերասան է, որովհետեւ թատրոնէ չի հասկընար. քաղաքապետ է, որովհետեւ քաղաքականութենէ չի հասկնար, հայ է, որովհետեւ հայ ըլլալ չի՛ գիտեր:

Պուրճ Համուտի մէջ ուսանողներ, մտաւորականներ, բանուորներ չկան, Պուրճ Համուտի մէջ միայն Պուրճ Համուտիցիներ կան: Պուրճ Համուտի մէջ մարդը իր ունեցած վկայակոսով կամ արհեստով շարժելու էր, այլ կ'արժեւորուի իր ունեցած ՊուրճՀամուտական ուղիով:

Պուրճ Համուտիցիին հոգին ջերմ, մտերմիկ, ընկերային, հիւրասէր, տէրովի է...

Պուրճ Համուտ հայկական վաճառանի է:

Յ. Փ.

ԵՐԿԻՐ ՀԱՅՐԵՆԻ

Երկիրս կենտրոնն է եղել մարդկութեան,
Ի՞նչ հսկաներ է ծնել ու սնել
Երկիրն իմ չքնաղ,
Հայկի, Արամի հզօր շնչի տակ,
Սուրբ ազատութեան աստղի տակ լուսեղ
Փայլել է յաւէտ:

Օ՛ր, Արտաշէտներ ու Տրդատներ է
Սնել իր ծագում,
Քաջարար կռուող մեր նախնիների
Արիւնն է ցողուել իմ երկրի հողին,
Ու հողն այդ լուսեղ, դարձել է բերրի
Դիցագոյններ ծնել:

Իր փառքի ճամբին, աշխատել է նա,
Ջարդել մոռութիւն իր ստիսերի,
Արիւնստ մարտի գուռ դաշտերի մէջ,
Վարդանաներն են իմ երկիրը փրկել:
Ու մեռնելուց ետ, մի փառքով անմար
Յախտեան արքուն մեր սրտերի մէջ
Ապրել են, փայլել, ու լուսաւորել
Երկիրն իմ շքեղ:

Երկիրս նայիրեան աղջիկն է եղել
Հեզանազ կազմով ու տեսքով իր վեհ,
Եռագոյն գգեսուն իր վրայ փռել,
Ու խայտել է նա, նա ծածանուել է
Նրա տեսքովն վէտ:

Երկիրս կենտրոնն է եղել մարդկութեան,
Ու մահառողը բարբարոսների, վիշապների դէմ,
Երկիրս լոյս աչքն է մեր վեհ հայութեան
Գիրկ գործագութ՝ որդիների դէմ:

Այս վեհութեան դէմ, ո՞վ ենք ես ու դու
Եղբայր իմ ազնիւ,
Կարող ենք մի օր մենք էլ ասող դառնալ
Երբ ծանրութիւնը քիտա շղթաների,
Կը բառնանք կրծքից ազնիւ ազգութեան,
Ուր հուր աչքերով ծնունն հուրիներ,
Եւ վիշապաժող վահագներ Ոտրէն:
Որ նորից փայլենք երկնի աստղի պէս
Ազատութեան մէջ,
Եւ անտէրութեան ու գերութեանն այս
Տրուի յաւէտ վերջ:

ԹԻՄԱ ԳԱՌՕՆԷ



Երևանի համայնապատկերը

4. ԱԱՍՈՒՆԻ

ԼԻՆԵԼՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Երբ ֆարերը կը խօսին, հազար-հազար տարիներ կամուրջ կը կապեն հին օրերու անցքերու վրայէն, հասնելու մեր օրերուն, մեր դարուն, որ արդէն սափը գետնէն կտրած՝ աչքը յառած է երկնքի մայրակներուն:

Որքա՞ն հազարամեակներ կան թաղուած հողին ու ֆարին տակ, գերեզմանային լուսեամբ, առանց *Յարութեան խորհուրդի*:

Ու ահա, Երևանը, հին էրերունին: Կտրած, մաշած ֆարերու եւ ժայռերու ընդմէջէն Ջանգուի զնգուն ձայնով իր երգը կ'երգէ, ըսելու համար, թէ՛

Գիտցէ՛ք, որ դեռ կենդանի եմ...

Լինելութեան անհուն ու անպատմելի խորհուրդ մը, վերայբերու գարնանային անկարագրելի մթնոլորտ մը կը սառանի Արագածի եւ Մասիսի գմբէթներուն տակ...

Լինելու թիւն հայոց ու հայ աշխարհին: Խորհուրդը կը սաւառնի դարերու երբեմն սյայծառ, երբեմն փոթորկալի, ու շատ յաճախ մթաստուեր հորիզոններուն վրայ:

Ապրում, զգացում, դատում իրար կը հրմշտկեն, հազար տարիներու փոթորկումով, հորիզոն-հորիզոն, հին, շատ հին օրերէն ալիք առած, 2750 տարի առաջ, ու *այսօր...*

Կա՛յ հայ ժողովուրդը, կա՛յ հայոց աշխարհը:

Հագարամեակներու այս վերջիշումը այսօր ամբողջ ազգին մնացորդացը յուզումի, խոր ապրումի եւ հպարտանքի մը-զած է:

Անմահութեան գիտակցութիւնը այսօր զգացումի անհուն համերգի մը պէս կը հնչէ հայ մարդոց սրտերուն մէջ:

Ու պաղարին դատում մը՝ մեր անցած դարաւոր ճամբաներուն, ս՛րբան տխուր, նոյնքան հաւատարմ մտածումներով կ՛ողողէ վերապրող ու վերածնող հայ մարդու հոգին:

Ինչո՞ւ այսքան խորհուրդ խորին, ու այսքան համազգային ապրում:

Միայն հայը կը գիտակցի եւ կը զգայ տարիներու ծանրութիւնը եւ իր աշխարհն ու մտածումին կը պատկերաստիտիւն փոթորկալոյ տեսարանները անցեալ դարերուն, ա՛յն չափով, որչափով ուրիշ ազգ մը չենք տեսներ պատմութեան բեմին վրայ:

Ազգերուն մէջ միակն է, այնքան արիւնքանքով, այնքան հաւատարմ, այնքան յամառօրէն վերածնուող, որ Երեսնի 2750-ամեակը կ՛ապրի քառ քառ, քալլ առ քալլ՝ 2750 տարիներուն երկայնքին...

Այս օրուն ծաղկած Երեսնը միակն է թերեւս աշխարհի մէջ, որ 2750 տարիներէ ետք, դեռ կանգուն է: Ունակոյն ու ճգմուած, զաւառական քաղաք մը, վաթսուն տարի առաջ 30,000 բնակիչներով, այսօր 700,000 հայերով առկուն:

Վերածնունդի այս ռաթաթիւնը կը մղէ ամբողջ հայութիւնը իր յետադարձ ակնարկը նետելու դէպի Դուին, դէպի Անի, ու Վաղարշապատ, Աշտիշատ ու Վան, Վանանդ ու Կարին, որոնք տնջացող աւերակներ են, քայց որ ամէն օր կը խօսին հայութեան սրտին:

Այս համեմատական պատկերին առօրէ՛ ամբողջ հայութիւնը, Հայաստանի եւ սփիւռքի տարածքին, գիտակցօրէն կամ բնազդաբար կ՛ապրի իր *սրբանալի մահացումը*, ու ապա, Սասունցի Դուիքին պէս կը ծառանայ Սարգսրապատի դաշտին մէջ, թուր կեծակի վնասկան հարուածով *կը վերականգնէ պետութիւնն հայոց, ազատ ու անկախ*, իրբեւ մեծագործութիւնը մեր դարու հայուն, որ գիտցաւ մահը ոտնակոխել եւ իր անմահութիւնը դրօշազարդել:

Ու ապա, յիսուն տարի անց, այսօր, *ծաղկած Երեսն, սիրուն Երեսնը*, էրեքունիի աւերակներուն վրայ: Սրտառուչ մխիթարանք՝ հարիւրաւոր մեծախարքամ ոստաններու աւերակներու կողքին:

Երբ վարագոյրը կ՛իջեցնենք 2700 տարիներու անցեալին վրայ, ու միայն վերջին յիսուն տարիներու փոթորկալոյ պատ-

կերին առջեւ խորհուրդի կը նստինք. հրաշափառ Յարութեան իրականութիւնը կ'առնինք մեզ:

Հայ ժողովուրդը միակամ, մէկ մարդու պէս, խորունկ վիշտով ու անմոռանալի սուգով Ապրիլեան Եղեռնի մէկուկէս միլիոն նահատակներուն յիշատակը սրբացուց Հայաստանի եւ Սփիւռքի մէջ: Յուշարձանը որ կը բարձրանայ Երեւանի կողմին, հայրենիքի դարաւոր հողին վրայ, հոգեղէն արձան մըն է ի սփիւռս աշխարհի ցրուած հայութեան սրտին մէջ:

Ու ապա, խաչելութենէն քանի մը տարի անց, Հրաշալի Յարութիւնը ազգին, որ աննման կորովն ունեցաւ հեռուակամ խոյանքներով փրկել մնացորդ հայութիւնը բնաջնջումէ եւ վերակերտեց Ազատ ու Անկախ հայկական պետութիւնը, եօթը դարերու ստրկութիւնը ապրելէն ետքը: Հայ ժողովուրդը, անցած յիսուն տարիներու ընթացքին, ապրեցաւ իր դիւցազնամարտը, եւ հայկական պետութեան գոյութիւնը զգաց տառապանքներով:

Ու ահա, այսօր, Սարգարապատի Յուշարձանի գանգերը կը հնչեն, Հայկական յաղթանակի լուրը աւետելու: Հայկի առաջին վիճակարին վրայ հայ պետութեան վերջին հիմնաքարն է որ կը բարձրանայ, գալիք դարերուն հայ ժողովուրդի լինելութիւնը զանգահարելու: Այս ձայնը հայուն սրտէն բխած զօղանջն է, որ սիրտէ-սիրտ կ'արձագանգէ անընդհատ:

Արեան եւ անթաղ ոսկորներուն վրայ կերտուած հայրենիք, յիսուն տարիներու աշխատանք հայ բազուկներու, յիսուն տարիներու մտատանջութիւն եւ ետեղծագործական կորով: Ապրելու եւ տեսելու անսահման բազմամեքեր իրարու վրայ պիտի թեղ կապէին, սրպէսզի Երեւանը ծաղկէր, մեծ ոստաններու կորուստը մոռցնել տար, ու դառնար մխիթարանքը ամբողջ հայութեան:

Այս վերջին յիսուն տարին, իր երեք յուշարձաններով ու տօնակատարութեամբ հայ ժողովուրդի *Լինելութեան* անկիւնաքարն է:

Ու մենք այժմ հանգիստ սրտով այդ յիսուն տարին կ'աւելցնենք 2700 տարիներուն վրայ ու կ'ունենանք Երեւանին... 2750 տարեկան էրբունին:

Ի՞նչ փոյթ, թէ կուսակցական տարակարծութիւններ ունինք:

Ի՞նչ փոյթ, թէ հայ հոսանքները իրարու հանդէպ տեղի եւ անտեղի արտայայտութիւններ պիտի ունենան:

Ապրիլեան նահատակներու Յուշարձանը, Սարգարապատի գանգերը եւ ծաղկուն Երեւանը իրար գրկած պիտի մնան, եւ պայծառ հայեացքով պիտի նային գալիք դարերու շողջողուն արշալոյսներուն:

Կ. Ս.

ՎԱՆԵՐԻ ԳՐՈՍՄԱՆ

ԲԱՐԻՆ ԸՆԴ ՁԵԶ

(ՀԱՏՈՒԱԾՆԵՐ)

Ուշքանայք զբոլ Վաների Գրոսման, 1961ին, Թարգմանչական աշխատանքի մը շնորհիւ, երկու ամիս Հայաստան ապրեցաւ եւ Մոսկուա վերադարձին պրի առաւ Հայաստանեան իր տպաւորութիւնները՝ զՅարին ընդ մէջ խորագրին տակ: Սաֆայի Աւագան Թարգմանեց այն զընթացիւ, որ 1966ին լոյս տեսաւ Հայաստանի մէջ, 15-000 տպաքանակով: «Անյայտութիւնից անակնկալ կերպով յայտնուող» Երեւանին, Վերջինից անող» Արարատին եւ Երեւանի ներքին բովով Վերա Հազին ներկայացնելէ առաջ ու հաջ՝ Գրոսման նքրութեամբ ու խորութեամբ առաւ է Հայոց երկրին ու Հայ մարդուն յատկանշական գիծերը, իրենց տարբերիչ երանգներով ու խորհրդանշական իմաստներով: Հրաշալի են իր զրլին տակ մեր գողաքները, մեր քարը, ըուրը, վերջապէս Հայաստանի երկրային ու երկնային այն բոլոր երանգները, զորոնց միջով հասում է յանրութեան արեւնը:

Նմուշ մը՝ վայելիչ համար:

Գնացքը Երեւան հասաւ Նոյեմբերի 3-ի առաւօտեան: Ինձ ոչ ոք չլինաւորեց: Ես կանգնել էի կառամասոյցին, կապոյտ, տաք երկնքի ներքոյ, իսկ վիտիս մահուդէ գլխարկ կար, վիզս փաթաթել էի բողեայ հաստ վզնոց եւ հազել էի աշնանային նոր վերարկու, որ մեկնելուցս առաջ էի դնել, Հայաստանում, ինչպէս ասում են, լաւ տեսքով երեւալու համար: Եւ իբոք, աշխարհիկ կեանքի մոսկուացի դիտակները տեսքիս նայելով ասում էին՝ «Փայլուն չէ, բայց Թարգմանչի համար յարմար է»: Մի ձեռքիս ճամպուրակն էր՝ բաւականին ծանր (չէ՞ որ ես Հայաստան էի եկել երկու ամսով), միւսում՝ մի պարկ, լցուած ծանր ձեռագրերով, Հայ ակաճաւոր զբոլ Մարտիրոսեանի՝ պղնձաձուլման գործարանի մասին գրած էպոպեայի սողացի Թարգմանութեամբ: Այդ ձեռագիրը ես Թարգմանում էի: Լռեցին ուրախ բացազանչութիւնները, փայլելուց դադարեցին դիմաւորողներին սեւ աչքերը, մարդիկ վազէվազ շտապեցին Թաքսիի հերթ բռնել: «Մոսկուա – Երեւան» գնացքը սողաց դէպի պահեստային գիծը, անձրեւի շիթերի մէջ կորան մեր՝ երեք հազար քիլոմեթր ճանապարհ կրտրած քրտնաթոր, յոգնած վակոններին պղտոր ապակիներն ու կանաչ պատերը: Շուրջ բոլորը ամէն ինչ անձանթ էր, եւ սիրտս սեղմուեց. սահելով ինձանից հեռացաւ Մոսկուայի վերջին կտորը:



Ես տեսայ կայսրանի սովիւի մեծ հրապարակը եւ սխտեղ, պրոնզէ նժոյգի վրայ, կիսամերկ հսկայամարմին մի երեսասարդի: Նա մերկացրել էր սուրը, եւ ես հասկացայ՝ Սասունցի Դաւիթն է: Արձանը զարմանք է պատճառում իր հզօրութեամբ. հերոսը, նժոյգը, սուրբ՝ ամէն ինչ հսկայական են, շարժումով եւ ուժով առիցուն:

Ես կանգնել էի մեծ հրապարակում եւ յուզուած մտածում էի՝ ինձ ոչ ոք չդիմաւորեց: Ես շարունակ նայում էի հրապարակին եւ փառահեղ արձանին... Հիմա ինձ թուաց՝ ե՛ւ պրոնզի մէջ դրուած շարժումը, ե՛ւ միու հզօրութիւնը, ե՛ւ Սասունցի Դաւիթի հզօրութիւնը չափազանց են: Դա պրոնզէ լեզենդ չէ, լեզենդի պրոնզէ սեկլամն է:

❖

Անձանօթ քաղաքի փողոցում առաջին բողէնները յառուկ բողէններ են: Դրանց շին փոխարինի ոչ միայն ամիսները, այլեւ տարիները: Եկուոր մարդը այդ բողէններին արտադրում է ինչ-որ ախոմային տեսողական էներգիա, ուշադրութեան ինչ-որ միջուկային ուժեր: Յորաթափանց սրութեամբ, ամէն ինչ հասկացողի յուզմունքով նա շնչում, ներծնում, կուլ է առյիս հսկայական տիեզերքը՝ աները, ծառերը, անցորդների դէմքերը, ցուցափեղկերը, հրապարակները, հոտերը, փոշին, երկնքի դոյնը, շների ու

կատուների արտաքին տեսքը։ Այդ բուսականից մարդ, ամենահզոր Աստուծոյ նման, նոր արարչագործութիւն է կատարում, մտովի ստեղծում, կառուցում է Բազալը՝ նրա բոլոր հրապարակներով, փողոցներով հանդերձ, նրա բակերով, ճեղքուկներով, նրա հազարամեայ պատմութեամբ, պարենային ու արդիւնարեական ապրանքների մատակարարմամբ, նրա օփերային թատրոնով ու խորակարաններով հանդերձ։ Անէտրիսից անակնկալ կերպով յառնող այդ Բազալը յատուկ Բազալ է։ Նա տարբերում է իրականում եղածից։ Դա մարդու քաղաքն է, այնտեղ իւրովի, անկրկնելիորէն են խլշում աշխանային տերեւները, այնտեղ փոշին իր իւրայատուկ հոտն ունի, այնտեղ երեխաները իւրովի են քար նետում պարտատիկներէից։

Արարչագործութեան այդ հրաշքը կատարում է նոյնիսկ ոչ թէ ժամերի, այլ րոպէների ընթացքում։ Մարդը մեռնում է եւ դրա հետ մէկտեղ կորչում է նրա ստեղծած միակ անկրկնելի աշխարհը, Տիեզերքը՝ իր օվկիանոսներով, լեռներով, իր երկնքով։ Եւ այդ օվկիանոսներն ու երկնքները զարմանալիորէն նման են այն միլիարդաւոր օվկիանոսներին ու երկնքներին, որ կան միւս մարդկանց ուղեղներում։ Այդ Տիեզերքը զարմանալիորէն նման է այն միակ տիեզերքին, որ գոյութիւն ունի ինքնին, մարդկանցից անկախ։ Բայց այդ լեռները, այդ ծովի ալիքները, այդ խոտը, այդ սխտոպղպողը իրենց մէջ ունեն ինչ-որ անկրկնելի բան, ժամանակի անվախճանութեան մէջ ծնուած իրենց միակ երանգները, լրջիւնները, ալիքի միակ ճողվիւնները, դա Տիեզերքն է, որ ապրում է նրան ստեղծած մարդու հոգու մէջ։

Եւ ահա ես աստորուս նստած գնում եմ հրապարակով, նայում վարդապետի եւ շեղանազուր տուֆից կառուցած ժամանակակից տներին, որոնք ընկանքորէն եւ պերճաշուք վերարտադրում են հայկական հին կառույցների ուրուագծերն ու նկարը, եւ մտովի ստեղծում իմ յատուկ Երեւանը՝ արտասովոր կերպով նման այն միակ Երեւանին, որ կայ իրականում, արտասովոր կերպով նման այն Երեւանին, որ ապրում է այսօր ահա այս փողոցներով քայլող հազարաւոր մարդկանց մտքերում, եւ միաժամանակ բոլոր միլիոնաւոր Երեւաններից տարբեր, իմ անկրկնելի քաղաքը։ Այնտեղ առանձնայատուկ կերպով են խլշում շինարարների աշխանային տերեւները, այնտեղ առանձնայատուկ կերպով են ծլլում ճեղքուկները։



Ծն արդէն դիտելի, որ ակադեմիկոս Թամանեանը ստեղծել է նոր Երեւանի ճարտարապետական լուծումը, որը կրկնում է հնորեայ կառույցների եւ եկեղեցիների ոճը։ Ծն դիտեմ, որ ժամանակակից շէնքերի մէջ վերածնուած աւանդական հին դարձաբանակալ պատկերում է խաղողի ողկոյց, արծուի գլուխ... Յետոյ արդէն երեւանցիները ինձ ցոյց տուեցին Հայաստանի ճարտարապետների լուսագոյն կերտումները, ցոյց տուեցին փողոցը առանձնատների, որոնցից իւրաքանչիւրը ճարտարապետական փոքրիկ դուլա-գործոց է։ Բայց ինձ ցոյց տուեցին, — դա Հետաքրքիր չէ, — Երեւանի հին տները եւ երեւանեան ներքին բակը, որոնք թաքնուած են տաճարակերտ նոր տների ետեւում, տասնիներորդ դարի գեղանկար շէնքերի յետեւում, որոնք Երեւան են մտել ուսուսկան հետեակագործի հետ մէկտեղ։

Ես դրանք տեսայ Երեւանում դռնուկուս տառլին օրը:
Ներքին բակը: Ահա Երեւանի ներքը, նրա Հոգին...

Տափակ կտորներ, սանդուղքներ ու աստիճաններ, փոքրիկ միջանցքներ, պատշգամբներ ու պատշգամբիկներ, շինարիներ, թղենիներ, խաղողի փաթաթուղ ոտներ, սեղաններ, նստարաններ, սրահներ: Եւ այս ամէնը ներդաշնակ է ու միաձոյլ, մէկը միւսի մէջ մտած, մէկը միւսից ելնող...

Ներքին բակ: Գաղաքի կենդանի օրգանիզմն է՝ մաշկը հանած: Այստեղ է երեւում մարդկանց կեանքը՝ եւ սրտի ֆնջութիւնը, եւ ջղային պոթիկումները, եւ արիւնակցական ազդակցութիւնը, եւ հայրենակցական հզօրութիւնը: Մերուկները Տէր-ողորմեա են զգում, անշտապ ծիծաղում, երեխաները շարձնութիւն են տեսնում, մանդալները ծխում են, պղնձէ թասերում եփում է սերկեւիլի եւ դեղձի մուրաբան, տաշտերի վրայ կախած է գոլորշին, կանաչաջ կատուները նայում են հաւ փետրոջ կանանց: Կողքին թուրքիան է: Կողքին Պարսկաստանն է:

Ներքին բակ: Նրա մէջ է ժամանակների կապը, այսօրուայ, երբ Խ-18 ինքնաթիռի շորո մոտորները երեքուկէս ժամում մարդուն Մոսկուայից հասցնում են Երեւան, եւ քարաւան-սարայների, ուղտի կամանների ժամանակների կապը: Եւ ահա ես կանգնած, կերտում ու կառուցում եմ իմ Երեւանը, ես աղում եմ, ջարդում, ծծում, ներս քաշում վարդապոյն տափը, բազալտը, սաֆայտն ու դյաբաբերը, ցուցափեղկերի ապակին, Արթուրեանի, Շահումեանի, Չարենցի արձանները, դէմքերը, իօտուածքը, մարդատար աւտոմեքենաների կատաղի սլաքը...

Ես տեսնում եմ այսօրուայ Երեւանն իր գործարաններով, բանուորների համար կառուցուած բազմաբարձ, նոր տների հսկայական թաղամասերով, հոյակապ օփերային թատրոնով, թանկարժէք զբաղակոչով՝ Մատենադարանով, փառաւոր վարդապոյն դպրոցներով, զիտական ինտերտուներով, զիտութիւնների ահազեմիայի ներդաշնակ ու պերճաւոր շէնքերով: Այդ ահազեմիան փառաբանուած է հայ զիտականների լուսաւոր ժողով:

Ես տեսնում եմ Արարատը. նա կախուած է կապոյտ երկնքում: Փոփուկ, նուրբ զմաղրուած, նա ասես ոչ թէ գետնից, այլ երկնքից է աճում, ամպերից ու երկնքի կապոյտից է կուտակուած: Արեւի տակ փայլող այս միւնափառ, կապտաճերմակ լեռանն են նայել նրանց աչքերը, ու՛րբ Աստուածաշունչն են գրել:

Ես՝ տիրակալ ու տրարիչ, քայլում եմ Երեւանով, իմ հոգում կառուցում եմ Երեւանը, երկու հազար եօթը հարիւր տարեկան այդ քաղաքը, այն, որ ենթարկուել է մոնղոլների ու պարսիկների ներխուժումներին, այն, որին յոյն վանառականներն են այցելել, եւ ուր Պասկեֆիչի բանակն է մտել, այն, որը դեռեւս երեք ժամ առաջ գոյութիւն չուներ:

Վ. Գ.

2750 - ԱՄԵԱԿ

Երեւան. -
 Սի'րտը հայտը բան,
 Պոզպատէ կայմը հայկական ճաւի. -
 Որ կանգնած այսօր
 Անցած փառքերիդ
 Երկուս ու աւել հազարամեակում.
 Փստում ես յոյսով՝ նորի՛ց խնայագին. -
 Լոյսը քա հոգում...

Արծուի պէս խիզախ ու թեւտարած՝
 հայանում ես վե՛ր,
 Տնկուն, աներե՛ր,
 Ու բազուկներդ յազթական ճիգով
 Հայրենի կուրծքն են
 Շքեզագարդի...
 Որքան էլ ընկար՝ ոտի՛ բարձրացար,
 Նհոնցիք հասակ,
 Զարթօնի՛ միշտով
 Ապա մեզ հասար՝
 Ու լանջիդ դրիւ նո՛ր փառապսակ...

Քո սմբակածե՛ծ հոգն էրերունի՛
 Արքաներ ծնեց
 Յանդուզն ու շոյլ. -
 Անխաղախակիրք դեղին մոնգոլի
 Թաւրն անբակեց քա ամէն մի քայլ...
 Բիրտ պատգամներին
 Ու շեփարներին
 Բացուեցին բոլոր դարպասները քա,
 Սէզացան լեռներդ -
 Բայց խոստումներին
 Չդարձար գերին,
 Վառ երազների դու աննինջ հնոց
 Ու կամփի դարբնոց
 Կռեցիր բուրդ քա բոցեղ սրտով
 Ու նո՛ր խոյանքով՝
 Կերտեցիր նո՛ր բերդ,
 Անունը դրիր՝ «Սիրուն երեւան...»

Գրիչդ գորեղ,
 Մի՛շտ թա՛ր ես դարձրել՝
 Թրի պէս Դաւթի. -
 Որ քո պատմութեան դարերում կայծէ՛ր,
 Որ երկինք շանթէ՛ր,
 Որ նո՛ր Վահանգնի աչքերում ճայթէ՛ր,
 Որ նոր մարտակոչ
 Աւարայր դառնա՛ր. -
 Որ լոյսի, մտփի մրտոնը կաթէր...
 Որ կրկին լինէր՝
 Ճգնում, դպրութիւն,
 'Ինչ գալիք երա՛գ,
 Ու դեռ պատմութիւն...
 Որ կրկին խաղաղ
 Հայրենի երկրում
 Յանուն «Տեւումին...»
 Լինէր մեզ համար մի՛շտ ստեղծագործ,
 Ու մի՛շտ շինարար՝
 Նո՛ր անկախութիւն...

Երեւան. -
 Սի'րտը հայտը բան,
 Պոզպատէ կայմը հայկական ճաւի. -
 Որ ժողովուրդիդ կամքով մեծացար,
 Որ նրա հուժկու բազկով բարձրացար,
 Նո՛ր լոյսի հասար՝
 Ու յաւերժացար...

Թե՛հրան

ԱՐՇԻ

ՅՈՎՀ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

ԵՐԿԱՐ ԱՐԵՒ ԵՐԵՒԱՆԻՆ

Ի փառս հայոց Արզիշտի յաներժառես աբջային եւ մեր ժողովուրդի հրաշքաւոր յարութեան՝ զիլ բան չգրուեցաւ այս տարի ու զիլ շեղան աքն չկերը, որոնք հեռք հզող ուժով մը ներկայացան ընթերցողին:

Յովհաննէս Մելքոնեանի քաղաքացիական հետազոյ էջը Հաւանքին մէկն է ընդհանուրէն անջատուող լա՛ւ գրութիւններէն:

Վերջին տասնամեակին Հայաստանի գրականութեան մէջ երեւցած երկրորդ արժանագիշտելի մէկն է Մելքոնեան, որ ընկալելու եւ գրեւորուելու իւրայատուկ ոճ մը ունի եւ իր աշխուժութեամբ եւ արդիւնաւորելու կորովով արդէն իսկ մեծ յոյսեր կապած է իր անունին:

Թանգարանի շնմից ուժա դուրս դրեցի. արեւ էր, երկինք էր, աշման գոյներ էին, աշման շունչ էր, ծռլլ շատրուանները իրենց մեռաւա հասկներն էին պարզել անցնող-դարձողներին. մարդիկ էին՝ ծերեր, մանուկներ, կանայք, տղամարդիկ, ժպիտ էր, ժխոր, ծիծաղ էր, ձայներ էին, լուսիւմ էր, շարժում էր, վազք էր, կանգուն քար-քար պատեր էին, արեւասէր ծերուկներ էին նստարաններին, ծաղիկ էր՝ սափալտի, քարերի մէջտեղ, կանաչ էր՝ սնաւոր, ընտանի, նախագծով ցանած...

Երեւանն էր: Հրապարակն էր:

Արեւի ոսկէ սփռողը սափալտի վրայ, շրջակայ ծառերը խոնարհ էին ու գանգուր սաղարթներով՝ կանաչ ու դեղին, ոտների տակ տերեւ էր: Մարդիկ գնում էին, գալիս էին, քայլում էին: Ու այնքան շատ էին ոտները... Քայլում էին՝ լայն ու շտապ քայլեր էին, կանացի նազանճու քայլեր էին, պատանեկան խենթ քայլեր էին, տղամարդկային ծանր քայլեր էին, ծերունական՝ երերուն, նորամուկան այբբենական քայլեր էին...

Ես թանգարանում էի՝ մի սյան առաջ, մի քանի քապէ առաջ, այնտեղ ուրիշ աշխարհ էր՝ լո՛ւտ, երիցս լուտ. կողք-կողքի շարուած էին քարեր՝ ոչ հասարակ, այլ մեր նախնիների ձեռքի տակով անցած քարեր: Կողք-կողքի շարուած էին դարերը:

Հայոց դարերը:

Եւ այդ դարերը՝ այնպէս մտա իրար, շատ մտա՝ ինչպէս երկու վայրկեաններ: Կողք-կողքի ի ցոյց էին դրուած ժամանակները, պատերազմները, յայտնի ու անյայտ նակատամարտերում արիւնուած բթացած գէմերի մեռած մարմինները, դրամները, գարդերը, կրակարանները, ձուլածոյ աստուածների, կուտների կտորտանքները, սեպագիր-սրբատաշ, յուճազիր-սրբատաշ, լատինագիր-սրբատաշ, մեքսիկացի-սրբատաշ քարեր, բեկորներ...

Անա, գտայ: Այս վեճը, որ ֆարհատները մի օր՝ մի այսպիսի արեւ-
աշուն օր, սեպտեմբերի եւ ծանր ու մեծ մարտերով կտրեցին:

Անա, գտայ: Եւ վեցանիւ սայլով, որին լծած էր վեց եզ, այդ ֆարը
բերեցին բերդ-ֆաղաֆ էրերունի: Եւ ֆարի մէջ կայծ ու կրակ կար: Հենց
որ ֆարգործը մուրճ իջեցրեց ֆարին՝ ֆարից կրակ ու բոց ելաւ: Այսպիսի
ֆար էր հարկաւոր: Վարպետները յղկեցին, ձեւ տուեցին եւ բերդ-ֆաղաֆ
էրերունին հիմնադրած մեծագործ-մեծախօս-մեծամիտ Արգիշտին ասաց,
որ այդ ֆարի վրայ սեպագրեն իր արքայական խօսքերը:

Ես իմ նախնիների սեպանիշերը չգիտեմ, չեմ սովորել: Ես վարժ
կարդում եմ (եւ անգիր գիտեմ, ինչպէս շատերը, ֆարի վրայ սեպագրը-
ւածը):

Սա Արգիշտինն նամակն է: Սա առաջին երեսնցու (էրբունցու) նա-
մակն է այս երեսնցիներին (որ հիմա ֆաղաֆի սրտում՝ հրապարակում
անցուզարձ են անում, ժպտում են, ծիծաղում են, ազմկում են եւ խոհե-
րի հետ են), հենց այսօր ծնուած երեսնցի նորամանկանն է հասցէագրել,
որ դեռ, ափսոս, ծնողները չեն հասցրել անուն դնել:

Այս սեպագիրն նամակը կարող էր եւ իր հասցէատէրերին չհասնել:
Ձեռանել: Եւ չլինէի: Այս ֆաղաֆը, այս հրապարակը, այս ժամա-
ցոյցը, այս մանուկները, այս ծերը, այս ազգիկները, այս ծանր-ծոց կա-
նայք չլինէին, այս ձայները չլինէին՝ հայերէն ձայները: Այսինքն՝ չլինէր
սեպագիրն նամակի հասցէատէրը՝ հայ ժողովուրդը...

Կարող էր այդպէս էլ լինել՝ չլինէինք: Ձե՞ որ արիւնը, մարդկային
արիւնը վերջ ունի՝ վերջանալ կայ, սպառուել կայ... Իսկ եղբ՛ւր է մի ժա-
մանակ, մի դար, որ մեր արեան երակները հատուած, սրտուած չլինեն,
արիւն չհոսի՝ շեանց ելման գետերը:

Հարցնում եմ՝ եղբ՛ւր է:

Ի՞նչ ժամանակ էք ուզում, ի՞նչ դար՝ թէկուզ ոսկեդար... Ունե-
ցել ենք ոսկեդար, ծաղկման դար, Նարեկացու դար, Աւարայրի դար, դար
նայինան, դար անիական, դար տրդատեան, կամիտասեան դար...

Ունեցե՛լ ենք խաղաղութեան դար: Երբ՝ մեր հողին օտար սմբակ չի
գիպել, մեր բախտը օտար սքով չի բեկուել, մեր կանգուն պատը փուլ չի
նկել, մեր գինիին մեր արիւնը չի խառնուել, մեր գիրն ու գիրքը աւարա-
ուսի բարբարոս բացերին կուլ չի գնացել, մեր բանաստեղծական սիրտը չի
խողջուղուել, մեր միտքը չի կաշկանջուել...

Ձի եղբ՛ւր: Այդ դարը՝ մեր այնքան երազած, մեր այնքան սպասած
դարը նոր սկսուել է միայն, սկսուել է, եւ հիմա մենք խաղաղութեան դա-
րի միջօրէին ենք հասել:

Ես՝ իմ այս խոհերով, կանգնել եմ Քանգարանի մուտքի կամարների
տակ, նայում եմ Երեւանի հրապարակին՝ արեւ է, երկինք է, աշուն է,
մարդիկ են, ձայներ են՝ հայերէն, անցուզարձ կայ, սպարզ ջրով լճակն է,
շատրուաններ են...

Հայոց մեծ ոստան Երեւանի ոստանիկ հրապարակն է:

Իսկ իմ թիկունքում՝ Քանգարանն է՝ կողմ-կողմի հայոց ֆարերն ու
դարերը: Թանգարանի լուսփունից յետոյ՝ հիմա իմ առաջ իր ֆարով, իր
արեւով, իր ազմուկով կանգնել է Երեւանը:

Ուրարտական սեպագիր լուսփունից յետոյ՝ հիմա իմ ակամբներում
գրեցում են հայկական ձայները:

Էրբունի բերդ-ֆաղաֆի ծանր դարպասներից դուրս եմ եկել:

Հիմա անդարպաս, անպարիսպ, անշրջանակ Երեւան իւրդ-Վայր-Քա-
ղաքում եմ՝ հրապարակ-միջնաբերդում: Էրեբունիքն ինչպէս էր, բերդ էր՝
պարիսպ ունէր. ինչ կար՝ այդ պարիսպներն մէջ էր: Պարիսպներից դուրս
աղփատների հիւզակներ պիտի որ լինէին կամ քափառականների կաշուեկար
վրաններ:

Էրեբունիքն՝ այդպէս: Իսկ Երեւանը անպարիսպ է. ամէն տարի նրա
սահմանները լայնանում են՝ թէ՛ դէպի հիւսիս, թէ՛ դէպի հարաւ, թէ՛ դէ-
պի արեւելք, եւ թէ՛ դէպի արեւմուտք: Տարածւում են սահմանները (եւ
աչ միայն Երեւանի, այլեւ Հայաստանի թուրք հին ու նոր քաղաքների).
որովհետեւ այս հողի որդիները պանդխտութեան ցրուած են աշխարհի չորս
ժագերում, եւ քարաւաններ են գալիս (եւ պիտի շարունակ գան) թէ՛ հիւ-
սիսից, թէ՛ հարաւից, թէ՛ արեւմուտքից եւ թէ՛ արեւելքից: Երանք գալիս
են (նրանք գալու են), որպէսզի կառուցեն, կերտեն, ծաղկեցնեն ու սպա-
րեն:

Երեւանը պարիսպներ չունի. Երեւանում ամէն ժամ մանուկներ են
աշխարհ գալիս, ամէն օր քաղաքի «ծխամտնոտում» նոր անուններ են
գրանցում...

Երեւանը քայլում է դէպի միլիոնի սահմանագիծը:

Եւ ահա թէ ինչ՝ մի ժողովուրդ, որ յիսուն տարի առաջ իր միլիոն
գոհերով էր ընկել աշխարհի «ակնօրը», հիմա (եւ այսուհետեւ) հուշակուե-
լու է իր միլիոնանոց մայրաքաղաքով: Այդպէս է՝ մեր երկնակամարում
հիմա քարի արեւ է, հայ մարդու ուզած արեւը:

Այս արեւը, որ հիմա իր վերին շողով ու վերին գոյնով ողողել է
քաղաքը ծայր ի ծայր, տիեզերական այս պահանտեսը, այսպէս, մի օր իր
տառով ու գոյններով ծփացել է ապրող բերդ-քաղաք էրեբունիքի երկնքում:
Այդ օրերից մինչեւ այս օրերը... Ամաք, անեզր, անկանգ, անմահանջ ժա-
մանակի մի հատուած:

Մի՛ երկու հազար եօթը հարիւր յիսուն տարի:

Եւ այդ անթիւ օրերի, անհամար ամիսների, 2750 տարուայ ընթաց-
քում այս էրեբունիք-Երեւան քաղաքում ինչքան որմեր են մարդիկ բարձ-
րացրել եւ ինչքան՝ ֆանդել են տմարդները, ինչքան տուն շինել, շին դը-
րել, ծախ ծխացրել, եւ ինչքան՝ տուն ֆանդել, շին խորտակել եւ ծախ
մարել, ինչքան ցուր է հոսել եւ ինչքան՝ արիւն զրի եկտ, ինչքան հունտ
է հողն ընդունել եւ քարիք վերագործել, եւ ինչքան արիւն է հեղուել, եւ
ինչքան քազնապատիկ դարձել շիրիւ ու գերեզման, ինչքան կերտուածք-
ներ են կէտ մնացել, եւ ինչքան երազներ՝ կիսատ...

Եւ այնուամենայնիւ՝ ապրել է քաղաքը, փռւել կլամ շրմերի վրայ
նոր ֆարեր են դրուել, այրուած, խորտակուած շինքի տեղ՝ նոր շինք,
բոված սերմերի փոխարէն նոր սերմեր են շող տուել... Շարունակուել է
քաղաքը: Շարունակուել է Երեւանը: Շարունակուել է կեանքը:

Շարունակուել է:

Եւ հիմա շարունակուում է:

Եւ յետոյ՝ շարունակուելու է:

Ինչպէս մենք՝ ողջ եւ առողջ, հզօր եւ առաւել հզօր՝ մեր պետական
գերբով ու դրօշակով, ստացանք մեր նախնաց սեպագիր նամակը, այդ-
պէս էլ մեր այսօրուայ նամակը 2750 տարի յետոյ ստանալու են մեր յետ-
նորդները՝ մեծ քաղաք եւ մեծ մայրաքաղաք Երեւանի բնակիչները՝ նորա-
մանուկից մինչեւ դարանց ծնբունին:



Այսպէս վտահ՝ վազուայ համար, այսպէս գորեղ՝ ես խառնում եմ հրապարակամերձ մայրերի յորձանքին, քայլում եմ՝ փառուար, հանդիսար ու հաստատ. ես շարունակում եմ իմ նախորդի վերջին քայլը. իմ նախորդը շարունակել է իր նախորդի վերջին քայլը... Այսպէս, իրար շարունակելով, մենք քայլում ենք, եւ վերջին քայլ չկայ: Եւ ես, կարծես, հիմա 2750 տարեկան երեւոյցի եմ:

Եւ այս քայլը՝ քաղաքիս հագին, քրոնցից ամենածերը քառասուն-չիսուն տարի առաջ է դրուել, կարծես, 2750 տարեկան է: Մի քաղաք եւ նրա որմերին երկու տարիքի քար, մէկը 2750 տարեկան, միւսը՝ մէկ օրական: Ահա, ամենածեր քայլը՝ Արիւնքերդի կանգուն պատ-պարսպին, ահա՛, ամենանոր քայլը՝ Նարի բնակելի նոր քաղաքստում՝ դեռ լրիւ չյղկուած, դեռ վարպետ Արտաւազդի մուրնի տակ:

Այս վարպետը... Որտեղացի՞ ես՝ հարցնեմ, գիտեմ՝ նախ հագոց է հանելու եւ յետոյ ոտելու է մի հեռու, մի անուշ անուն՝ քաղաքի, գիւղի: Այդպէս էլ կայ՝ կողքից եմ, որդի, կողքը լաւ երկիր էր:


- Քանի տարի կը լինի. վարպետ, որ քարի հետ ես:

- Քանի... Շատ կը լինի. քառասունից շատ, - ասում է վարպետ Արտաւազդ Թախտարեանը:


Մի պահ լռում եմ, որովհետեւ լռելի պետք է՝ գտնել մէկ րոպէ, մըստով գնում-հասնում եմ Արիւնքերդ՝ Երեւանի միւս ծայրը, համեմատում եմ այն պեղած պարսպի քայլը սրտ հետ՝ այս տաշուող քարի հետ: Համեմատում եմ՝ այն քայլը յղկող, ձեւ տուող ուրարտացի վարպետին այս հայ վարպետ Արտաւազդի հետ. ասում եմ՝ իրար մման են եղել. երկուսն էլ քարի հետ են գործ ունեցել, երկուսն էլ քար են յղկել՝ որմերին դնելու, չեն փլել, փուլ եկածն են նորոգել, նոր պատեր են դրել... Ուրեմն՝ նոյն մարդիկն են եղել՝ իբրեւից 2750 տարով մեծ ու փոքր: Վարպետ Արտաւազդ Թախտարեանը ոչ թէ քառասուն, այլ 2750 տարի է, ինչ քար է տաշում՝ որմեր դնելու համար: Նա աւելի քան 2750 տարեկան է...

Ահա այս ջրերը, այս լները... 2750 տարեկան են:

6. Մ.



Երեւանի Մատենադարանը



Երևանի կարապի լիճը

... ԿԱՌՈՒՅՅԵՑ ՔԱՂԱՔ

ԷՐԵՒՈՒՆԻ ԱՆՈՒԱՄԲ

Այս բարձունքում կանգնել է Հօրապետին թաղաւորն Ուրարտուի՝ Մենուայի քաջակորով որդի Արդիշահին, տեսել շրջակայքն ու հիացած բացականչել... թէ ի՞նչ, դժուար է ասել: Նրան շրջապատող աւազանին կիսել է տիրակալի հիացմունքը եւ գովեստներով պաշտպանել այսանդ բերդաքաղաք կառուցելու նրա մտադրութիւնը:

Բարձունքից ուրարտական մեծ նուաճողը փորձառու աչքով դիտել է շրջակայ տարածութիւնները, մտովի պատկերացրել ապագայ բարձրադիր բերդից արծուաւայ գէպի մարտադաշտ նետուող իր քաջերին ու անոնց հալածանքից փախուստի դիմած ստիսներին եւ գուշակել.

- Յաղթանա՛հ:

Մտացածին է: Գուցէ եւ այսպէս չի եղել սկիզբը: Մակայն ստույգ է, որ 2750 տարի առաջ հիմնադրուել է բերդաքաղաքն այս Արդիշահի ձեռքով եւ տրուել է նրան հրեբունի անունը, որն ուրարտերէնում ունի նաեւ յաղթանակ բառի իմաստը:

Առասպելները մէջ չէ, որ պաշտպանուել են մեր Երևանի հնարույր անունն ու ծննդեան ժամանակը: Ծնորհալատ արքան Ուրարտուի իր վիճակի վարպետներին կարգադրել է սեպագրել կարծր քաղաւտի վրայ անշնչելի վկայագիրն այս.

«Խալիկի աստուծոյ վեհութեամբ, Արգիշտին, Մեմուայի որդին Բիայնիյի երկրի հզօրութեան համար եւ ի սարսափ Քշնամի երկրների, այս հզօր ամբողջ կառուցեց քաղաք Կրիբունի անուամբ: Հողը ամայի էր, կատարեցի եւ գործեր հզօր այնտեղ Խալիկի աստուծոյ վեհութեամբ, Արգիշտի, Մեմուայի որդին, Քազաւար հզօր, Քազաւար Բիայնիյի երկրի, տէրը Տաւշպա քաղաքին»:


Դարերին է պահ տրուել մեր քաղաքի Հիմնադրման վաւերագիրը: Իսկ դարերը պատան են եղել, Հազար ու մի փորձութիւններով լի: Ինչե՞ր ասես, որ չի արել կործանարար ժամանակը. անհետացել են երկիրներ, ժողովուրդներ, քաղաքակրթութիւններ, քաղաքներ եւ մեզ ակնածանք ներշնչող այս վկայագիրը:

Ուրարտագէտները վաղուց են իմացել Արգիշտիի տարեգրութիւնից, որ նա իր Թազաւորութեան Հինգերորդ տարում կառուցել է Կրիբունի քաղաքը: Սակայն նրա տեղը մնում էր անյայտ: Մեր վաղ պատմութեան բացերը լրացնելու Համար, մենք հետաքրքրութիւն էր ներկայացնում ուրարտագէտութեան Համար կորած այս քաղաքի յայտնաբերումը:


Դարնան ամիսներին, հրք խոտը կանաչին էր տալիս, կարելի էր տեսնել Երեւանի սահմաններում գտնուող Արիներդ բլրի լանջին արածող գետներ, ուլեր եւ այլ անասուններ: Ոչ ոք չէր ենթադրում, որ Հայոց երկրի այդ փոքրիկ հողակտորը որեւէ բանով տարբերում է բազմաթիւ նման բլուրներից, որոնք սոսկ արտավայրեր են: Արիներդն ու նրա շրջակայքը արտաքուստ ոչ մի հետք չէին պահպանել ուրարտական երբեմնի բերդաքաղաքից: Դարերի փոշին էր նստել նախնեաց վաղեմի փառքի մասին վկայող պայտաների ու շինութիւնների վրայ:

1950 թուականին գտնուում է քարին արուած արձանագրութիւնը, պարզուում, որ այդտեղ էլ գտնուում է Կրիբունի քաղաքը: Եւ բազմադարեան լուսութիւնից յետոյ քարերը լեզու առած, սկսում են պատմել Վանի մենք Թաւաւորի մարտերում պահուած փառքի, նրա բազում գործերի եւ այն մասին, որ պատկանելի տարիք ունի փոթորկայոյզ դարեր ապրած մեր նորօրեայ Երեւանը: Հազուադէպ են այնպիսի նման քաղաքները:

Վ. ԲԱՂՆԱՍՏԵԱՆ



Օփերայի եւ պալատի պետական տկալեմիական բաւորոնք



« Խաչի տառույտ վեհա-
 րեանք, Արգիշտի, Մեհուայի որ-
 ղին Բիայնիյի եկրի եզորայեան
 եամար եւ ի սարտաի բոնամի եր-
 կրմերի, այս եզոր տմրոցը կա-
 ռացեց թողալ Կրիբունի տն-
 ւամբ: Հողը տմայի էր, կասա-
 րեցի եւ զարծեւ եզոր այնեպ խաչ-
 ղի տառույտ վեհաքիամբ, Արգի-
 շտի, Մեհուայի որղին, բազաւոր
 Բիայնիյի եկրի, սէրը Յաւարս Բա-
 ղաբի:»



ԷՐԵՐՈՒՆԻ 782 (Ն, Բ.) ԵՐԵՒԱՆ 1968

Արքայանիստ Բաղաշո է որ կ'արքնայ,
 Ո՛վ Արգիշտի, Ուրարտացի Բազաւոր-
 Հազարաւոր տարիներու փառքդ սեա՛
 կը վերածննի գեղեցկութեամբ գերագոր:

Պատուանդանիդ վըրայ կանգնած կը դիտես
 ժողովուրդիդ սեռակերտները քարէ,
 Արեւը՝ որ կը եեղեղի արեան պէտ,
 եւ պանծալի հորիզոններ կը վառէ:

Հազարամեայ տարներէն դուն յառնած
 կը փողփողես մեծ առաւտար կեանքի.
 Սուրիդ մետազն է մեր հոգին ջրղեղած,
 Ո՛վ Մեհուայի առիւծսիրտ Բազարգի:

Դա՛նն հիմնեցիր էքերումին, եւ ամէն
Քարի ծոցին մէջ զըրիր սիրտըդ անեզ,
Ամէն երակդ պարպեցիր հըրեղէն
Վարդակարմիր որպէս գինի լուսանեզ:

Ու բրծեցիր մեր ժողովուրդը՝ որուն
Շեփորներով կը հոչակուիս միշտ անմահ,
Ինչպէս ծագերը հայրենի լեռներուն՝
Ուր տեսարաշ դուն ծառացած ես տես՝:

Պարիսպներուդ ճակատներուն գամեցիր
ժանտ սառնակըդ, եւ անոնց սեւ արիւնով
Ոռգեցիր մեր հողը ուրբ, լուսածիր,
Մեր հողն այսօր փառքիդ օրրոցն հագեցով:

Մեր հողն՝ անշէջ սիրոյ բորբոք ատրուշան,
Ուր դարերով գիւցագնորէն գեհուեցանք,
Որպէսզի դուն՝ յաւերժութեան սերմնացան,
Ունեցընես մեր ակօսներն ակեհամք:

Մեր հողն՝ ուրկէ հերոսներու բազակներ
Քարէ հիւսուած, արարչագործ եւ հօօր,
Կը բարձրանան շաքտեարիչ, ամվեհեր,
Որպէսզի մեր Արժան ըլլաս մինչ այսօր:

Մեր հողն այլեւս գաւակներովդ բնակուած՝
Քու յագթապանծ աւանդովէլդ կ'երգէ.
Եւ ինչ անունդ կը հոչակէ գերդ Ատուած
Ծնունդ առած վիշապայազր սերունդէ:

Հսկէ՛, Անյաղք, հսկէ՛ որ կեանքն ըլլայ ծով
Ցորենի. լոյսը չմարի նրագներուն.
Օրորոցներ չփառարկիս հոգեխռով,
Եւ սերունդները յայտըղեն մեծատուն:

Հսկէ՛ սուրիդ շեղքը փողփուն, ատրաշէկ
Ճոյց տալով հոն, ուր կը սպասէ դաւադիր
Ուսխը պիղծ՝ որուն արիւնը երէկ
Մեր հողին վրայ հեղեղօրէն բափեցիր:

Հսկէ՛, Անյաղք, որ ամբոցներդ տեսրկու
Պատմէ՛ ըլլան, չմտնանայ թշնամին,
Զաւակներէդ մէկն՝ եւ խոնարհ հագներգու,
Քեզ տաղերգեմ հօր շունչովն անցեալին,

Ըլլանք փառքիդ սպասարկու. հայրենեաց
Ատրուշանին բոցը երբեք չհանգի,
Եւ գահաբեր մեր պաշտումով լուսարբած՝
Քեզ հոչակենք Յաւերժապանծ Արգիշտի:

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ



Իմացական Հարժու՛ւ՛՛

ԱՐՄԷՆ - ԵՐԿԱՌ

«Համազգայինի Մանրէայի մասնաճիւղին նախաձեռնութեամբ՝ համանուն ֆաղաթին մէջ, Հոկտեմբեր 20-ին, տեսակցաւ Արսէն Երկաթի յորեկանը:

Մեր զբոսկանութեան մէջ իրական բանասէպի տիպարը եղաւ Արսէն Երկաթ, կոչումով բանաստեղծը, որ գրելու արբերը բնաստական պահանջի մը զորութեամբ զգաց հողին մէջ ու գրեց շարունակ, իր վաղ պատանութենէն սկսած մինչեւ այսօր, երբ իր գրական գործունէութեան շինամակը կը տակաւի եւ ինչ հասած է 76-ի սեփն:

Արսէն Երկաթ երէց սէրը, միշտը, մահը եւ բնութիւնը: Ծնչաւոր եւ անշունչ բազմաթիւ երեսօյթներ: Կանգալատեսիլաւ, յափշտակեցաւ, սուղուեցաւ, իսկնկ ծից սննդակերտ ու մեղակերտ բոլոր տանքներուն մէջ, Յախճա՛մըրմունջ իր երգը ուղղելով ա՛յս հրաշագան աշխարհը արարող խորհրդաւոր ուժերուն, աշխարհը նոր արարազորութիւններով սծտած, սծտով մարդուն:

Երէց մասնաւոր հայ մարդուն սիրագործութիւնները, ա՛յս մարդուն, որ իր տաղանդով, տեսիլքով, աշնութեամբ ու բազկի զորութեամբ խորին խորհուրդով մը սծտեց մեր փառակեղ հայրենիքը:

Արսէն Երկաթի բանաստեղծական ներուճը մեր ժողովուրդին մտայուն ներկայութիւնը եւ բախտաւորող ախպարն է նոս, մեր վեհապան Քաղաւորենին են, անթաղ արքաները, Լուսաւորիչը, գրին գտիչը, Քաղզմանիչը, վիճափոր վանքեր հատուցողն ու փարեքը հրաշակերպող խաչքարերու անշունհար մարդը, ստորով սքրացած ներշնչող ներուճը եւ ներշնչմամբ ներոսացած սրբուստղէտը՝ ամէնեքը: Այս ամէնքը



ներկայացում, բնութագրում, յիշատարում են յորեկանին վաստակին մէջ, առանց զգացումներ շարաշունչու մեղաւոր միտումներու, պարզութեամբ, սրտացուցեամբ, անկեղծութեան խոր կնիքով մը:

Այս վերջին շաբթի վերջին կտորներէն է Մանուշի առիւծախրտ որզուին ետերուն գե՛մացի գերթուածը, որ ամբողջութեամբ կը զգացուի Արսէն Երկաթի բանաստեղծական արժանիքները՝ զեղումը, Չի՛րմութիւնը, յազական սարին ու բանը արժեւորող բաներուն վաստակին ուժը:

Յարգանք իր վաստակին ու երկար կենցածանով վաստակաւորին:

ՈՒՂԵՐՁ

**Ա Ր Ս Է Ն Ե Ր Կ Ա Թ Ի
ՅՈՐԵԼԵԱՆԻՆ ԱՌԻԹՈՎ**

Բանաստեղծութեան տաղասուր կը սկսի Քրիստոսէ առաջ վեցերորդ դարուն, այն օրէն, երբ հելլէն քերթողուհին՝ Մաֆօ, յուսահատութեան նուշայի մը մէջ, ինքզինք ծով նետեց ժայռի մը կատարէն:

Ձեռ կարծեր, որ Արսէն Երկաթ ուղէ Սաֆոյի նմանիլ եւ ովկիանոսի ալիքներուն մէջ փնտսել իր յաւիտենական անդարը: Որքան ալ թախծոտ ըլլայ իր մշակած գրականութեամբ, որքան ալ աշխարհի ցաւերը տեսնէ, համզոգաւ ու փոխանցէ մեզի, սակայն մեր բարեկամը կ'ապրի Սաֆոյէն քանակինգ դար ետք: Մեր օրերուն՝ տխուր, վշտահար, յուսահատ մարդիկ, փոխանակ ծով նետուելու, ուղղակի... բանաստեղծութեան աւազանին մէջ կը նետուին:

Պատահական չէ Արսէն Երկաթի մտադր այն լուսաշող տաճարին մէջ, ուր մուսաները կ'իշխեն իրրեւ մենատէր: Անիկա խառնուածքով բանաստեղծ է եւ ոչ թէ ուսմամբ կամ նոյնիսկ առհաւուրութեամբ:

Արդէն բանաստեղծութիւնը ո՛չ սուսանելի է, ո՛չ ուսուցանելի, ինչպէս է ոճը: Արսէն Երկաթ ոճ ունեցող բանաստեղծ մըն է, որ ըսել է՝ երկու անգամ բանաստեղծ է:

Ոչինչ մեզ աշխարհէն կը հեռացնէ, ինչպէս արուեստը, եւ ոչինչ մեզ ապահովութեամբ աշխարհին կը մօտեցնէ այնքան, որքան արուեստը, կ'ըսէր իմաստուն Կէօթէն:

Արսէն Երկաթ մեզ աշխարհէն կը հեռացնէ եւ միտմամանակ կը մօտեցնէ անոր: Կարծեմ աւելի շատ կը մօտեցնէ, քան կը հեռացնէ, քանի որ բանաստեղծութիւնը աշխարհէն վեր բան մըն է, և թէ դուրս չէ բոլորովին:

Վերջէն կ'ըսէր. «Երբ դժբախտ եմ, տխուր քերթուածներ կը գրեմ, իսկ երբ երջանիկ եմ, զուարթ քերթուածներ կը գրեմ»: Արսէն Երկաթ առհասարակ տըխուր, մեղամտադատ քերթուածներ կը գրէ. այս կը նշանակէ՞ արդեօք, որ դժբախտ է: Երբեմն տխուր մարդիկ զուարթ բաներ կը գրեն, երբեմն ալ զուարթ մարդիկ տխուր բաներ կը գրեն: Յակոբ Պարոնեան տխուր մարդ մըն էր, բայց իր ամբողջ կեանքի ընթացքին զուարթ բաներ միայն գրեց:

Այս հակադրութիւնը կը պատշաճի նաև մեր բարեկամին, որ զուարթ մարդ մըն է, բայց որ տխուր բաներ գրեց միշտ: Պիտի ըսենք, որ կեանքը ինք արդէն հակադրութիւններու շղթայ մըն է: Բանաստեղծութիւնը ծնած է առաջին մարդուն հետ եւ պիտի մեռնի վերջին մարդուն հետ: Կրնայ հանգիստ ըլլալ սիրելի Արսէնը, քանի որ «վերջին մարդը» ծնած չէ դեռ...»

Արսէն Երկաթի արձակին մէջ աւելի շատ բանաստեղծութիւն կայ, քան այլոց օտանաւորներուն մէջ: Եւ ասիկա պզտիկ առաքինութիւն չէ մէկու մը համար, որ յայտնապէս բանաստեղծ ծնած է եւ բանաստեղծ ալ պիտի մեռնի:

Պիտի մեռնի՞ թէ անմահանայ... Ես լեզուի էսքստիկային աւելի կարեւորութիւն կու տամ, քան, ըսենք, լեզուի ճշգուծեան:

Լեզուի ճշգուծիւնը գիտութիւն է, մինչ լեզուի էսքստիկան արուեստ է:

Արսէն Երկաթ մեր մէջ այն բացառիկներէն է, որոնք կրնան հպարտ ըլլալ իրենց լեզուի էսքստիկայով:

Քի՛չ բան է ասիկա:

Բ. Թ.

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

ՀԱՅ ԼԵԶՈՒՆ

Կրսեն, թէ մայրենի լեզուն բանի մը չի ծառայեր: Օտար լեզուներ պէտք է գիտնայ: Բայց մայրենի լեզուն անհրաժեշտ է միշտ հայ ապրելու համար:

Կամ մտածողներ, որ մենք կրնանք հայու հոգին անազարտ պահել մեր մէջ առանց հայերէնի: Յնորք է ստիկա. տանջալից, ազարմելի ցնարք: Լեզուն միայն կը կազմէ այն պատեանը, որուն լիւրջ ցեղի մը ոգին իր ամայլայլ մարգարիտները կը ստեղծէ: Լեզուն է այն կրակը, որուն ծառայած ջերմութենէն կը բացուին ցեղի մը արժէքները խորհրդանշող անթառամ ծաղիկները: Լեզուն է այն հողը, որուն մէջ ժողովուրդի մը կենաց ծառին արմատները կը գործնան:

Յիմարութիւն է կառչիլ տարբեր գորութեանց: Գերագոյն ուժն է լեզուն, որ մեզ պիտի պահպանէ եւ ամէնէն սաստկաշունչ ահրուսէի մէջէն իսկ, մեր առագաստները պիտի հասցնէ լուսուար ու խաղաղ պիտանքները:

Գիտակցի՞նք մեր լեզուին գեղեցկութեան: Անիկա միայն միշտ մը չէ մեր գաղափարներն ու զգացումները արտայայտելու: Անոր մէջ մեր ժողովուրդի ոգին կայ: Հոն կը բարայտեն Սուրբ Սահակի եւ Մեսրոպի սիրտերը:

Հայերէնը լեզու մը չէ միայն բառերով հիւսուած: Անիկա սրեղբուքի հեղեղացայտ ազբիւրմերէն առած է իր հնչիւնը: Թէ՛ արիւն կայ անոր մէջ եւ թէ՛ արցունք, արիւնը մեր նահատակներուն եւ ներսոսներուն, արցունքը՝ որ մեր մայրերուն եւ քայրերուն աչքերէն հոսեցաւ, առանց բնաւ կարենալ ողբելու քար սիրտը բռնակալներուն:

Ահա թէ ինչ է մայրենի լեզուն: Զայն չգիտնալը ինծի համար ամէնէն վատ դատալէսութիւնն է: Անով է, որ մէկը իր նախահայրերուն հրաշքով քաղցրութիւնը կը զգայ: Անով է, որ մենք որոշ շիւնագիծ մը կը ներկայացնենք մարդկութեան մէջ. մեր ցեղին հարգատար պատկերը կը կրկնենք. մեզ չի հեցնող եօթն անգամ օրհնելու մայրերուն երկնային համբարները կ'արթննանք ամէն առտուտ:

Կը բաւէ միայն գիտակցիլ, հայերէնի նամբով հասնիլ այն լուսազարդ հանգրուաններուն, որոնք մեր մշակոյթի անխորտակելի կռթողներն են: Ճաննալ մեր մատենագրութեան հսկաները: Գիտնալ, թէ Ոսկեզար մը ունեցած ենք, ինչ որ չէ տրուած ամէն ժողովուրդի: Գիտնալ, թէ մեր լեզուով ստեղծուած սեանչիլի գոհարներ գոյութիւն ունին:

Յոյսցնենք պայծառօրէն մեր կերպարանքը մեր լեզուին անսահման խորհուրդին մէջ:

Մոնթբէլ

ՄԻՆԱՍ ԹԵՕԼԵՕԼԵԱՆ

Ա Ր Մ Է Ն Ե Ր Կ Ա Թ

(ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԵԱՆ 50 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ)

Մանթրեյալի մէջ, ուր քանի մը տարիէ ի վեր էր բոյնը հաստատած է վաստակաւոր բանաստեղծը, «Համազ- գային»ի տեղական մասնաճիւղը եւ ջոյք կազմակերպութիւններ նախաձեռնած են Արսէն Երկաթի զբաղման գործունէութեան յիմնամեակի նշումին:

Ճիշդ է, որ «բանաստեղծը երկու բան միայն կ'ուզէ. նախ կեանքը, ապա՝ լացող մը իր վրայ»: Ինք՝ Արսէն Երկաթ, տակաւին քանի մը օր առաջ, իր «Ընդհատ էջերուն մէջ կը շեշտէր, թէ բանաստեղծը զկարօտ չէ վարձատրութեան եւ մեծարանքի. ան չի սպասեր, որ բարձրացնեն զինք պատուանդամի մը վրայ, քրպէսի ժողովուրդը տեսնէ ու ծափահարէ»...

Ինչպէս կը տեսնենք, Գուրեանէն մինչեւ մեր օրերն ալ, տակաւին, քերթողը հիմնական ոչինչ փոխած է իր կեցուածքին մէջ՝ հանդէպ այն ժողովուրդին, որուն իր սիրտն է պարպած: Իայց թէ ժողովուրդը ինչ դաս առած է ժամանակէն, եւ ինչ կը մտածէ իր վերաբերումի մասին՝ հանդէպ իր բանաստեղծներուն, բոլորովին տարբեր խնդիր է...

Մեր կարծիքով, ձեռնարկը թելազրական եւ հրահանգիչ բան մը ունի, իբրև արտայայտութիւնը հանրութեան եւ յատկապէս հայ երիտասարդութեան:

Կը թուի, թէ քարացած աւանդութիւնները կը փչուին եւ, ժամանակէ



ու պայմաններու լրջին տակ, վերատեսութեան կ'ենթարկուին հինաւուրց ըմբռնումները: Մեր զրադէտներն ու մտաւորականները յետ մահու միայն պատուելու եւ յիշելու սովորութիւնը տեղ կու տայ աւելի առողջ դատումի մը, - շքեղու համար՝ իրատես պայծառամտութեան:

Մտքի մարդը իր հունձքով կը հըրճուի, իր «զուկով»: Սակայն լրջ աշխարհ եկած ամէն իրագործում ժողովուրդինն է ի վերջոյ: Եթէ բանաստեղծը վարձատրութեան, մեծարանքի կամ փառքի ակնկալութիւն մը չունենայ իսկ, վաստակին բուն սեփականատէրը նուազագոյն յարգանքի պարտաւորութիւնը պիտի զգայ:

Մոնթբրէյալի օրինակը մէկն է միայն Հին պարտապանցութիւնները պատմութեան կտակելու, եւ նուիրագործուած նախընթացները ունակութեան շփարածելու փորձերէն: Կասկած չունինք, որ պահելով հանդերձ հանդիսութեան պարտադրած լրջութիւնն ու խորհուրդը, գաղութը հաւաքական յարգանքի իր տուրքը պիտի ընծայէ պիւտր քերթողին, իր թէ տարասփիւռ հայութեան անունով:

Մանթ անուն մըն է Արսէն Երկաթ, աւելի քան յիսուն տարի է Վեր քերթողական մշակումի եւ ստեղծագործ աշխատանքի թուած արուեստագէտ հոգի մը, որ որքան իր քերթումին՝ նոյնքան եւ արձակին մէջ հաւատարիմ կը մնայ ոչ միայն գրանդի արուեստին, այլեւ նկարչական, երաժշտական եւ մտածական բնական դրութեան: Մարդն է, որ դիտէ միջին քարեխառնութեան մը մէջ պահել հողեկան իր փոթորկումները եւ տեղատուութիւնները, կարենալ ստեղծելու համար այն կամընտրել, զոր մանասանդ բանաստեղծը պիտի հաստատէ, իր էութեան եւ մարդկային հաւաքականութեան միջեւ:

Բանաստեղծ Արսէն Երկաթ, ամասիացի, եօթանասունեւհինգ տարու, իր ծննդավայրէն եւ երեք քառորդ դարերու համադրմար կեանքէ առած է դիւանոր յատկանիշները իր վաստակին: Պարզ, պայծառ, հանգարտ, այլ խորասոյզ սպորումին արտայայտութիւնն է իր բառը, որ սկզբնական օրերէն մինչեւ այսօր - հակառակ Ֆիդիքական մաշումին, որ վերապահուած է մահկանացու եւ փորուն մեր էութեան - պահած է իր թարմութիւնը եւ երիտասարդական աւելը: Քերթողը ծերացաւ, սակայն իր քերթողութիւնը կը մնայ իբրեւ արտայայտութեան միջոց եւ կառոյց - առջինն օրերու մակարդակին վրայ, աներբ եւ զեղարուեստականօրէն առողջ: Ձե-

ռագիրը կը մատնէ տարիքը. դիծերը կ'անկիւնաւորուին ու տողերը երբեմն վերիվայրում կ'ունենան, սակայն զգացումը - այնքան յորդ՝ իր քերթումներուն մէջ - եւ մտածումը կը պահեն իրենց վաղնջական հաւասարակշռութիւնը:

Կեանքի թէ անհասակուն խառնուածքի մշակման ճամբով՝ Արսէն Երկաթ «արեւելք» է. աւանդութիւն ունի եւ խորհուրդ. սակայն իր արուեստը «արեւմուտք» է: Չզայցումին կը հակի զօրեղ կերպով, սակայն նաեւ մտածումին կտուած է, կըր կեանքը, մարդիկը, բնութիւնը, անցքերն ու անձերը կ'անէ սեւեռումի տակ, անոնց ընդմէջէն մարդկայնականը գտնելու ծարաւով մը: Փոթորկումներով, ժայթքումի հասնող կամ դահլիճումի հակադէր ծայրայնագուծութեամբ նոյնքան սուր պոթկուսնորու յանդէպ քերթողներ ալ ունինք. Արսէն Երկաթ, սուղումի վարպետ լողորդի մը նման, միշտ խաղաղօրէն կ'ողջունէ երկինքն ու լոյսը, - անդունդը կը կապէ մակերեսին:

Քերթումը թէ արձակ, մասնաւոր թէ պարադախական իր բոլոր էջերէն ընթերցողը առհասարակ կ'ունենայ այն տպաւորութիւնը, որ տխրութեան եւ յուսաբեկումի անձնատուր բանաստեղծ մըն է Երկաթ, իր անունին հակասող փխրուն հոգիով: Խորքին մէջ, սակայն, կը մղուինք դանկուտ սպորումի ներքսման հասնող կենսապաշտարիւն մը, որ, եթէ փրփուր կամ ալիք չունի, սակայն ամուր է եւ հարազատ՝ սպորելու տենչը ունեցող մարդոց:

Պիտի խօսուի ու գրուի անշուշտ իր կեանքի ու դործի բոլոր դիծերուն մասին: Կ'արձանագրենք, հետեւաբար, մեր մաղթանքը՝ իբրեւ վերջաբան, զաւարտեանելու իր գրելը, ինչպէս դաւար մնացած է իր հոգին:

Մ. Բ.

ԱՐՄԵՆ ԵՐԿԱԹ

Սիրիի եւ սրտագրաւ անուն մը արեւմտահայ քերթազուքեան մէջ, որ կէս դարէ ի վեր կ'երգէ մտացուած բըռչունի մը պէս, քառելով կեանքի եւ հոգիի տեքակներուն վրայ եւ հոն կրկնելով իր մեծ տրամաբեան յաւիտեանական մը մտայնը: Ձիւնքը կը կարդանք տարիներէ ի վեր եւ անմիջապէս կը հաւատամք իր ձայնին ազնուական շնչոյն, իր մեղմահաս զգայնութեան աղբերակին, իր գուսպ բայց խռովիչ փոթորկումներուն, որոնք տկոս մը կը բողբուն մեր էութեան մէջ, կը քափանցեն մեր սրտին խորշերուն եւ յանախ մեր մտածումը կը ցընցեն: Այդ ձայնը մեզի կը պատմէ փշրուած գեղեցկութիւններու փառքը, հիմ հերատութիւններու տօնական հանդերը, հայրենի բնութեան քարմութիւնն ու կարօտը. անոր լեռները, վտակները, հովիտներու մէջ պահուած տաճարները, եւ վերջապէս ծիրանին, որ մարտիչ առաջ անգամ մը եւս կը բանկի հարկունին վրայ:

Այս բոլոր պատկերները տեւականօրէն կը մշակուին քերթազիմ միայր նըւագարանին վրայ եւ ծնունդ կու տան տարբեր տեսիլներու, որոնք իր երազային աշխարհը կը կազմեն եւ զինքը կը տանին աւելի խոր ապրումներու: Ի՛նչ որ ժողովուրդ մը կ'երտնդ է զարեւով եւ պատմութեան կտակեր է իր սարքերով, ասպետներով, արքաներով կամ մշակայրի մարգարէներով, ի՛նչ որ արտահասեր է անոնց բողբուն պալատներէն, սիւներէն, քանդակներէն եւ զէմքերէն, յուսումնաւոր եւ ոգեկոչման գրուագներ են միշտ Արսէն Երկաթի քնարերգու հոգիին համար, որ կ'արծանող շէրտութեան մը ցաւը կը ժայթքի յանկարծ, բայց կ'ըլլայ նաեւ սփռվանքի ցօղ մը եւ անանուն երջանկութեան մը յաջողքը:

Ան կը քափառի այդ աշխարհին մը տերիմ արտահտներուն վրայ եւ ամէն մասունքի առջեւ կանգ կ'առնէ հաւա-

տարիմ պահապանի մը պէս, կը պիղծ տաք մոխիրը եւ անբեղում գանձեր կը գտնէ անպատմելի գուրգուրանքով մը, քերես սուրի մը բեկորը, խաչի մը քերթը, նուիրական մատեան մը, ազօրագիրք մը կամ պապեմական բնար մը: Անոնց ամէն մէկուն զիմաց կը խալանքէն ու կ'անհետանայ տարբեր ազդիներու մէջ, այս անգամ եւս յայտնուած ճիւղապատ սարերէն, սէզ լեռներէն, կատարներու վրայ իշխող եկեղեցիներէն, որոնց կուսակիւն զօրանքը կը սքափեցնէ քանաստեղծը, եւ ան կ'ուզէ մագլցիլ ու քաղի Ալագեազի ծաղկները: Ի՛նչպէս շարիւ իր յուզումը մեռած ծաղիքի մը համար, գոր կը գտնէ հասկի մը մէջ եւ գերեզման մը կը փարէ ողբունելով անոր յիշատակը, ի՛նչպէս անտեսել այս խոնարհ ու երկիւզած սիրտը, որ կը քրքրայ եկեղեցի ժամերուն ու կը վերածուի անասանան գորովի մը, կը քաշտի խորանէ խորան ու կը մտնէ Ակնէջ վանքէն մերս, ծնրադրելու համար քագաւորի մը լուսավառ սրտին տաջի:

Արսէն Երկաթ անվաքա պահեց իր երգեցիկ անհատականութիւնը եւ երեսուն բերս բանաստեղծական տպաւորիչ արուեստ մը, որ կը ծնի մեղեդիէն եւ կը համադրէ քառերուն ամէնէն փափուկ հնչիւնները: Իր քափածը կը յիշեցնէ Մօրէաւր, Բէնէիչէն, Փարօ Բօտեմպաքը, այսօր սինքն անոնք՝ որոնք անցեալ գեղեցկութիւններու տերեւաքափը երգեցին, բայց հոն գտան նաեւ մարդկային ուժի մը հերոսացումը: Արսէն Երկաթ այն հսկողն է իր հրազին աշտանակին առջեւ, որուն լոյսով օծեց իր տրամաբեանը, անոնց իյնալու ժայռայնոց դասականութեան եւ մեղամագձու վիպականութեան մէջ:

Կը մեծարենք պետութեան երգիչը, որ կէս դարէ ի վեր իր ուխտը բերս քերթազակամ սրբութեան, եւ իր մշտամըրմունց տաղերով հնչեցուց սիրտը եւ խաղաղութեան անպատ ճուղկները:

ՆՐՈՒԱՆԻ ՍԻՄՓԷՇԵԱՆ

Ն. ԶԱՐԻՈՒՏԵԱՆ

ՊՈՏԼԷՐԻ ՆԵՐՇՆԶՄԱՆ

ԱՂԲԻՒՐՆԵՐԸ

ԵՒ

ԹԵՄԱՆՆԵՐԸ

Դ.



Մեր կարելիութեան սահմաններուն մէջ փորձեցինք թափանցել Պոտլէրի ներաշխարհէն ներս ու մերկացնել իր հոգին: Հոն դասնք թերութիւններ՝ անձնասիրութիւն, անկարգութիւն եւ կամքի տկարութիւն: Պակասութիւններ՝ այո՛, մարդկային բնութեան պակասութիւնները, բայց ոչ շարասիրութիւն, ոչ սաղայնչականութիւն եւ սատիզմ: Իր անուակոթիւնները սահմանափակ եղան եւ առանց պատճառի չէ որ զինք կոչած են կոյս քանատեղծը: Եթէ իր ժամանակակիցներուն եւ նոյնիսկ յաջորդ սերունդներուն մօտ վախճեց զէջ համբուժը, պատասխանատուն ի՛նք է միայն, որովհետեւ ինք միշտ ուղեց զարմացնել իր շուրջիները: Ծաշակեց թմրեցուցիչ խոտեր, աֆիոն, հաշիշ, բայց չեղաւ անոնց զերին:

Երբ իր մարմինը կը տապալկէր ցեխերու մէջ, աչքերը սակայն ուղղուած էին դէպի վեր, դէպի կոյս բարձունքները, դէպի բարձր բարոյականի մը տեսլականը: Իբր մարդ ու արուեստագէտ եղաւ պատուախնդիր ու բծախնդիր:

Նոյնիսկ իր հակառակորդները կը վկայեն իր հոգիին մեծութիւնը: Անկեղծ, փափկանկատ, հաւատարիմ իր բարեկամութիւններուն, զրհուո՛ղ: Ո՛չ ոք իրեն չափ եղաւ իտէլապապաշտ եւ հոգիին դերակայութեան հաւատացող: Իր անխորտակելի սէրը ու պաշտամունքը մօրը հանդէպ, իր դուրդուքանքը անարժան ժամն Տիւվալի հանդէպ, եւ այն ստոյիկեան համբերութիւնը, որով կրեց իր հիւանդութիւնները եւ ցաւերը, կը փաստեն որ Պոտլէր ունէր նաեւ մեծ յատկութիւններ իբր մարդ:

Ինչ որ չկրցաւ իրագործել իր առօրեայ կեանքին մէջ, որովհետեւ տկար էր մարմնապէս, ջանաց իրագործել զործին մէջ եւ յաջողեցաւ: Հո՛ն է ինք՝ իր ամբողջ էութեամբ:

Կեանքին նուազագոյն դէպքերը, ամէնէն հասարակները իր հոգիին մէջ կ'արձագանդեն աղէտներու պէս եւ իր զրչիւն տակ կը դառնան յախտնականութեանները մարդկային տառապանքներուն, տնջանքներուն, խղճահարսութիւններուն: Ինք թէպէտ կ'ապրի խոնաւ

ու մութ խուցի մը յատակը, սակայն իր այդ խուցին պատուհանը կը բացուի անծայրածիր հորիզոններու վրայ, անտեսանելի անդաստաններուն դիմաց: Այդ պատուհանէն կրնայ նայիլ դէպի վար՝ դէպի սատանային առինքնող թագաւորութեան աղամանդակու խաւարը, եւ դէպի վեր՝ Աստուծոյ յազար եւ եթերային արքայութիւնը:

Պոսիլը, — կ'ըսէ հանճարեզ քննագատ մը, — արդիակամ կ'ըմբի Տանքէն է: Տանքէի պէս, Միլթընի պէս, Հիւկոյի պէս, Պոսիլը տեսնող մըն է, բայց իր ներշնչումը չի ծնիր աստուածաբանութենէն, ինչպէս Տանքէի դործը, ոչ ալ կրօնական եւ քաղաքական կերպերէ, ինչպէս Միլթընիը, կամ մարդկային պատմութեան եւ քննութեան վեհութենէն, ինչպէս Հիւկոյիը, այլ ներքին աստապանքէ: Իր տեսիլքը՝ կալանաւորի տեսիլքն է, կեանքի պատուհանէն դիտւած:

Պոսիլըի դործը կը պատկերացնէ իւր հոգիի այնպիսի թիւններուն եւ տեղաւորւածութիւններուն յաջորդականութիւնը. եւ որովհետեւ իր ամէնէն զէչ պահերուն իսկ երբեք չէ յուսահատած իր բարիքին հասնելու ճիգներուն մէջ, իր շրջանը սկըսած է դժոխքով, հասնելու համար դըրախտ:

Սակայն դժոխքի այդ ահաւոր դըրունէն ներս մտնելէ տակ՝ ասեմ մը թափառած է անոր նախասենեակին մէջ, որ կը կոչուի Փարիզ:

Կարելի է անվարան ըսել, որ Փարիզը աշխարհի ամէնէն ներշնչող քաղաքը եղած է բանաստեղծներուն, վիպասաններուն, երաժիշտներուն եւ նկարիչներուն համար: Բայց միայն Վիյոն, Հիւկոյ եւ Պոսիլը կրցած են թափանցել անոր հոգիէն ներս: Կրցած են այդ քաղաքին լուսավելի երեւոյթներէն մեկնելով զայն վերածել տեսիլքի, ուրուականի, յարափոփոխ դոյութեան մը:

Պոսիլը ծնաւ, ապրեցաւ ու մեռաւ Փարիզ: Հոն զգաց, հոն ուրախացաւ, հոն տառապեցաւ: Հանդիպը, յագնութիւնն ու ձանձրոյթը եղան իր անբաժան

ընկերները: Ձանձրոյթը, որ յորանջելով կրնայ կլելլ ամբողջ աշխարհը եւ մարդս տանիլ դէպի ոճիր եւ անձնասպանութիւն:

Պոսիլը լոյսի եւ մեղքի քաղաքը երգած է մասնաւորապէս Չարիմ ծաղիկները եւ Արձակ քանաստեղծութիւնները գործերուն մէջ:

Ընկերանանք բանաստեղծին եւ ապրիւնք հեալ:

Քաղաքը կ'արթնայ, Աստուան հոյժը կը պլպլացնէ ցոլակներուն դեղին լոյսը: Տուներու բուխերիկներէն ծուխը կը սկսի բարձրանալ եւ աջուրներուն երգը կը տարածուի հեկեկանքի մը պէս: Գողգոցող արշալոյսը իր դեղին ու վարդագոյն շրջազետաը կը ցոլացնէ Սէն դետին ջուրերուն վրան: Յուրաք սաստիկ է եւ փողոցները տակաւին ամայի: Մշուշներու վարագոյրին ետեւէն կարելի է նշմարել աղքատ կին մը, որ մատները կը տաքցնէ շունչով, գործատր մը, որ գործիքները շալկած գործի կ'երթայ, դիշերաշրջիկ մը, որ օճիքը վեր եւ ձեռքերը գրպանը, հոգիով ու մարմնով սպասած՝ տուն կը վերադառնայ: Այն ժամն է, երբ պոռնիկները եւ պերճադիճները, ծանր կոպերով եւ կիսաբաց բերանով՝ կը քնանան իրենց անասունի քունը. այն ժամն է, երբ յղի կիները եւ մահամերձները կը սկսին տառապիլ ու մոնչել:

Բանաստեղծը յոգնած է իր դիշերան աշխատանքէն: Կը հագուի ու դուրս կ'ելլէ անմիջապէս որ արեւը ծագի: Կը քալէ դէպի աղքատ թաղերը, հեռաւոր արուարձանները: Յրուած տուներ եւ ամայի տարածութիւններ:

Այդ ընդարձակ դաշտին մէջ,
 Ար կը խաղայ քամիմ,
 Ուր, անվերջ գիշերներուն,
 Խաղմացոյցը կը խաղտի,
 Հնգիս պիսի բամայ իր ազատի քեւերը:

Եւ ձանձրոյթը կը սողայ հոգիէն ներս, որովհետեւ միշտ կը փափաքի ըլլալ ուրիշ տեղ մը, որտե՛ւ տեղ այս աշ-

խարհէն դուրս: Այս աշխարհը հիւանդանոց մըն է, ուր իւրաքանչիւր հիւանդ կը փափաքի փոխել իր մահիճը եւ կ'երազէ ապրիլ հեռաւոր վայրեր, Լիզպոնի մարմարէ շէնքերուն մէջ, Թոթէրտամի նաւահանգիստին մօտ, ուր նաւերուն կայմերը անտառ մը կը ձեւացնեն եւ մինչեւ բեւեռը, ուր տարօրինակ արջալոյսներ երկինքը կը զարդարեն վարդագոյն փունջերով, լուսաւորուած դժոխքի անմար բոցերով:

Բանաստեղծը կը խորհի այդ բոլոր մարդոց մասին, որոնք կորսնցուցած են ապրելու համը, եւ տառապանքի կաթը ծծած են զայլի մը ստինքներէն, որբերու, կղզիի մը մէջ նաւաբեկուածներու, կոյսնաւորներու եւ ինքն իր վրայ: Եւ կը փափաքի առանձնանալ: Միակ միջոցն է խառնուիլ ամբոխին: Ամէն մարդու չէ տրուած բազմութեան լոգանք մը առնել: Ամբոխը վայելիլ արուեստ մըն է: Բազմութիւն՝ առանձնութիւն:

Քիչ մը վեր, Պոսէրֆին տունիք եւստէր մահդէրը, բայց կարելի չէ այս մահդէրը ընդհանրացնել իր կեանքին եւ զարծին ամբողջութեանը: Հիւսկոյի պէս, ան եղած է տառապողներուն եւ թշուառներուն բանաստեղծը:

«Տեա՛ծ էք երբեք ամայի Յուսուաններու վրայ Յստած այրի կիներ, ազգատ ալրիներ, Մամաւանդ այն պառուս, երբ անոնցմէ մէկը կը փորձէ համբուրել մամուկ մը եւ սարսափ կը պատճառէ անոր: Յուսուատ կը ֆաշուի ամկիւն մը եւ լուս կ'արտասուէ: Ա՛խ, աւա՛ղ, կ'ըստէ, մեմք ծերացած դժբախտ էգեր ենք, որ չենք կրնար հանելի թուիլ Յոյնիակ ամենդներուն: մեմք զգուտմք կը պատճառենք այն մամուկներուն, զորս կ'ազննէ սիրելի»:

Պոսէրֆին երբեք չէ սիրած շուները եւ սակայն ի՛նչ արգահատանք ունի. ի՛նչ դուրդուրանք ինդն ու լքուած անասուններուն հանդէպ:

«Ես կ'երգեմ ազգատ շունը, անտուն շունը, ցեխոտ շունը, ֆազաբին դարձողարձիկ փողոցներուն մէջ թափառող շունը, որ աչքերուդ մէջ կը նայի եւ ը-

սել կ'ուզէ. Ձիս հետդ տար եւ միացնեմք մեր գոյց թշուառութիւնները եւ առաջ քնքնեմ տեսակ մը երջանկութիւն»:

Արդէն կամաց-կամաց մաթը սկըսած է կռիւն: Իրականութիւնը կ'այլափոխուի եւ կը դառնայ տեսակ մը կոշմար, դժոխային տեսիլք: Ահա կ'որբերու շարանը, իրարու ուսէն բռնած, իրենց մարած բիբերը դարձուցած դէպի վեր, զիրենք շրջապատող անսահման խաւարը ճեղքելով կը փնտռեն յաւիտենական լուր ուր, որ կը տարածուի զիրենք շրջապատող լուսութենէն անդին: Հրապարակներու վրայ ամբողջ կ'այնկոծի ու կը գործնելի շէնքերու պատերուն: Մերունի մը առանձին կը քալէ փողոցի մէջ: Հազած ցնցոտիները դեղին են մուշին պէս, աչքերը շար են, դէմքը կը նմանի մատնիչ Յուդայի դէմքին եւ կը վերջանայ սուրբ պէս կարծր ժողովրդ մը: Ուրիշ ծերունի մը կը քալէ առաջինին ետեւէն, եւ ուրիշներ: Կը քային կամաց, կարծես դիակներ կտն իրենց ոտքերուն տակ: Բանաստեղծը կը սարսափի, կը կարծէ կորսնցուցած ըլլալ իր Հաւասարակշռութիւնը, կը նայի շուրջը, արդէն իրեկուն է:

Ահաւասիկ ֆաղք իրիկունը,
բարեկամը շիրագործին.
Ան կը մտնեմայ ամուսն,
մեղսակիցի ֆայրավ.
Միւնչ հիւանդագին ստատամները
կ'արթնան...
Պոսիկները ծաղիկներ կը ցանն իրենց
մանիւններուն վրայ...

Ճաշարաններու փեղկերը կը լուսաւորեն մայթերը, կապելաները եւ դիմաւորները կը լեցուին գողերով եւ բողբոջով, մինչ երաժշտութիւնը կը հոսի ականջներուն մէջ՝ իր թմբեցուցիչ հասնէներով:

Գետնայարկ սրահի մը մէջ, ահաւասիկ խաղի սեզան մը:

Կամանջ գորգին շարք,
անդրբունք դեմքեր,

Անգոյն շրթումքներ, ամակալ ծնունքներ,
Եւ մատներ պոկուած զծախայիմ
տննքով մը,
Կը խուզարկին պարապ գրպաններ
եւ հեւցազ կուրծքեր:

*Քանաստեղծը կը տարուի այս մըթ-
նուորտէն. կը խաղայ ու կը կորսնցնէ:
Գուրս կ'ըլլէ եւ իստք մը սնանկացած-
ներով կը մտնէ ընդարձակ սրահ մը, ուր
նուազախումք մը կ'որոտայ փոթորիկի
մը պէս: Ամէն գասակարգէ բաղկացած
բաղմունքիւնը կը պոռայ, կը պարէ, կը
նուաղի: Կին մը, որ թագուհին է պա-
րահանդէսին՝ կը մտնենայ պարողնե-
րուն: Բարձրահասակ ու գեղեցիկ է ան,
սակայն մէջքը արտակարգօրէն բարակ
է, եւ բանաստեղծը տնժիլապէս կը ճանչ-
նայ զայն. ՄԱՆՆ է:*

Իր խորանկ աչքերը լեցուն են
պարապուքներ, եւ խաւարով,
եւ գանկը արուեստօրէն գարդարուած
ծաղիկներով,
Կը ճօճի յաւորէն իր բարակ
ազնայարին վրայ:

*Նուազախումքը կը լսէ եւ ջութակ-
ները կը սկսին իրենց խելայեղ ելեւէջ-
ները, պարողները կանգ կ'առնեն եւ կը
կազմեն շրջանակ մը, որուն մէջտեղը կը
պարէ օրումն թագուհին՝ ցուցադրելով*

Իր երեսուն երկու ակունքներուն
յաւիտենական ծայտը:

*Գարշահաստութիւն մը կը լեցնէ ամ-
բողջ սրահը եւ բանաստեղծը կը նկատէ,
որ ինք կը գտնուի դիակներու բազմու-
թեան մը մէջ: Թագուհին նշան մը կ'ընէ
եւ բուրբ մէկ կը շարժին, կը հետեւին
անոր: Եւ մինչ անիծեսալները մահուան
պարը կը պարեն, առաստաղը կը բացուի
եւ հրեշտակին փողը կը հնչէ աշխարհի
չորս ծագերուն:*

*Սարսափահար, բանաստեղծը ինք-
զինքը կը նետէ դուրս ու կը մտնէ գինե-
տուն մը: Ահա սեղանին առջեւ դրուած*

*է դիակի շէշը: Եւ երբ կարմիր հեղուկը
կը լեցուի գաւաթներուն մէջ, անոր գոյ-
նը կ'ոգնեկոչէ արեւախանձ բլուրներ, ուր
գեղեցիկ աղջիկներ աշուկուութքի երգեր
կ'երգեն, որոնց կը ձայնակցի գինին:*

Կը զգամ անհուն երևուանք մը
երբ կ'իջնեմ,
Յոգնած մարդու մը կոկորդն ի վար:
Անոր տաք կուրծքը անլիլ հանգստաւետ
շիրիմ մըն է,
Ուր անլիլ հանլիլ է բնանալ բան պաղ
շիրիմներու մէջ:

*Եւ բանաստեղծը կը սկսի խմել՝
մոռնալու համար իրական աշխարհը,
դժոխքը, խղճի խայթերը: Նախ ինք-
զինքը երջանիկ կը զգայ գինով լաթա-
հաստքին պէս, որ պատերուն զարնու-
լով ինքզինքը կայսր կը կարծէ: Գինին
անլիլ քաղցր է, բան ոչքը, որովհետեւ
մեր առջեւ կը բանայ դրախտին գոնէրը:
Սակայն, կոտորակահարց, անկիւնէ
մը տխրութիւնը գլուխը կը ցցէ: Բա-
նաստեղծը կը նետուի դուրս եւ կը հե-
ռանայ քաղաքէն: Լուսնի լոյսը խուտրու
վրայ կը տարածուի ճերմակ պատանքի
մը պէս. փոտերու մէջ իժեք կը զուգա-
ւորուին: Բուերու ձայնը անխառն լա-
րագուշակ է, որ ուղեղը կը սկսի տատա-
պիլ ոճիքի գաղափարով: Ինքզինքը կը
կարծէ ոճրագործ մը, որ սպաննած է իր
կինը, որովհետեւ շատ կը սիրէր զայն
եւ որուն թշուառութեան շէշ կըրցած դի-
մանալ: Կը պառկի ճամբուն վրայ հայ-
հոյսով:*

Եւ պիտի բնամալ ծնր շան մը պէս:
Դանր անիւներով քեռմակառքը,
Լեցուն ցեխով ու քարերով,
Կրնայ ճգնիլ իմ գանկս յանցապարտ,
Կամ մարմինս կիսել մէրտեղէն:
Կ'արիամարհեմ այս բոլորը՝
Ի՛ն Աստուած,
Ե՛ւ ստաւմայ, ե՛ւ խորեմ...

*Գիշերուն ցուրտը կը փարստէ գի-
նովութիւնը եւ բանաստեղծը ամչնալով*

իր արարքներէն՝ կը վերադառնայ իր խուցը: Կը փշէ մոմը, պահուելու համար խուարին մէջ, որովհետեւ պոռնկացուցած է իր հանճարը:

Եւ սակայն ջունը չ'ացելէր իր աչքերուն: Եւ խաւարը կը դառնայ աւելի սարսափելի: Անտեսանելի խարոյկի մը կարմիր ցուքերը դոյութեան կը բերեն նոր տեսիլքներ եւ իր զարհուրած աչքերուն առջեւ կը բացուին դժոխքի դռները:

Բանաստեղծը կը մերժէ անցնիլ այդ դռներէն, բայց ներքին ուժ մը զինք կը մղէ դէպի թուալ: Այդ ուժը հրէշային ճանձրոյթն է, կազմուած մտքին ծուլութենէն, մարմնին սպառուճն եւ հողիին յողածութենէն:

«Այն ատեն, - կ'ըսէ Փասքալ, - մարդ կը զգայ իր ոչնչութիւնը, իր լուսածուրիւնը, իր անկարողութիւնը»:

Պոռլէրեան ճանձրոյթը, ոտմանիքից հողերանութեան վերջին կերպարանափոխութիւնն է: Շաթոպրիան կը ճանձրանար կեանքէն, բայց տակաւին երկտասարդ էր, կը մեղադրէր իր ժամանակը եւ իր անձը կը դասէր շատ բարձր, մինչ Պոռլէր կը ճանձրանայ անոր համար՝ որ պղտած է ինքն իրմէ: Կ'ուզէ մոռնալ ինքզինքը, սիրել, կամենալ, բայց չի կրնար: Այս է առաջին շրջանակը իր դժոխքին: Ջանձրոյթը կը ծնի կամքի տկարութենէն, որմէ կը ծնին վատութիւնը, մոլութիւնները եւ թշուառութիւնները: Եթէ ենթական մինչեւ ուժի չ'երթար, ոչ թէ որովհետեւ բարի է, այլ որովհետեւ յանդգնութիւն չունի: Մէկ խուզում ճանձրոյթը մարմնացումն է սոստանային, որ կը քայլէ մեր կամքին թելերը եւ մեզ կը վերածէ յարոյսկան դիակներու:

Եւ ասկէ կը ծնի մելամաղձոտ յոռետեսութիւն մը՝ Սփիլիը:

Սփիլիը անյայտի վիճակ մըն է, որ կեանքը կը վերածէ տեսակ մը բանտի: Ժամանակը կանգ առած է բանաստեղծին համար եւ դարերու փորձառութիւնը դիպուելով իր հողիին մէջ, զայն ծերացուցած է ժամանակէն առաջ:

Յիշատակներ ունիմ հագար տարի սպարդէ մը աւելի:

Եւ կ'աւելցնէ.

Ես գերեզման մըն եմ աստուած յուսիմէն, Ուր խղճախայքերու պէս կը սողամ երկայն որդեր, Որոնք կը բռնաբարեն ամենէն սիրելի մեռելներն ինչ:

Եւ կը հառաչէ.

Ո՛ր! տառապամէ, ո՛ր! տառապամէ, ժամանակը կը սպառէ կեանքը, եւ դարանակալ թշնամին, որ կը կրծէ մեր սիրտը, կը սնանի ու կը գործնայ մեր արիւնով:

Երկինքը կը ծանրանայ կապարէ կափարէնի մը պէս իր ուղեղին վրայ: Եւ լոյսը կը զարնուի բանտին խոնաւ պատերուն՝ լղջիկի մը պէս: Անձրեւը իր զընտանին անջուկտելի ձողերը կը կազմէ:

Եւ երկար մեռելակառքեր, առանց փողի եւ քմբուկի Հոգիիս մէջ կը տոպմցնեն, յայտը՝ Պարտուած կու լայ, եւ ամկուրթիւնք անտելի ու բռնակալ, հոնարիսմ գանկիս վրայ կը տնկէ իր սեւ դրօշակը:

Գերագոյն ու միակ իդան է փախչիլ: Մէկնիլ այս աշխարհէն, նոյնիսկ մահուան ճամբով:

Եւ գանավիժիլ անդուռիմ մէջ, դժոխք կամ դրախտ, ի՛նչ փոյթ, Անծանօթիմ յատակը, հորութիւն մը գտնելու համար:

Բայց ո՛վ պիտի օգնէ իրեն, ո՛վ պիտի երկարէ իրեն եղբայրական ձեռք մը: Եւ իր առանձնութիւնը ջնջելու եւ անձկութիւնը փարտաւելու համար, կը կանչէ մէկը: Եւ դանդաղ քայլերով, ահաւասիկ կին մը կը ժառանգ իրեն: Սիւ

վեցնիսն է, ժամն Տիւզալը, որ կ'ընէ հետեւեալ առաջարկը.

«Եթէ կ'ազնս փախչիլ այս դժոխ-
էն, եկուր ինձի, նետուէ քազակներուս
մէջ: Պատկած կ'արծֆնս վրայ, պիտի
շնչես մարմնիս քայրը եւ պիտի տեսնես
երջանիկ ծովափներ, ուր միօրինակ ա-
րու մը կը տարածուի տաք աւազներուն
վրայ: Ձգէ՛ որ քեզ օրօրեմ. գոցէ՛ աչ-
քերդ ու երազէ՛: Հիմա կը գտնուիս Ռա-
ւահանգիստի մը մէջ եւ հոնկէ պիտի
ճամբորդես դէպի ենուտը կզգի մը, ուր
բնութիւնը կը ստեղծէ տարօրինակ ծա-
ռեր եւ քաղցրահամ պտուղներ: Ան մա-
զերս ձեռքերուդ մէջ եւ բօքուէ գանձ
թաշկիմակի մը պէս: Եւ միտքդ ճառար-
կելով անոնց բոյներուն վրայ պիտի
տեսնէ արեւախոանձ Ափրիկէն եւ մեղկ
Ասիան: Մագերս կը նմանին երեւստ ծա-
վու մը, որուն վրայ ճուրղը կը սանիմ
ռակեգօծ քաւիշի վրայ: Մերս աւելի գօ-
րատը է քան աֆրիկը: Քեզի պիտի տամ
մտաւորութիւն եւ երազ: Քեզի համելի
դատնայու համար պիտի պարեմ օձի մը
պէս, որ կը փաթթուի եղէգիմ: Համ-
բայրներս շքանմանքուդ վրայ պիտի
ըլլամ հեղուկ երկինք մը մեղրածոր եւ
աստղերով զարդարուած: Յետոյ խօլզ
պիտի երկնամ կատուի մը պէս, որուն
այգերը շինուած են մետաղէ եւ ակաթէ
եւ ձեռքդ պիտի արբեմայ, շայտով Երկ-
տըրակահասցած մարմինս: Եկուր, քեզի
տրվեցնեմ անծանօթ եւ գեղեցիկ մեղ-
քիւր, որոնք կ'աւտֆին ճուրղը եւ կը լը-
ռեցնեն խիղճը»:

Եւ բանաստեղծը կը պատասխանէ.

Սատանէն թէ Աստուծմէ, ի՛նչ փոյթ,
հրնշտակ կամ դեւ,
Ինչ փոյթ քաւիշէ աչքերով պարիկ,
կշռայթ, բայր ու լոյս,
Ով միակ քագուհիս, երբանք միտօրն,
Եթէ կրնաս
Տինգերքը նուազ տգեղ դարձնել եւ
վայրկեանները անելի թեթեւ:

Ուրեմն բանաստեղծը լաւ գիտէ, թէ

*այս կինը, կեղծ սփոփարար մըն է՝
դրկուած նաւարի Իշխանին կողմէ: Գի-
տէ, բայց կը յանձնուի անոր, եւ կը թա-
ւալի անոր գիրկը, վայելելու համար ա-
նոր ձեռքուր սէրը:*

*Եւ բանաստեղծը կը մտնէ դժօրքին
յաջորդ շրջանակին մէջ, երբ այս կինը,
զոր կը պաշտէր մալթ երկնակաւարի
պէս, կը դառնայ տիրութեան բաժակ
մը: Երբ դայն կ'ըղձայ տենդազին, կը
բռնկի կատաղէ տենդանքով, զէ՛մը ունի
անդամ ու պաղ սարբած մը, հրէշային
զիակ մը եւ իսկապէս հրէշ մըն է ան,
պատրաստ ամբողջ տիեզերքը հիւրընկա-
լելու իր մահիծին մէջ: Հրէշ մը, որ կը
բա՛նէ մարդկութեան արիւնը: Ան թագու-
նին է մեղքի եւ մահուան: Եւ գիշեր մը,
կը նկատէ յանկարծ որ գրկած է ո՛չ թէ
գեղեցիկ մարմին մը, այլ վամպիր մը:
Եւ կ'անհիծէ դայն.*

Դուն որ դաշայնի հարուածի մը պէս,
Իմ ողբացող քրտիս մէջը մտար:
Դուն անելի գորաւար քան ստատմաներու
խումբ մը,

նկար անիմֆոնզ ու գարդարուած:
Անպատիւ, որուն կապուած եմ
Ինչպէս կալանաւորը իր շղթային,
Ինչպէս խաղամուրը կանանչ սեղանին,
Ինչպէս գինովը բաժակին եւ որդերը՝
դիակիմ:
Կ'անհիծեմ քեզ, կ'անհիծեմ քեզ յաւիտեան:

*Մահը նախընտրելի է այս բոլորէն,
բայց ինչպէ՛ս մեռնիլ: Ո՛չ թոյնը եւ ոչ
այ դաշայնը չեն կրնար սպաննել իր մար-
մինը: Եւ բանաստեղծը ստիպուած է
անցնիլ դժօրքին երբորդ դանկն և մանել
հեշտութեան շրջանակէն ներս: Հոս կը
կարծէ զանիւ արբեցութիւնը ջիդերուն,
եւ մոռացումը անձկութեան:*

*Կապոյտի ալիքներուն եւ խաղաղ
զեղեցկութեան գիրկը ընկողմանած, ա-
զախիններով եւ ստրուկներով շրջապատ-
ւած՝ կ'երազէ անասելի հեշտանքներ:
Կ'ըլլայ մէկ գիշերուան սիրահարը Սայո-
մէի, Լիւբրէս Պորտիայի, Լէյտի Մաք-
պէթի: Բազմաթիւ կիներ կը ներկայա-*

նան իր հրազին: Մայապարցի ստրկուհին՝ որ ունի բարակ սրունքներ եւ լայն կոնքեր, թաւիչ սեւ աչքեր, որուն զուլւածքը կը նմանի ալիքներու վրայ ծփացող առաջատանաւուն: Կամ չնկ մուրացիկ աղջիկը՝ որուն ճերմակ միտերը կ'երեւան հագուստներուն պատուածքներէն, կամ Ֆրանչէսքան՝ որուն կ'ուզէ յետնադնէրէն սասնաւորներ: Եւ խառնելով աշխարհիկ զգացումներ սասուածաչիւն սիրոյ նախընտան թաւերուն՝ կ'երդէ հոծանուհիները, դանտը նմանցնելով Սուրբ Կոյսին:

Պիտի տեսնես մտածումներէս՝
 շարուած կերպներու պէս,
 կոյսերու քաղցիկիմ գարգարած
 խորանիմ առջեւ...
 ... Եւ եօթը գլխուք մեղիներէս
 շինելով եօթը դաշոյններ,
 Պիտի մխրճում գտնոմք քու հեւացող
 ու հեղեղացող
 Արտիզ մէջ:

Եւ առիանքը, աւելի զօրաւոր քան զինն ու ափոնը, զինք կը թաղէ մոռացութեան եւ անզգայութեան ալիքներուն մէջ եւ կը հասցնէ մինչեւ մահուան ափերը: Գիտէ որ այդ արգելուած հաճոյքները նոր փաստեր պիտի բլլան իր դատավճիռը որոշելու համար, թէ՛ այդ յանցանքները իրեն պիտի արժեն մահուան դատապարտութիւն մը, եւ սակայն ինք վայրկեան մը չի վարանիր բարձրանալու մահուան նաւուն վրայ: Եւ կախարող կնոջ վերջին պատկերը կը նըմանցնէ նաւու մը կերպարանքին, որ զինք կը տանի զէպի ունայութեան ափերը:

Երբ օդը կ'ալիս քու լայն փէշովդ,
 Կը նմանիս գեղեցիկ նաւու մը,
 որ կը հեռանայ ցամաքէմ
 Առագաստները բաց եւ գիւ կ'օրօրէ
 կշարժով մը:
 Դամբաղ... ծոյլ ու հեշտաքեր:
 ...
 Եւ ահա բանաբերդը, կանգնած նա-

ւուն կամրջակին վրայ, աչքերը յառած հորիզոնին, ափերը կը յաջորդեն ափերու, ծովերը կը յաջորդեն ծովերու: Ահա հաւասիկ կզգի մը կարկաչուն ջրվէժներով ու բուրումնաւէտ պուրակներով. Լէսպոն է, միասնական կիներու հարբենքը, ուրկէ կը լսուին լացի ու կոծի ձայներ:

Լէսպոս, ուր համբոյրները նուազկաւ
 կամ գուարթ,
 Արեւներու պէս տաք, եւ մեքուկներու
 պէս ցով,
 Զարդերը կը հանդիսանան
 փառաւոր ցերեկներու
 եւ խորհրդաւոր գիշերներու:

Բանաստեղծը կ'իջնէ նաւէն եւ կը քալէ ծովափի աւազներուն վրայ: Մաֆօյի զիտկը պտուղած է հոն, ջախջախած ու մոայլ: Կը յառաջանայ ու կը մտնէ պուրակներէն ներս: Թարձ խոտերու վրայ զեղեցիկ կիներ զիրար կը զըրկեն ու կը համարեն: Ուրիշներ, յազեցած ու սպասած զիրկընդխառնումներէն, անստնային նայուածք մը կը նետեն զէպի ծովուն բացերը, ուր կ'օրօրի մահուան նաւը: Ուրիշներ, որոնք կ'ուզեն աչքերէ հեռու իրենք զիրենք յանձնել անասելի եւ անմարդկային տուփանքներու, կ'անհետանան անտաններու խորերը եւ հոն կը խառնեն հաճոյքին վըրփուրները տառապանքի լացերուն: Աւաղ, այստեղ հեշտոնքը շարժարանք է լուկ եւ յանցաւոր հաճոյքը իր մէջ իսկ կը պարունակէ թոյնը եւ պատիժը: Ոչ մէկ բան կրնայ յազեցնել այս ոգրացող եւ հեւացող ստրկուհիները, եւ բանաստեղծը անհուն արզանատանք մը կը զգայ անոնց հանդէպ եւ կը հասկնայ, որ անոնք այ խուսափելու համար անհունէն, որ կը պարունակեն իրենց հոգիին մէջ, փըրկութեան մէկ միջոց ունին միայն, անձնասպանութիւնը, ինչպէս կը փաստէ իրենց թագուհիին, Մաֆօյի զիտկը:

Կրկին նաւ կը բարձրանայ ու կը հեռանայ այս գլխիկէն ու անիծեալ կզգիէն: Ծովը խաղաղ է... Երկինքը... անտառ:

Բանաստեղծին սիրտը կ'ողողուի անասելի ուրախութեամբ մը: Բայց այս վիճակը երկար չի տևեր, որովհետև հորիզոնին վրայ կը յայտնուի նոր կղզի մը: Սիրտը կղզին է՝ Կիպրոսը: Եւ բանաստեղծը կ'երազէ մտենիներու, վարդենիներու եւ դափնիներու կանանչութեան ու բույրերուն մէջ կորսուած տեսել Ափրոզիթէի ճերմակ արձանը եւ անոր շուրջ երթեակով սիրատուր, կիսամերկ զբոսմուհիները: Ո՛չ, այս չէ որ կը տեսնէ բանաստեղծը: Այլ սեւ ու տխուր կղզի մը, շրջապատուած փոթորկոտ երկինքով մը եւ ալեկոծ ջուրերով, որուն դաշտերուն վերեւը կը կոկոսն սև ազոսանբու շարադուռի երամները: Եւ բարձունքի վրայ փոխանակ աստուածուհիին ճերմակ արձանին, կը նշմարէ կախողան մը, որուն հորիզոնական փայտին կախուած է դիակ մը, փոքր ճեղքուած, նեխած միւսրով, որմէ պատանեք կը փրցնեն գիշատիչ թռչունները: Եւ բանաստեղծը կը լսէ անողոք ու հեղնող ձայն մը, որ իրեն կը պոսայ: «Այս դատապարտեալը գում ես, այս դիակը քու դիակդ է»:

Եւ իր շուրջը կը բարձրանայ տրեւրտար բրգիւր սուր այն կրներուն, զորս սիրեց եւ որոնց մասին երազեց անքուն դիչներնր: Սմբած, զարհուրած կը գոցէ աչքերը երկար ժամանակ եւ երբ զանոնք կրկին կը բանայ, այդ գեղեցիկ ու կայտառ մարմիններուն տեղ կը տեսնէ կըզլուն տիկեր, որոնց կաշիին տակէն կը ցցուին ոսկորներու ծայրերը եւ որոնց ծակտիկներէն կը հոսի նեխոնք ու թարախ: Կ'ուզէ վերադառնալ, հեռանալ այս ահռելի տեսիլէն: Բայց սրունքները զինք շին տանիք, երակներուն մէջ արիւնը շարժած է եւ ոսկորներուն մէջ ծուծ շկոյ ալլելու: Եւ այն ատեն կը հասկնայ որ մտած է ալլելու դժոխքի վեցերորդ լրջանակին մէջ, անցած է մահուան թալարութեան սահմանը:

Փնտռեցի սիրտը մէջ մտազուրթեամ
 քմիքը,
 Բայց ամ եզաւ անզգներով լեցում

ամկողմ մը,
 Որպէսզի անկուշտ ազդիկներ
 խմեն արիւնս:

Խղճահարութիւնը կը կրծէ հողին,
 ինչպէս որդեքը դիակ մը, եւ յիսուք մարած է իր մէջ, ինչպէս մօժը՝ որ կը լուսաւորէ օթեւանին պատուհանը: Եւ իր առջեւ կը բացուի միակ դուռը, որ զինք կը տանի դէպի անիծեալ բանաստեղծներուն մեռելաքաղաքը:

Այդ ժաման երբ կոյս աստղերը
 կը գոցեն իրենց ծամը կոպիւրը...
 Հոն սարդը կը հիւսէ իր սուսայնը
 Եւ իժը կը պատսպարէ իր ձագերը...

Բանաստեղծը ոչ միայն կ'ընդունի
 այս մարմնական ու հոգեկան մահը, այլ նաեւ գոհ է իր այս ահռելի վիճակէն:

Պարարտ հողի մը մէջ,
 խխուղներով վիտացոզ,
 Ձեռքերովս կ'ուզեմ փորել
 խորանի փռս մը,
 Ուր կարեմաւ հանգչեցնել
 ծերացած սկորներս
 Եւ նիւրի մտազուրթեամ գիրկը, ինչպէս
 շնամուկ մը գազջ ջուրին մէջ:
 ... Որդիւ, սեւ բնկերներ կոյր ու խուլ,
 Ձուարթ մեռեալ մը ձեզի կու գայ
 իր իսկ կամքով,
 Մեռեալ մը, քրուն պատիժն է քրքջալ
 յախտեամ:

Եւ այս յուսահատութեան քրքիւրը,
 որ պիտի արձագանգէ դժոխքի այս շրջանին
 կամարներուն տակ, պիտի լլլայ
 իր միակ պատիժը:

Այսպէս, եթէ օր մը մտազուրթ մարդոց
 յիշողութեանէն,
 Եւ մութ ու մահաբոյր
 որմնադարանի մը անկիւնը
 Ձիւ մետն պարագ սրտակի մը պէս
 գարշառու...
 ... Պիտի լլլամ դագազդ,
 սիրուած նեխութիւն...

Սիրելի քայն, պատրաստուած
հրեշտակներու ձեռքով . ունայի,
Որ զիս կը կրծէ, ով զուս կեամքը
եւ մահը սրտիս:

Եւ իրեն կը մնայ անէտնայ ծանր
կուտը երկինքի կախարչին տակ: Բայց
նոյնիսկ այդ անէտնային մէջ, այս գիտ-
կը կը զգայ որ հոգին կը ծփայ իր շուր-
ջը: Տիեզերքը կ'ոչնչանայ, բայց ինք կը
մնայ: Եւ զգալով որ ինք տարբեր
էակ մըն է, հոգիով եւ մաքով, կը հը-
պարտանայ: Եւ այս է գերագոյն փոր-
ձութիւնը, որ կորստեան մասնեց նոյն-
իսկ մաքրամաքուր հրեշտակները:

Այն ատեն բարի հրեշտակ մը կը
սուբայ արծիւի մը պէս երկինքին խո-
րերէն, կը բռնէ իր մազերը եւ կը ցնցէ,
կը սպառնայ, բառեցքները կ'իջեցնէ մե-
ղաւորին գլխուն եւ կ'ըսէ.

«Լերջին վայրկեանն է. ապաշխա-
րէ՛, զարժի եկո՛ւր, զգրա՛ ըրածներուդ
վրայ. եղիբ քարի ու մարդասէր եւ կըր-
կին կեանքդ պիտի բռնի Աստուծայ
Փռագին լոյսովը»:

Բայց անիծեալը յամառօրէն կը
կրկնէ.

«Ո՛չ, չեմ ուզեր, չեմ կրնար»:

Հրեշտակը կը լքէ զինք ու կը հեռա-
նայ:

Եւ իրեն կը մնայ ինչեւ զժողովին
յատակը, այնտե՛ղ՝ ուր երեք զէմքով
Սաղայէլ, իր ջղջկի թեւերը տարածած
կը կրծէ Յուդային զանկը: Կ'անցնի
Կուպրէ գետը, Քառնի մակոյկին մէջ
նստած, եւ Տըլաքուսի Տոն Ժուանին
պէս, մշուշներուն ու խաւարին մէջէն կը
տեսնէ իր բուրբ զոհերուն, զահիճներուն
եւ կեղծ բարեկամներուն ստուերները:
Սակայն, ինք, լուս ու զոռոց, աչքերը
ուղղած մակոյկին ձգած աղօթին, շու-
պեր տեսնել իր շուրջը, ցած ձայնով կը
կրկնէ, սատանային ուղղուած լիթանիա-
ներուն շարանը եւ յանկերգը.

Ով աստամայ, զքա՛ իմ երկար
քշտառութիւններում վրայ,

Ով զուս, ամենակատարեալը եւ
ամենագեղեցիկը հրեշտակներում:

Արդեօք ամէն յոյս անգառնայիօրէն
վերջացած է իրեն համար, արդեօք իր
մոխրացած էութեանը խորերը չկա՛յ
պահուած կայծ մը: Այո՛, կո՛յ:

Պոտէր սոք կը կոխէ զժողովին սա-
լայատակին վրայ, եւ յանկարծ կրունկը
զեւտի զարնելով՝ կրկին կը բարձրանայ
մինչեւ աստղերը: Ի՛նչն է այդ զարնի
ուժը, որ այս կարելիութիւնը ընծայեց
բանաստեղծին: Այս ուժը իր հանճարն է,
իւր ստուապանքը, արտեւստի պաշտա-
մունքը եւ սրտին մէջ մաքուր ու կոյս
մնացած անկիւն մը, ուր տեղ կայ մա-
քուր սիրոյ եւ աստուածային տեսլանք-
ներու:

Դէպի զժողովին աղլամուղջը կա-
տարուած այս էջըք, զոր նկարագրե-
ցինք; զիջերուած մը երազն է: Այդպէս
նաեւ պիտի երազէ իր դրախտը:

Եթէ Պոտէր մէկ շէշերուան մէջ ե-
րազեց իր զժողովը, կեանքին մէջ սակայն,
սկիզբէն մինչեւ մահ, ազրեցաւ իր իս-
կական քարաւանը: Իր ճամբորդութիւնը
ծովերու վրայ կը վերջանայ հետեւեալ
տողերով.

Ա՛յ, Տէ՛ր իմ, տալի ինձի ուժը
եւ ճաջութիւնը
Առանց զգուսնիի դիտելու իմ սիրտս
ու մարմինս:

Այս պաղատագրին կոչը կը փաստէ,
որ բանաստեղծին հոգին մէջ տակաւին
չէ մեռած յատկատեսութիւնը եւ խիղ-
ճը, թէ՛ ինք տեղեակ է իր վիճակին
ծանրութեան, եւ հիւանդի մը պէս, իր
սնարին մօտ շարուած գեղեցուն մէջէն
կ'ընտրէ ամէնէն զօրաւորը եւ կը փսխէ
իր կլլած բուրբ թոյները: Այդ գեղեցու
քննութիւնը մենք կը կոչենք խղճի քըն-
նութիւն: Եւ կէս գիշերուան լուսնեան
մէջ Պոտէր կը թուէ իր մեծագոյն մեղ-
քերը.

Մենք անարգեցիմք Յիսուսը,
Հանելի դառնույտ համար անասունիմ:
Ոտնակախ ըրիմք մեր պաշտելիները
Եւ ծաւնկի եկանք Յիւրիմ առջեւ...

Կը մարէ լոյսը, անհետանալու հա-
մար խաւարին մէջ: Բայց ժամացոյցի
թիւթաքը յանկարծ մայնը կը բարձրա-
ցընէ եւ սկանչին կը պոռայ:

Յիշէ՛, յիշէ՛ որ հանայքը շուտ
կը շքանայ,
Եւ կը մեայ միայն խղճի խայթը
դամ մտորի մը պէս:
Վայրկեանները հանածոներ են, ուրկէ
պէտք է գտել ոսկին:

Եւ կը յիշէ իր անցեալը, իր ման-
կութիւնը: Կ'ապրի այն պահը, երբ դըտ-
նը հեցաւ երկընտրանքի մը առջեւ. աշ-
խարհը իր ըտլոր ջանկութիւններով եւ
քաղցրութիւններով կամ երազը իր հմա-
նէլ ուղորտներով: Ուզեց վայելել երկուքն
այ եւ յամախ զո՛հ գնաց առաջինին: Եւ ա-
մէն անգամ որ կ'արթննար իր անասնա-
կան ջունէն, իր ոչնչացած մարմնին մէջ
կը զգար հրեշտակի մը զարթնումը: Այդ
հրեշտակը իր հետասանդած խոհան էր:
Այդ պայքարին մէջ, ուր դատապարա-
ւած էր յաւիտենական պարտեալ մը ըլ-
լալու, ունէր երկու զօրաւոր զէնքեր, ո-
րոնք վերջ է վերջոյ իրեն ապահովեցին
փառաւոր յայթանակ մը:

Իր փրկագիրը վնարելու համար մարդս
ուճի երկու բարեբեր արտ,
Որ պէտք է հերկէ ու մաքրէ արօրով եւ
ուզեղով, սիրով եւ արուեստով:

Մարդիկ տառապեցուցին զինք, ծաղ-
րեցին եւ ինք զարնուեցաւ խութերու,
որովհետեւ չէր գիտեր նաւարկի կեան-
քի ծովուն վրայ, եւ ալ պարբարսիմ պէս
ուսցաւ իր թեւերը եւ բարձրացաւ հեռա-
ւոր եթերին մէջ եւ հոնկէ դիտեց մար-
դիկը եւ աշխարհը եւ ամէն բան հասկը-
ցաւ:

Իր կրած տառապանքները իմաստ մը

աւին իր աչքերուն: Կը տառապէին մի-
այն ընտրեալները, անոնք որ ունին մեծ
առաքելութիւն մը կատարելիք, եւ այդ
առաքելութեան արժանի ըլլալու հա-
մար, պէտք էր Աստուծոյ եւ սիրոյ
յանձնուիլ շտաշուած առարկայի մը պէս:
Ուրեմն պէտք է ընորհակալութիւն յայտ-
նենք անոնց՝ որոնք դործիքները եղած
են մեր տառապանքին, որովհետեւ ա-
ռանց գիտնալու անոնք մեզ հասցուցին
կատարելութեան, տարին մինչեւ դրախ-
տին լուսաւոր դուռը: Եւ այս բոլորը
ինք մեզի կը բացատրէ իր Օրհնութիւն
անգերազանցելի բանաստեղծութեան մէջ:
Մայրը զինք անիծած էր, կէնք կը խա-
րէր, բարեկամները եւ մտերիմները կը
զաւաճանէին եւ իր կերած հացին ու
խմած բաժակին մէջ կը խառնէին ձուխի
ու թուք: Նախ ըմբոստացած էր այս
կացութեան եւ վերաբերմունքին դէմ,
ինքզինքը նետած էր տիղմին մէջ, հիմա
սակայն կը հասկնար:

Օրհնեա՛լ ըլլաւ Աստուած, որ մեզի
Նուիր տառապանքը
Իր միակ սպեզանիմ մեր ախտերուն
համար,
Եւ որպէս լաւագոյն եւ աննդ ըմպելիմ,
Որ զօրաւորները կը պատրաստէ
Սուրբ Հեշտամբներում:

Այս է մարդ ու բանաստեղծ Պոսլէ-
րին դերագոյն ազազակը, քրիստոնեայ
Պոսլէրին վերջին խօսքը: Տառապանքը
մարդու միակ թագն է. պէտք է զայն
ընդունիլ ու բախտութեամբ իր փրկագիրն:
Պէտք է այս աշխարհին մէջ մարդ ապրի
իւր քաւարանը, արժանի դառնալու հա-
մար իր երազած դրախտին:

Պոսլէրի դրախտը զուտ քրիստոնէա-
կան դրախտ մը չէ, այլ արուեստագէ-
տի: Հոն ամէն ինչ կանոն է եւ զեղեց-
կութիւն: Հոն չեն պակսիր նոյնիսկ հե-
թանոս տեսարաններ: Հոն արձաններ
կան ճերմակ, հին յունական տաճարնե-
րու արձաններուն պէս:

Գեղեցիկ եմ, ով մահկանացուներ: ...
Քարէ երազի մը նման:

Կ'ըսէ դիւրահիւս արձանը, զինք
պաշտողներուն, եւ կ'աւելցնէ.

Բանաստեղծները պիտի սպասեմ իրենց
կեանքը զիս շիրտելով:

Դրախախտ արժանանալու համար,
պէտք է սիրել այս աշխարհին մէջ: Սէ-
րը հեշտանք չէ, մարմնի գոհացում
չէ, այլ զոհողութիւն: Սիրուածը՝ կինը
չէ, այլ անոր էութիւնը կազմող յատ-
կութիւնները:

Երբ Պոստիլը կը հասկնայ սիրոյ իս-
կութիւնը, արդէն կ'ապրի կեանքին ա-
շունքը, հասած է մահուան դռները եւ ա-
մէն անգամ որ զօրաւոր աղմուկ մը կը
լսէ, իրեն կը թուի, թէ՛

Մէկը շտապով դագագ մը կը գամէ
հեռուն.

Կը սարսափի մահուան դաղափարէն
եւ՝ կը կանչէ իր սիրածը, որպէսզի
պաշտպան հանդեսանայ իրեն.

Կը սիրեմ երկայն այժեարագ
կամանչ լոյսը,
Քաղցր գեղեցկուհիս. Այսօր ամէն ինչ
դառն է ինձի համար...
Եւ սակայն սիրէ՛ զիս, փափուկ սիրտ,
մայր եղիք
Նայմիսի ինձի պէս ապերախտի մը,
ինձի պէս չարի մը...
Սիրուի կամ թոյր, եղիք խուսափուկ
մեղմութիւնը,
Փառանկ աշնան եւ մեղմոց արեւին:
... Աւա՛գ փոսը բաց է, անյագ փոսը,
ինձի կը սպասէ,
Ա՛խ, ձգէ որ թակաստ դրած
ծունկերուս վրայ,
Ըմբռնեմ անբռնելի եւ ոտքակէզ արեւը,
յիշելով,
Դեղին ու մեղմ մառազայքը
վերջացող եղանակին:

Եւ բանաստեղծը կը սկսի քալել այն
ճամբուն վրայէն, որ կը տանի զէպի վեր,
զէպի սիրուհին, զէպի բարի հրեշտակը

եւ սակայն անձկութիւն մը կը սառունի
հողիին վերեւը, արդեօք արժանի պիտի
ըլլա՞յ իր սիրուհին առաջնութիւննե-
րուն, պիտի արժանի ըլլա՞յ

Իր պահապան հրեշտակին,
Մառային եւ Մառամային:

Կը շարունակէ բարձրաձայն, որով-
հետեւ.

Լոյսով լեցում այժեր կը քալեմ
իմ առջեւ,
Զիս հեռու պահելով ամէն սայթախումէ
եւ ծանր մեղքէ:
Անմեք իմ ծառաներս եմ եւ ես անմեց
ստրուկը:

Բանաստեղծը կը համարձակ սի-
րուհիին ուղղել Յասմարդուքեան հրա-
ւէրը:

Ազդի՛կս, քոյրս
Խարիէ՛ հոն մնալու
Եւ հոն ապրելու քաղցրութեամ:

Եւ սիրուհին ժպտելով կ'ընդունի
հրաւէրը: Խաղաղութիւն կ'իջնէ բա-
նաստեղծին հողիին մէջ: Այստեղծ է
զժողովէն շնորհիւ տառապանքին, շնոր-
հիւ սիրոյ, շնորհիւ արուեստին: Եւ մեզ-
մօրէն կը կանչէ.

Տառապա՛նք, տա՛ւր ձեռք,
եկա՛ւր քովս:

Պոստիլը գործը շունի ընդարձակ
ծառայ: Իր արուեստը, անձը, աշխարհը
եւ ներաշխարհը հասկնալու համար՝ կը
բաւէ կարգալ Ջարին ծաղիկները, Պըզ-
տիկ արձակ բանաստեղծութիւնները եւ
Սիրտս մերկացած օրագիրը: Եթէ տոնեց
վրայ աւելցնենք Վիպայաշտ Արուեստը
եւ Արուեստական դրախտները, կ'ունե-
նանք հինգ հատոր դործ, որոնք իրենց
հեղինակը կը դասեն դարուս մեծագոյն

բանաստեղծներու, արձակագիրներու եւ քննադատներու շարքին:

Հիւկոն մեզի հիացում կը պատճառէ, Վիկտին՝ ակնածանք, Լամարթին՝ համակրանք, բայց Պոայէրը կը սիրենք իրր եղբայր: Իր տառապալից կեանքը, իր բարձր պաշարները, իր անկեղծութիւնը, իր տկարութիւնը զինք կը մօտեցնեն մեր սրտին: Երբ կը կարդանք իր սողերը, կը կարծենք որ ինք է որ բառերը կը փսփոսայ մեր տկանջին: Ունի հպարտութիւն մը եւ համեստութիւն մը, որոնք կը յուզեն մեզ: Կը ստառապինք, կը պայքարինք, կը զլջանք իր հետը: Երբ կ'ազազակէ իր յուսահատութիւնները՝ կ'ուզենք օգնել իրեն, մխիթարել, մեր թեւը դնել իր ուսին վրայ...

Այս եղբայրը ունի մեր շատերուն թերութիւնները: Ան մեզ կը յիշեցնէ շատ մը կողմերով, հեռուոր աւազակ ու ոճրագործ բանաստեղծ Վիկտոր, որուն

զգայնութիւնը եւ անձկութիւնը ունի. կը սիրէ կնոջ փափուկ ու ներմահ մարմինը, կը սարսուսայ մահուան անտեղիութեան առջեւ եւ պահ մը ետք կը մոռնայ այս ամէնը եւ կը դառնայ անհնազանդ մանուկ մը, անտակ որդի մը, որ իր անկումներուն յատակը հասնելուն պէս, կը յիշէ որ ունի գթասիրտ ու ներող Հայր մը եւ կը վազէ անոր գիրկը:

Պոայէր հարազատ անդամներէն մէկն է բանաստեղծներուն այդ մեծ ընտանիքին, ան եղբայրն է Տանթէի, Վիկտորի, Փասքայի, Պայրընի, Հիւկոյի եւ Եաթուպրիանի, որովհետեւ անոնց պէս ապրեցաւ, հասկցաւ ու երզնց մարդ էակին անհուն մեծութիւնը եւ անհուն փոքրութիւնը. որ անոնց պէս պայքարեցաւ Աստուծոյ եւ սասանայի միջեւ, իջաւ դըժոխք եւ մեզի բերաւ զմայլելի պատկերներ, զերբնական տեսիլքներ եւ նոր սարսուռներ:

(Շար. 4 եւ վերջ)

Ն. Զ.



LA MORT DES PAUVRES

C'est la Mort qui console, hélas ! et qui fait vivre;
C'est la but de la vie, et c'est le seul espoir,
Qui, comme un élixir, nous monte et nous enivre,
Et nous donne le cœur de marcher jusqu'au soir;

A travers la tempête, et la neige, et le givre,
C'est la clarté vibrante à notre horizon noir;
C'est l'auberge fameuse inscrite sur le livre,
Où l'on pourra manger, et dormir, et s'asseoir;

C'est un Ange qui tient dans ses doigts magnétique
Le sommeil et le don des rêves extatiques,
Et qui refait le lit des gens pauvres et nus;

C'est la gloire des Dieux, c'est le grenier mystique,
C'est la bourse du pauvre et sa patrie antique,
C'est la poésie ouvert sur les Cieux inconnus !

Charles Baudelaire

ԱՂԲԱՅՆՆԵՐԻ ՄԱԼԸ

Աւա՛ղ, մա՛հն է սփափ, ազրիւրը կենսաբեր,
Նպատակն է կեանքին ու միշտ յոյսն է միակ,
Որ կը գզլիտ որպէս գիծի հըրակայլակ
Եւ կու տայ մեզ ուժ քաղելու մինչեւ գիշեր:

Ձիւնին մէջէն ու եղեւնին մըրկափայլ
Մեր մթամած հորիզոնէն լոյսն է քրքումն.
Մատենին վրայ գրուած սլանդակն է եռյանուն՝
Ուր մարդ կրնայ նստիլ, ուտել եւ քննանալ...

Հրեշտակն է՝ որ մատնեբուն մէջ մագնիսական
Նիւնն է բռնած, հագեզմայլ ձիւքն անըրբագոծ,
Եւ կը փռէ մտինն ազգոս ու մերկ մարդոց...

Փասէն Աստուծոյ. խորհրդալի տարաքն է ան,
Գանձը յեղեին, էին հայրենիքն հեռակարոս,
Եւ աստանդակն երկինքներու տակ անծանօք...

ՇԱՐԼ ԳՈՏԼԵՐ

Թարգմ. ԱՐՄԵՆ ՆՐԿԱԹ

Ներկայ թիւով կը վերջանայ Պատէրբ ծաւուան 100-ամեակին առիթով պատրաստան Նուպար Չարխուսեանի այս դրութիւնը, որ վնասէնայ բանաստեղծին կեանքն ու գործը հանրապետարի բնորդ առաջին լուրջ փորձն է մեր մէջ:

Ապրումով, հասկացողութեամբ ու հայակով պիտի հանուան այս մեծագործեան մեծ հետազոտութեամբ հետեւեցաւ ընթերցողը և տնոր ընծայան վաշիզին համար յայտնեց իր խոր գունակութիւնը: Ճրտեսական գրականութիւնը, Հիւկոյէն մինչև Էլէար ու մինչև Փրէվէր, իր բարեբար ազդեցութիւնը գործան է մեր գրականութեան վրայ և աչքի ինկող համարեալ բոլոր գործերը թարգմանուած են հայերէնի: Հայ թարգմանիչներուն հասնող սեան է յասկացէս Պատէրբի վաստակին առջև:

Պատէրբն կատարուած թարգմանական ջանի մը նմոյշնեց ընկերացուցինը Չարխուսեանի սուսուտարեութեան, ֆրանսերէն լեզուին անծանօթ ընթերցողին գազափայ մը տալու և ծանօթին բազադատութեան առիթ մը ստեղծելու մտքը:

Որքա՞ն լուս պիտի ըլլար, այսօրուան ու վաղուան համար որքա՞ն պատուարեր, կի՞ն մեր հրատարակչական առանքին մէկը առնէր Չարխուսեանի մեծագործութիւնը, միացնէր տնոր թարգմանութիւններն ու բնագրերը և ամբողջութիւնը վերանէր հատարի մը:

Երախտաշատ գործ մը, Երանի մեծարկուցին...

ԱՌԸՆՉՈՒԹԻՒՆՔ

Տանար մ'է բնութիւնն ուր սիւներ կենդանի
Երբեմն անորոշ խօսքեր լսելի կ'ընեն
Մարդը հոն կ'անցնի խորհրդանշաններու անտառի մը մէջէն,
Որանք կը դիտեն զինք մայրամբններով ըմտանի:

Ինչպէս երկար արձագանգներ, որոնք հեռուէն իրար կը խոսնուին
Ազգամուտն ու խոր մըքութեան մը մէջ
Գիշերին եւ պայծառութեան նման ընդարձակ
Բոյրերը, գոյներն ու ձայները իրար կը կանչեն...

Բոյրեր կամ քարմ' ինչպէս միտեր մանուկի,
Քաղցր ինչպէս արնագներ, գերք դաշտեր կանամչ
- Եւ արիշներ' եղծ, հարուստ ու յազքական -

Անեուն բաներու ծառայումն ունեցող
Ինչպէս սաքը, մուշկն, գմուրը ու խունկը,
Որոնք կ'երգեն փոխանցումները մտքին ու զգայարաններուն:

Թարգմ. ՎԱՀԱՆ ԹԷՔԷՆԱՆ ԵԱՐԷ ՊՈՏԼԵՐ

CORRESPONDANCES

La Nature est un temple où de vivants piliers
Laissent parfois sortir de confuses paroles;
L'homme y passe à travers des forêts de symboles
Qui l'observent avec des regards familiers.

Comme de longs échos qui de loin se confondent
Dans une ténébreuse et profonde unité,
Vaste comme la nuit et comme la clarté,
Les parfums, les couleurs et les sons se répondent.

Il est des parfums frais comme des chairs d'enfants
Doux comme les hautbois, verts comme les prairies,
— Et d'autres, corrompus, riches et triomphants,

Ayant l'expansion des choses infinies,
Comme l'ombre, le musc le benjoin et l'encens,
Qui chantent les transports de l'esprit et des sens.

Charles Baudelaire

ԱՌԸՆԶՈՒԹԻՒՆՆԵՐ

Բնութիւնն է կեանքի մեծեան մը, սիւներով,
Որոնք հրքեմն տարտամ խօսքեր կ'արտաբերեն.
Հոն կ'անցնի մարդը խորհուրդի անտաններէն՝
Որ կը դիտեն զինքն ընտանի հայեացքներով:

Նման երկար, հեռաշիրք արձագանգին,
Եւ միութեան մը ծոցին մէջ խոր ու մըռայլ,
Գիշերին պէս եւ յայտն պէս մեծաբաւալ՝
Բարմունք եւ գոյն եւ հնչիւններ կը ճայնակցին:

Տղամերու միսերուն չափ բարձր բոյրեր կան,
Սրիմզի պէս անուշ, մարգի նման դալար,
Ուրիշներ ալ հարուստ եւ ժանտ եւ յոգքական,

Որ իրերուն անծայրածիր ծաւայն ունին.
Կնդրուկին պէս, մուշկին, ինչպէս խումկն ու յամպար,
Որ կ'երգեն խանդն զգայութեան եւ հոգիի...

Թարգմ. ԱՐՄԵՆ ԵՐԿԱԹ


ՇԱՐԼ ԳՈՏԼԵՐ

2. ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ՝ 9-11ԴԴ ԴԱՐԵՐՈՒՆ

Բ.

Ե.— Այրարատ-Շիրակի եւ Տաշիր-Ձորագետի եկեղեցիներն ու վանքերը.— Բազմատունեաց Թագաւորական Հողե-



Կարսի Առաքելոց եկեղեցին (Լուսանկար՝ Պրմ. Միսաէ Եազընեանի)

րուն վրայ՝ շինարարութիւնը ծաղկեցաւ ամենուրեք: Մտքատ Ա. (890-914) կերտել տուաւ Շիրակաւանի տաճարը (Երազշարս) որ զմէքեմէր սրահի տիպար մըն է՝ արեւելեան, հիւսիսային եւ հարաւային ճակատներուն վրայ եռանկիւնածէւ ու շեփորածածկ խորշերով: Մտքատ Ա.ի օրով Երազշարսն էր Թագաւորանիստ կեդրոնը:

Մքատ Թագաւոր (928-953) Թագաւորական աթոռը փոխադրեց Կարս եւ այնտեղ կառուցել տուաւ Առաքելոց եկեղեցին, որ կանգուն է տակաւին, Թուրքերու կողմէ պաշտօնապէս կը ներկայացուի իբրեւ սելճուքեան յուշարձան եւ ներկայիս վերածուած է Թանգարանի (էրկար տունն իբրեւ քաղաքապետական պահեստանոց գործածուելէ ետք): Կարսի Առաքելոցը կը յիշեցնէ Է. դարու Մաստարայի եկեղեցին թէ՛ իր ներքին յօրինուածքով եւ թէ՛ արտաքին ծաւալներով: Բայց արդէն իսկ Համաշխարհիւնները աւելի սլացիկ են եւ նոր դարաշրջանի դրոշմը կը զգացուի:

Ջարնգայի եկեղեցիին յատկապէս ազատ խաչ մը կը ներկայացնէ, ներքնապէս՝ կիսաբոլորակ-քառապսիտ, արտաքինապէս բազմանիստ յենախորշերով:



Խծկոճճ. — Սարգսի եկեղեցին և քանդուած տաճարներու փլատակները (Հումագայիմի հաւաքածոյէն)

Նորանին Հիւսիսակողմը աւանդատուն մը կցուած է: Գմբէթի թճրուկը ութանիստ է, և Նիստերու եզրագծերը մշակուած են ուլորազիծ քանդակներ կրող որմնասիւնիկներով. ծածկը հովհարածն է: Արտաքին այս մաքիփները հետզհետէ ընդհանրացում կը գտնեն: Նոյն ձևի զարդաքանդակային մշակում ունի նաև Խծկոճճի եկեղեցիներէն մէկուն թճրուկը: Ուլորազիծ բարձրացող քանդակներով զարդարուած սիւնիկներ կը գտնենք նաև վրացական շատ մը եկեղեցիներու մէջ: Իսկ գմբէթի հովհարածն ծածկը Հայաստանի մէջ շատ զործածական կը դառնայ: Նոյն տիպի ծածկ ունի Նծկոճճի Սարգսի եկեղեցին, որ միակն է տակաին կանգուն — թէև փլուզման վտանգին ենթակայ — հինգ մատուռներու դեղատեսիլ անսամալէն, զոր Անիէն հարաւարեւմուտք տակաին կարելի էր տեսնել ասկէ 20 տարիներ առաջ (վեր-

ջին տասնամակներուն էր որ թուրքերը ուժանակով օդը հանեցին Նծկոճճի եկեղեցիները): Սարգսի եկեղեցին (1020) թելադրուած է կարծես Անիի Սր. Փրկիչի կառուցողական սկզբունքէն. ան ներքնապէս քառապսիտ է և ունի յորս անկիւնային աւանդատուներ. բայց ներքին բարդ դրոթիւնը առնուած է արտաքնապէս բազմանիստ ծուլի մէջ:

Բիւրակոճի տաճարը թաղածածկ մեծ եկեղեցի մըն է, որու արեւելեան ապսիտը (խորան) ներքնապէս ուղղանկիւն կտրուածք ունի, բան մը՝ որ հայկական ճարտարապետութեան մէջ հազարաչէպ է (կառուցման թուական՝ 920-30ի շուրջ): Իր խոյակներով և պատուհանները եզերող պսակներով՝ Բիւրականը կը կրկնէ Զուարթնոցի կարգ մը մաքիփները:

Նոյն դարաշրջանի կերտուածքներ

ևն Մարտաշէնի երեք եկեղեցիները, որոնցմէ՝ ժամանակագրական կարգով երկրորդն է վախճանաշէն կաթողիկէն (գլխաւոր եկեղեցին, - աւարտած 1029ին)։ Մարտաշէնը եղած է Պահլավունի իշխաններու աւատապետական կեդրոններէն մէկը. այնտեղ էր նաև վահրամաբերդը՝ վահրամ Պահլավունի իշխանին ամրոցը։ Կաթողիկէն կը պատկանի դժբէթակիր սրահներու տիպարին. դժբէթը ունի հովհարածեւ ծածկ։ Իր ընդհանուր յորինումքով եւ արտաքին ճակատներու խուլ կամարաշարքերու դրուժեամբ ան շատ կը նմանի Անիի Մայր Տաճարին, ինչ որ ենթադրել կուտայ՝ որ ան նաև Տրդատ ճարտարապետի գործերէն է։

Ինչպէս ըսինք արդէն, Տրդատ ճարտարապետի զործն է նաև Արգիճալի եկեղեցին (աւարտած Հաւանարար՝ 991ին), որ նոյնպէս կը պատկանի զժմբէթակիր սրահներու շարքին։ Նոյն ընդհանուր կերպարով է՝ Բագնայրի գլխաւոր եկեղեցին։ Կառուցողական այս տիպարին ընդհանրացումը բացայայտ է ուրեմն. ԺԱ. դարէն սկսեալ՝ ան հայ ճարտարապետներու նախախրած ձեւերէն մէկը կը դառնայ։ Այն տարբերութեամբ միայն, որ է. դարու դժբէթակիր սրահները (Պողոնի, Արուս, եւն.) ունէին շատ աւելի երկար յատակապէծ (տակաւին համեմատաբար երկար է նաև Եփրատկանի յատակապէծը), մինչ ԺԱ. դարէն սկսեալ կերպարը կը սկսի դառնալ աւելի համափոփ եւ աւելի կեդրոնամերկ, միշտ պահելով անշուշտ դժբէթակիր շորս որմնամոյթներու խորտիւրը։

Ժ. դարու կէսերէն սկսեալ՝ եկեղեցական-մանական մեծ կեդրոններուն մէջ կը հիմնադրուին կարեւոր եկեղեցիներ։ Անիին շատ մօտ՝ Խաչապետի կամ Հոռոտի երեք եկեղեցիները՝ Սբ. Մինաս (930-953), Սբ. Գէորգ (1013-1021) եւ Սբ. Յովհաննէս (1038) կը պատկանին դժբէթակիր սրահներու կերպարին։ Մականապետի (Հաւանարար՝ 1001) եւ

Կեչառու վանքի Սբ. Գրիգոր եկեղեցին (1008)՝ նոյնպէս։ ԺԳ. դարու հայկական ճարտարապետութեան Հիմնական յատկանիշներէն մէկը պիտի ըլլար վանական այդ եկեղեցիներուն շուրջ սքանչելի անսամպլներու կերտումը (դաւիթներ, սեղանատուններ, գրատուններ, զանգակատուններ, եւ այլն)։

Վանական եկեղեցիներու կերտման տեսակէտով՝ Ժ-ԺԱ. դարերուն աշխոյժ գործունէութիւն ունեցած է նաև Տաւր-Չոր-Չորապետի հայկական թաղաւորութիւնը։ Այդ ժամանակաշրջանին, հոն կը գտնենք արդէն կարեւոր թիւով ամրոցներ, ինչպէս Կախաւաբարը, Ագաւաւաբարը, Կայանը, եւ այլն։ Այստեղ ծնունդ կ'առնեն նաև վանական կեդրոններ, ինչպէս Խորակերտը, Հաղբաւը, Սաճախիճը եւ Հաղարծիճը, որոնցմէ ոմանք կոչուած էին հետադային հռչակաւոր դառնալու (Հաղբաւ, Սանահին)։

Հաղբաւի եւ Սանահինի հիմնադրութեան թուականները, ըստ Գ. Ղաֆառեանի, տասնեակ մը տարիով միայն կը տարբերին իրարմէ (*)։ Երկու վանքերուն ալ հիմնադրումը մերացրուած է Ալուո Գ. (Ողորմած) թագաւորին եւ իր կնոջ՝ Խոսրովանոյ թագուհիին։ Ե՛մ ՆԺՁ (մեր թուականութեամբ՝ 967) թուին շինեցաւ Հաղբաւ, եւ Սանահինն՝ Ժ. սմաւ առաջ քան զՀաղբաւ շինեցաւ ի Խոսրովանոյ թագուհւոյն՝ ի կնոջ Ալուոյ Եաննիսէն - կը զրէ Սամուէլ Անեցիին։

Հաղբաւի Սբ. Նշան եկեղեցին, Հաւանարար Տրդատ ճարտարապետի կողմէ կառուցուած, ըստ դժբէթի արմատազրութեան՝ աւարտած է 991ին։ Սրբաւան յորձանքով կառուցուած. դժբէթակիր սրահ մըն է ան, որու դժբէթը հանգ-

(*) Յնդ այս մտածի փոքր. Ղաֆառեան. Երկ. Մանուկի վանքը եւ Երս. սրբանապարհիւն Անքո (Երևան, 1887) եւ Հաղբաւ (Երևան, 1908), գործերը։



Հաղբատի Ար. Նշան եկեղեցիի արեւելեան ճակատը

լած է որմնամոյթերու տեսք ունեցող անկիւնամասերու վրայ. այդ անկիւնամասերն են նաեւ որ կը կազմեն անկիւնային աւանդատուներու պատերը: Հիսթուսյին եւ Հարուային ճակատները թեթեւցուած են խոր որմնախորշերով, իսկ արեւելեան ճակատը՝ խորշի մը մէջ՝ կը կրէ Աշոտ Գ.ի որդիներ Մմբատ եւ Կիւրիկէ (Գուրգէն) իշխաններու բարձրաբանդակները: Աւելի ուշ շրջանի յաւելումներ՝ գծախառնարար ազնուած են տաճարի ծաւալային միասնականութիւնը:

Հաղբատի Ար. Գրիգոր եկեղեցին կառուցուած է, ըստ արձանագրութեան, 1025 թուականին: Տուեալ ժամանակաշրջանի դարձ է նաեւ Հաղբատի վանքի գրառումը՝ կառուցուած, ըստ Ղաֆադարեանի, Սանահինի գրատունէն առաջ:

Սանահինի վանքի ամենահին . . . եկեղեցին է գմբէթակիր սրահի տիպարին պատկանող Աստուածածին . . . եկեղեցին, կառուցուած . . . Աբաս թագուորի . . . օրով

(929-959): Նոյն ընդհանուր կերպարը ունի նաեւ Աւեճափիկիլ եկեղեցին, Աշոտ Ոյգորմաճի եւ Ոստրովանոյշ թագուորի քանդակով կառուցուած՝ 966 թուականին: Ան Սանահինի եկեղեցիներուն ամենամեծն է: 1060 թուականին շուրջ կառուցուած է նաեւ Գրիգոր Լուսաւորչի բարձրակ եկեղեցին: Ըստ Փրոֆ. Ղաֆադարեանի, ՔԱ. դարու դարձ է նաեւ Սանահինի «Գրիգոր Մազխտրասի մեմարանը»: Իսկ նոյն վանքի գրառան կառուցման համար՝ Ղաֆադարեան կուտայ 1063 թուականը:

2 — Վասպուրականի ճարտարապետութիւնը — Տեսակէ թէ ժ. դարու սկիզբը Արծրունիները Վասպուրականը անջատեցին եւ անտեղ թագաւորութիւն հաստատեցին: Գաղիկ Արծրունի թագաւորի ջանքերով, շուտով Վասպուրականի թագաւորութեան միացուեցան նաեւ Ռշտունիքն ու Մոկաց աշխարհը (Վանայ լճին հարաւային շրջանները), ինչպէս նաեւ Բզնունեաց եւ Աղանունեաց շրջանները (լճին հիւսիս-արեւմտեան կողմը)՝ Մանազկերտ քաղաքով: Մէկ դարու կեանք աննշուա Վասպուրականի թագաւորութիւնը: 1020 թուականին շուրջ էր որ Սեննեղիթ թագաւորը իր երկիրը յանձնեց Բիւզանդացիներուն, փոխարէնը ստանալով Սերաստիա քաղաքը՝ իր շրջակայքով:

Այդ մէկ դարուն ընթացքին շինարարութիւնը լայնօրէն ծաղկեցաւ Արծրունեաց թագաւորութեան մէջ: Մեծցան ու զարգացան Վան, Բերկբի, Ոստան, Արճէշ, Ոլաթ եւ Մանազկերտ քաղաքները: Նորոգուեցան կամ կառուցուեցան կարևոր թուով ամրոցներ, ինչպէս՝ Սիւանը (Վանայ մօտ), Հայքը, Աշոտակերտը, Կառորաց եւ Ալուճապրի քերդերը, Ծաթի եւ Ծամիրաւի ամրոցները, Հաղաւակերտը, Ծաւախը, Ջղմարը, Սմբատաբերդը, Ջոնը, Նկանը, Ծումբը, եւ ուրիշներ: Մնանք առին վանական կեդրոններ, ինչպէս Վարազը, Աղբակի Սուրբ Խաչը, Սուրբ . . . Թաղէտը, Նաքիլը, Աղբամարը, Ապարանքը, և.է.:



Վարազայ վանքի Անրճամասը
և արմանկարները
(Համագրայինի հաւաքածայէն)

որոնցմէ մէկ քանին կոչուած էին մշակութային կարեւոր վարարաններ դառնալու (Նարեկ, Աղթամար, Վարագ)։ Գծարխտարար ծաղկեալ այս շինարարութեան մասին մեր ունեցած տեղեկութիւնները աւելի մատենագրական են, քան քննական-ճարտարապետական։ Առիթ ունեցանք արդէն ըսելու, որ արեւմտեան եւ հարաւային Հայաստանը, գծարխտարար, ունեցած չէ իր թորածանկանը, իսկ այդ շրջաններու պատճառ - ճարտարապետական քննարկումը ներկայիս շատ դժուար է, իրենց ներկայ պատկանելիութեան եւ վերջին տասնամեակներուն ընթացքին կատարուած քանդումի աշխատանքներուն հետեւանքով։ Կառուցողական արուեստի անպատանելի զանձեր ենթակայ են վերջական կորստեան վտանդին, կամ ի սպառ անէպած են արդէն։ Վասպուրականին նման, Տարօնի աշխարհն ալ հինէն ի վեր ունեցած է հուշակար ամրոցներ (Ողական, Եղանցքերդ, Սասնայ բերդ, Կիթառիմ, Եւայն)։ շատ հաւանորէն՝ պատմական տուեալ փամօնակալը զանի ծնունդ են Սուրբ Կարապետը (Ինճակնեան կամ

Գլակայ վանք, կառուցուած հնա-քրիստոնէական - հաւանարար Լուսաւորչաւին - սրբավայրի մը վրայ), Առաքելոց եւ Սբ. Յովհաննու վանքերը, Քերեւա Վանքիքը, եւ ուրիշներ։ Գծարխտարար, սակայն, մատենագրական հասակոտոր տեղեկութիւններէ բացի, այս բոլորին չտաին ներկայիս ոչինչ գիտեմք։

Հայոց պատմութենէն կ'իմանանք, որ «Սենեքերիմ թագաւոր վերաշինեց Վարագայ վանքը» - ուր եւ ուրեմն գոյութիւն ունէին եկեղեցական աւելի հին շինութիւններ, Լինչ կ'ըսէ (տես «Armenia», հար. Էրկրորդ, Վանայ վերաբերեալ զրուիք) թէ Վարագայ վանքի եկեղեցին ունի ընդարձակ դաւիթ մը, որ լայն ու քանդակագործ դուռով մը կը յարաբերի բուն տաճարին հետ. տաճարին ներքնամասը, ըստ իրեն, Սբ. Հովհաննէն կը յիշեցնէ իր չորս աստիճաններով եւ անկիւնային շորս խորշերով։ Ներքին այս կառուցը Աղթամարի Սբ. Յայկինն է նաեւ, եւ աւելի հաւանական է անշուշտ, որ Վարագը կառուցող (կամ վերակառուցող) ճարտարապետը իրեն շատ աւելի ծօտիկ Աղթամարէն ազդուած ըլլայ, քան հեռաւոր Հովհաննէնէն։ Թէ՛ տաճարը եւ թէ՛ դաւիթը, ըստ Լինչի, գմբէթակիր են եղած։ Այն իրողութիւնը որ Սենեքերիմ թագաւոր եւ իր խոյնոջ թագուհին թաղուած են գաւիթին տակ՝ կը փաստէ որ Լինչի նկարագրած անսամպլը Սենեքերիմի վերակառուցել տուածն է, եւ ոչ՝ արդիւնք հետագայ յաւելումներու. ան ապացոյց մըն է նաեւ ա'յն իրողութեան, որ, գէթ սկզբնական շրջանին (Թ.-ՄԱ. դարեր), հայ եկեղեցիներու դաւիթները եղած են տոհմային դամբարաններ։ Ներկայիս՝ Վարագէն կը մնայ մօտաւորապէս Լինչի նկարագրածը, բայց կիսաւեր ու բոլորովին անխնամ վիճակով։ Վերջերս ձեռք բերուած լուսանկար մը ցոյց կու տայ շատ հետաքրքրական եւ գունազոյզ որմնակարներ (սուրբեր), մնացորդները Վասպուրականի հայկական քաղաքակրթութեան։ Իրրեւ թրքական քաղաքա-



Աղթամարի Ար. Խաչ եկեղեցին

կրթութեան նպատեղ վարադին՝ դա-
-իթին մէջ կապուած կովեր կը տես-
նուին:

Վասպուրականի ամենանշանաւոր
եկեղեցին է անկասկած Աղթամար կղզիի
Սուրբ Խաչը, երբեմնի Ռոտան քաղաքին
(այժմու Կեւաշը) դիմաց: Թովմա Արծ-
րունին եւ իր պատմադրութիւնը շարու-
նակողը մանրամասն կը նկարագրեն Գա-
զիկի կարգադրութեամբ Ռոտանի եւ
Աղթամար կղզիին մէջ կատարուած շի-
նարարական աշխատանքները՝ այդ մա-
մանակաշրջանի (Ժ. դարու առաջին ե-
րեսնամեակ) հռչակաւոր ճարտարա-
պետներէն՝ Մանուէլի կողմէ: Գազիկ
իւ արքունիքը Աղթամար փոխադրելով՝
այնտեղ կառուցել կու տայ պալատական
ամբողջ Բամփիլեւ մը, հոյսկապ նաւա-
հանգիստ մը եւ Սուրբ Խաչ տաճարը:
Կղզին կը պատուի պարիսպներով՝ կը
հիմնադրուին պարտէզներ եւ այգեա-
տաններ: Նմանօրինակ շինարարութիւն-

ներ տեղի կ'ունենան նաեւ Ռոտանի մէջ:
Պատմագիրները մեծ հիացումով կը
խօսին մանաւանդ՝ խնճոյքի տաճարին
մասին, որ ունէր զկուսարակից խորան-
ներ, տեղապանոյն անկիւններ, լուսա-
ճաճանշ, սկեզարդ եւ երկնայարկ զըմ-
բէթներ, եւայլն:

Սուրբ Խաչ եկեղեցին ո՛չ միայն
Վասպուրականի, այլ ընդհանրապէս
հայկական ճարտարապետութեան զար-
դերէն մէկն է: Հինէն ի վեր դիտական
եւ զեղարուեստական ուշիտութիւն լաւ
ծանօթ ըլլալուն կը պարտի ան հաւա-
նարար՝ ցարդ դիտումնաւոր քանդակի
իւ նիւթարկուած ըլլալը: Վերջին տա-
րիներուն, ուսումնասիրական զանազան
աշխատութիւններ նուիրուցան անոր
թէ՛ միջազգային մամուլին մէջ, թէ՛ ա-
ռանձին հատորներով (*):

Եկեղեցին (915-921) քառասպիտ -
խաչաձեւ է թէ՛ արտաքինապէս, թէ՛
ներքինապէս, բայց ապիտոներուն միջև
զետեղուած զլանաձեւ խորշերը նաոս-
պայթող տիպին մօտեցող կառոյց մը
կու տան անոր: Արտաքին եզրագիծը
բաւական հաւատարմօրէն կը հետեւի
ներքին սահմաններուն, այսպիսով ոտա-
նալով շէշուուած մասնատուածութիւն
մը: Ուրեմն, Հռիփսիմէի տիպին մօտե-
նալով հանդերձ, շունի անոր արտաքին
ծաւալային միասնականութիւնը: Ա-
րեւմտեան (մուտք) եւ արեւելեան (խո-
րանը եւ կողմնակի երկու փոքր աւան-
դատուններ) խաչաթեւերը ունին աբ-
տաքնապէս ուղղանկիւն եզրագիծ:
Մուտքի խաչաթեւին կպած զանգակա-
տունը փի. դարու յաւելում մըն է:
Գմբէթի թմբուկը 16անիստ է:

Մանօթ են Աղթամարի որմնակաբ-
ները, բայց հռչակաւոր են մանաւանդ
արտաքին ճակատները զարդարող ճոխ
եւ ալլազան քանդակները (Գազիկ թա-

(*) Ի մասնաւորի՝ Իպլիբոցու - «Die Ki-
sche von Aghtamar» եւ Ո. Տէր Ներսէսան, - «Agh-
tamara. Church of the Holy Cross» - Harvard Univer-
sity Press, 1965:



Ազրամար, - քանդակներու մանրամասնութիւննիր

զաւորը՝ եկեղեցիի maquettep ձեռքին, սուրբեր, Աւետարանին դէմքեր ու զէպքեր, որքատունկի եւ որսի տեսարաններու զօտի մը, թռչուններ, պատուհաններու եւ որմնախորշերու նրբաքանդակ պատկերներ, երկրաչափական մաքիմներով ծոփորներ - frises -, եւայլն)։ Փրոֆ. Ս. Տէր Ներսէսեանը իր գրքին մէջ կու տայ անոնց մանրամասն նկարազրուեթիւնը։ Քանդակներուն կողքին կը գտնենք նաեւ արձանազրուեթիւններ եւ անուններ։ Սուրբերը, ծոփորներն ու պատկերը ընդհանրապէս Հարթաքանդակ են, իսկ թռչուններ եւ կենդանիներու գլուխներ ներկայացնող կարգ մը ստանձին քանդակները՝ շարժրաքանդակ։

Շատեր արաքական ազդեցութեան վերադրած են քանդակներու այս տեսութիւնն ու այլազանութիւնը՝ զի մը ըստ ճոխ Հայ եկեղեցական կառուցածքի մը Համար, կրնայ ըլլալ պէտք չէ՝ մտնուլ որ Քասպուրականը զի մը աւելի մօտ էք արաքներուն, զի մը ա-

ւելի կանուխէն շիման մէջ մտած անոնց հետ, քան Հիւսիսային Հայաստանը։ Սուրիկովսկի զի մը աւելի արեւելք կը նայի։ Այլթամարի քանդակներուն դիմաց՝ ան կը վերջիչէ Հիւսիսային Իրանը, մինչեւ իսկ հնդկական փղոսկրի փորագրութիւնները։ Նմանողութիւններ, ազդեցութիւններ նոյնիսկ, միշտ ալ կրնան գոյութիւն ունեցած ըլլալ։ Սակայն պէտք չէ նաեւ մտնուլ այն իրողութիւնը, որ տակաւին նոր անկախութեան տիրացած Հայ թագաւորները բնական ձգտում մը ունէին՝ իրենց պալատներու եւ եկեղեցիներու ճոխութեամբ ու փարթաւութեամբ դերազանցել Հին շինութիւնները։ Եւ պալատական կերտումներու շեղութիւնը կ'ազդէր եկեղեցական ճարտարապետութեան վերայ։ Երեսոյթը մինք տեսնուց նաեւ Արիի մէջ։ Ասկէ՛ շեջուած զարդացումը քանդակներու, եւ որմնակարներու, թէ պէտք չէ մտնուլ նաեւ, թելպէս դիտել կու տայ Թալատրեանը («L'architecture arménienne», էջ 152)։ Եւ Այլթամարի քան-

զակներն անգամ ենթակայ են մեծ ժխտորհերու հայկական ճարտարապետական սկզբունքին. պատերուն վրայ անոնց տեղաբաշխումը մասնաւոր դասաւորութիւն մը չունի, շէտուած համալսարաններէն ենթակայ չէ, այլ խօսքով՝ չի մասնատել որմը, որ կը մնայ հիմնական միասոր՝ իր ամբողջութեան մէջ:

Է. - Հայկական ճարտարապետութեան Սիւնիքի դպրոցը - Թէեւ Սիւնիքի անջատուող Բագրատունիներէն իբրեւ առանձին Բագրատունիներ՝ 973ին միայն տեղի կ'ունենայ (Մտրատ Ա., Բագրատ Սիւնեաց կաթ Կապանի, - 973-998), սակայն այդ ամբողջութեան ու ազատատենչ լեռնաշխարհը, իր մարտունակ իշխաններու ղեկավարութեամբ, բաւական աստեղծ ի վեր արդէն իսկ կիրանկախ կեանք մը կը վարէր: Եւ այս պայմանները նկատի ունենալով՝ դարմանալի չի թուիր, թէ Սիւնիքի մէջ ճարտարապետական վերածնունդը կանխած ըլլայ Այրարատ - Շիրակի, Տաշիր - Ձորագետի եւ նոյնիսկ Վասպուրականի համապատասխան վարժեցմանը: Թ. դարու կէսերէն իսկ, հայ ճարտարապետական (սկզբնորու ստանդաներու վրայ, Սիւնեաց վարպետները կառուցողական արուեստի վերածնունդին հիմերը դրին:

Իր ճշակական ճարտարապետութեան Սիւնիքի դպրոցը արժէքաւոր աշխատատիրութեան մէջ (Երևան, 1960), ճարտ. Ս. Մնացականեան կը վերլուծէ պատմական ժամանակաշրջանը եւ պատմա-գեղարուեստական ա'յն տուեալները, որոնք Սիւնիքի վերածննդեան միջավայրը կազմեցին, կը կատարէ յուշարձաններու դասաւորութիւնը ըստ յատակագծի եւ ձեւերու, կը քննէ անոնց գեղարպետական եւ կառուցողական արժանիքները եւ կու տայ յուշարձաններու մանրամասն նկարագրութիւնները եւ չափադրութիւնները: Ան է նաեւ որ Սիւնեաց դպրոցին մասին կը խօսի «Ակնարկ հայ ճարտարապետութեան պատմութեան» հատորին մէջ (էջ՝ 181-186): Հետագայ մանրամասնութիւնները կը պարտինք

Մնացականեանի ուսումնասիրութիւններուն:

Սիւնիքի կառուցուածքներու առաջին առանձնախտութիւնը քարնդէն facade-ին մէջ կը կայանայ: Ձուրկ ըլլալով բարձրորակ տուֆերու տեղական հանքավայրերէ, Սիւնեաց վարպետները պատերը յաճախ շարած են ճեղքուած եւ ոչ լուր յղուած պապայթով (որմաքար), կանոնաւոր մշակուած տուֆը վերապահելով շէնքերու հանգուցոյն մասերուն (գոթեթակիր կամարներ, թմբուկ, ապստոներու անկիւններ, եւ այլն): Ասկէ՝ finissage-ի պահասի ա'յն տարրինակ տպաւորութիւնը, զոր կը թողուն շրջանի կարգ մը յուշարձանները (օրինակ՝ Սիւնիքի եկեղեցիները), երբ մանաւանդ այդ վարպետներէ Արարատեան դարձավայրի եկեղեցիներու սրբատաշ որմերու գեղարուեստական վայելչութիւն: Բայց ասիկա ընդհանուր եւ բացարձակ երեւոյթ չէ. հոն՝ ուր հնարաւոր է եղած, երեսպատման սրբատաշ սալերը գործածուած են (Շոգազաւանք, Գեղեկամք, Տաթևի Մայր եկեղեցի, Յաղապար, մտամբ՝ Կարաուս, եւ այլն):

Գարի առանձնախտուկ թէքերը, արդիւնք հնարաւորութեանց սահմանափակումներու, Սիւնիքի ճարտարապետները մղած է ստեղծելու նոր շինարարական տեսքեր: Եւ Թ. դարու վերջերուն իսկ, Սիւնիքի մէջ կը հանդիպինք սլաքաձեւ կամարներու: Իսկ ծածկի կղմորները քարէ սալերով փոխարինելու առաջին փորձերը է յայտ կու գան նոյնպէս՝ աշխարհագրական այս շրջանի կառուցուածքներուն մէջ:

Հնագոյն կերտուածքները տակաւին կը պահեն շեփոյնները (troispea) իբրեւ գոթեթակիր դրութեան հիմնական շինարարական (Հայրապետ, Սեւանի Աստվանց - կամ Աւար Կարապետ - փոքր եկեղեցի, Ալուշալու, եւ այլն): Բայց այլ կառուցուածքներու մէջ՝ կիրարկուած է արդէն առաջատարին (pendentifs) դրութիւնը (Սեւանի Աստուածածին մեծ

եկեղեցի, Գարկուիի եկեղեցի, Տաքե, եւ այլն): Շեփորներու աւելի երկարատեզործածութիւնը ինքնին՝ բացատրելի է ոչ բարձրորակ քարերու աւելայութեամբ:

Միւսիքի կառուցուածքներն ալ կը կրկնեն Ոսկեզարու հիմնական ձեւերը՝ զանոնք հեազհետէ աւելի կատարելագործելով, համեմատութիւնները բարեփոխելով եւ զարդային մաքիմները զարգացնելով: Հիմնական ձեւերը հետեւեալներն են.

ա) Քառապսիտ-խաչածնե եկեղեցիները, որոնք ներկայացուած են Հայրավանքով, Սեւանի երկու եկեղեցիներով (Առաքելոց եւ Աստուածածին), Հալապատի եկեղեցիով, եւ այլն: Հայրավանքը մեր հազրուակու աշն եկեղեցիներէն է, որոնց արտաքին եզրագիծը, որ կորագիծ է, նոյնութեամբ կը կրկնէ ապսիտներու ձեւերը: Ապսիտներու ներքին անկիւնային մասերը կը ծառայեն իրիւր որմնաձոյթեր՝ դմբէթի կրման համար: Հարաւարեւելեան անկիւնին կցուած է փոքր ասանդատուն մը: Արեւմտակողմը կը զտննէ ընդարձակ դաւիթ մը, որ ժի. դարու յաւելում մըն է: Եկեղեցիին պատերը շարուած են ճեղքուած որձաքարէ. դաւիթին որմերը սրբատաշ են: Գմբէթարդերը, շեփորները եւ թմբուկը կառուցուած են լաւ մշակուած տուֆէ:

Սեւանի երկու եկեղեցիները (Իշխանուհի Մարիամի պատուէքով կառուցուած 874ին) արտաքինապէս ուղղանկիւն եզրագիծ ունին: Փոքրը՝ Առաքելոց կամ Սուրբ Կարապետի եկեղեցին՝ հարաւարեւելեան կողմը մէկ ասանդատուն ունի. մեծը՝ Աստուածածին եկեղեցին՝ խորտնին շուրջ ունի երկու սենեակներ, որոնցմէ հիւսիս-արեւելեան կողմինը դուրսէն միայն մուտք ունի: Առաքելոցի թմբուկը ունի շեփորային խարխիւ, իսկ Աստուածածինը՝ առաջատային: Աստուածածին եկեղեցիի արեւմտակողմը գտնուած է ընդարձակ դաւիթ մը կամ դահլիճ մը՝ որ զարդարուած է եղած


փայտէ քանդակազարդ խոյակներով: (*) Հացառատը ունի երեք կիսադաճած եւ մէկ (արեւմտեան) ուղղանկիւն ապսիտ, արտաքինապէս ասնուած բուխ անկիւններով խաչի մը մէջ: Լուսամուտներու պատկերը ունին հետաքրքրական զտրդաքանդակներ (կապուած է. դարու զարդաձեւերուն):

բ) Անկիւնային չորս աւանդատուներով ստացուած պարփակուած խաչի դրուքիւմը կը գտնենք, փոքր տարբերութիւններով, Շողագավանքի (877-886), Գնդկամէի (936), Վանկամի (903), Կոքավանի (Ք. դարու վերջ), Մաքենացոց վանքի, եւ Մասամբ՝ Ուրտնուանի (1006), Մարտաց անապատի եւ Յաղագմարի կեդրոնադմբէթ եկեղեցիներուն մէջ:

Շողագավանքը կառուցուած է կանոնաւոր մշակուած զորագոյն տուֆով: Ձորս աւանդատունները օժտուած են արեւելեան խորաններով: Հետաքրքրական են արեւելեան, հիւսիսային եւ հարաւային ճակատներու որմնախորշերը, - մէկ կեդրոնական երկիւստ (անկիւնածեւ) եւ կողմնակի երկու կիսադաճած որմնախորշեր: Մասաւորապէս նոյն կառոյցը ունի նաև Գնդկամքը, ուր ասկայն արեւմտեան կողմի աւանդատունները կը պակսին եւ որմնախորշերը (երկու հաս իւրաքանչիւր պատի վրայ) անկիւնածեւ են միայն Գոթեվանքի, Վանեվանի, Մաքենացոց վանքի եւ Մարտաց անապատի մէջ՝ անկիւնային աւանդատունները հապէս մաս կազմած են կառուցուածքի միասնական ծաւալին եւ արտաքինապէս գրեթէ ոչնչով կ'արտայայտուին:

գ) Ճառագայթոց (Հռիփսիմէի) տիպարիմ կը պատկանի Ալուշալու գիւղի

(*) Այս խոյակներէն մէկ-երկուքը մերկայիս ցուցադրուած են Երևանի Պատմա-քաղաքագիտական թանգարանին մէջ:



Ցաղագճարի եկեղեցին
(Լուսանկար՝ ճարտ. Վ. Խաչատրեանի)

եկեղեցին, Կոշտ պազաթով կառուցուած այս եկեղեցին (միակառուր եւ բարձրորակ քարերու բացակայութիւնը անկասկած դէր ունեցած է անոր փլուզման մէջ) ունեցած է թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին ծեփ, - բան մը, որ եզակի երեւոյթ է Հայկական ճարտարագիտութեան մէջ: Որմնախորշերը ունին անկիւնաձեւ կտրուածք. իսկ անկիւնային սենեակները քառանկիւն են՝ հիւսիս-հարաւ ուղղութեամբ երկարած:

Գ) Գմբէթակիր սրահներ են Նորաուսիք եւ Բաարիկետն գիւղի եկեղեցիները, երկուքն ալ Սեւանայ լճին արեւմտեան ափին ժօա՝ Գեղարքունեաց գաւառին մէջ: Նորատուար կառուցուած է Թ. դարու վերջերը, Բաարիկետն՝ քիչ մը աւելի ուշ: Վերջինին մէջ աւելի շեշտուած է յուշարձանի ընդերկայնական չափերը սեղմելու եւ աւելի համամ-

փոփ կառոյց մը ստեղծելու ձգտումը: Պատերը ունին եռանկիւնաձեւ որմնախորշեր՝ չորս (Նորատուար) կամ առ նուազն երեք (Բաարիկետն) ճակատներու վրայ, ք տարբերութիւն է. դարու Արուսի եւ Պաղինի, որոնց արեւելեան պատերը միայն որմնախորշեր ունէին: Երկու եկեղեցիներուն ալ արեւելք-արեւմուտք երկարութիւնը շատ աւելի կըրճատուած է՝ բաղդատուած Նոյն դարաշրջանի գործ Շիրակաւանի տաճարին (տես էջ 76):

Նոյն ընդհանուր կերպարին պատկանելով հանդերձ, իրենց երկայնական չափերու առաւել կընստմամբ եւ արեւելեան որմնածոյթերու վերացմամբ, նոր տիպարներու փնտրուող կ'ստեղծեն վառնավանկի (911) եւ Գառնավանկի (Փ. դարու սկիզբներ) նախափորձերը: Արեւելեան որմնախորշերու կրճան քերը

այստեղ վստահուած է արեւելեան ապստի (խորան) զէպի կեդրոն յառաջացող եզրամասերուն :

ե) Ամրոզըսվին պարփակուած խաչի դրուքիւնը (նիւքիմ քառաքնու) կը զըտնենք Քարկիզիի Եկեղեցիին եւ Յաղացֆարի Սր. Կարապետ ժառուտին մէջ : Այստեղ կեդրոնական մոյթերու դեր կը կատարեն, զմբէթը կրելու տեսակէտէն, անկիւնային շորտ աւանդատուներու (բոլորն ալ արեւելեան խորաններով օժտուած) պատերուն զէպի տաճարին կեդրոնը յառաջացող անկիւնները, որոնք մշակուած են համապատասխան որմնասիւններով : Ամրոզըսվինը առնուած է արտաքին թառանկին հղբադի մէջ : Քարկիզը կառուցուած է 911ին, Յաղացբարի Սր. Կարապետը՝ 1041ին. վերջինը եռանկիւնածեւ զոյգ որմնախորշերուն իր արեւելեան եւ հարաւային ճակատներուն վրայ : Իր աւանդատուներով, կեդրոնական լայն խորանով, ինչպէս նաեւ ներքին ծաւալային կառոյցով (որը արտաքնապէս կ'արտայայտուի զմբէթէն մեկնող երկշանջ խաչաթիւերու զրուքեամբ), Քարկիզի տիպարը զուսացուցած է ըստ երեւոյթին եւ ճիստակոյն պահանջները, եւ կառուցողական տոկոնուքեան անհրաժեշտ պայմանները : Ան զարձած է հետզհետէ աւելի դործածական ձեւ : Մօտաւորապէս նոյն յորինուածքը ունին Սանահինի, Հաղարծինի եւ Մակարաւանքի կարգ մը եկեղեցիները : Ասիկա կը գիտատէ որ Այրարատ-Շիրակի կառուցողական վերածնունդը կանխող Սիւնիքի զարդը զազափարներու ձեւեր կըցած է փոխ տալ անոր (թէն, հետադային, իր կարգին ազդուած է անկէ) :

զ) Կեդրամական մայրերով տաճարներ, - Տաքեւի տիպարը. - 885-906 թըւականներուն կառուցուած Տաքեւի վանքի մայր եկեղեցին (հաւանաբար Սր. Պողոս-Պետրոս) կը յիշեցնէ Գոյեանէի եւ Մրէնի Ոսկեղարան եկեղեցիները (զմբէթակիր պաղիթներու ամփոփ-



Տաքեւ, - մայր եկեղեցիի մայրերէն մէկը (եղիմակի հաւաքածոյէն)

ւած տիպար), այն տարբերութեամբ՝ որ արեւմտեան մոյթերը այստեղ փոխարինուած են արեւմտեան աւանդատուներու պատերուն անկիւնային մասերով : Եթէ ուրեմն չըլլային արեւելեան երկու առանձին մոյթերը, Տաքեւը կանխած պիտի ըլլար Քարկիզը՝ համառուն տիպարի ստեղծման մէջ : Ենթարկուած ըլլալով սելճուցներու առպատակութեանց եւ երկրաշարժներու աւերին՝ Տաքեւի վանքը բազմաթիւ վերանորոգումներունցած է, յայց անոր հիմնական կառոյցը մնացած է նոյնը : Ներկայ աւերակ վիճակը արդիւնքն է 1931-ի կործանիչ երկրաշարժին : Վանքը երկար դարեր եղած է Սիւնեաց եպիսկոպոսութեան կեդրոն եւ ունեցած է մշակութային եւ վարչական թեղուն գործունէութիւն :

Պաղալթէ մեծ ու սրբատաշ սալերով երեսպատուած Մայր Տաճարը ունի 31x20,5 մեթր արտաքին չափեր (քա-

աանկիւն եղբայրի) : Արեւմտակողմի երկու սենեակներէն զատ՝ կեդրոնական խորանին շուրջ ալ կը գտնենք երկու աւանդատուներ : Արեւելեան երկու մոյթերը տարբեր բարձրութեամբ կամարներով մէկ կողմէ կը միանան տաճարի ընդերկայնական պատերուն, միւս կողմէ՝ արեւելեան աւանդատուներու պատերուն : Զուսպ ու տպաւորիչ է անոր ներքնամասը, մասնաւորաբար իր արեւելեան բաժնով՝ է. զարու մեծ իրազորածումները յիշեցնող : Համեմատաբար աւելի հարուստ մշակում ունին արտաքին նուրբերը, ուր կը զուգակցին է. դարու զարգամոթիքներն ու նորաստեղծ քանդակածները : 930 թուականին, ներքին պատերը ծածկուած են որմնակարներով, որոնցմէ մաս մը մինչեւ այսօր ալ կարելի է տեսնել :

է) Այլ տիպարներ եւ կերտուածքներ. - Դ. - 2. զարեբու միանալ թաղածածկ դահլիճներու տիպորը կը կրկնեն Մաքենոցաց վանքի, Շողազավանքի եւ Տաթեւի փոքր, երկրորդական հկեղծցիները, ինչպէս նաեւ Բղեմալ նորավանքի մատուռը (ԺԱ. դար) : Իր հարթաքանդակներով՝ Բղեմալ նորավանքը շատ կը յիշեցնէ Աղթամարի զարգամոթիքներն ու քանդակները :

Ճարտ. Մնացականեանի համաձայն՝ Սիւնիքը միւս շրջաններէն հնութեան

կարգը կը իւլէ նաեւ կրօնական-դամբարանային կառուցուածքներու շարք մը այլ տիպերու ձեւաւորման մէջ : Ժ. դարուն՝ այնտեղ կը հանդիպինք արդէն գաւթնաքար, որոնք ուստապետական եւ կրօնապետական վերախաւերու դամբարաններ էին միայն, սկզբնական շրջանին (Մաքենոցաց վանք, Սեւան, Կոթավանք, Գնդեվանք, եայլն) : Սկզբնական պարզ զաւիթները փայտածածկ էին, կամ քարաշէն-թողածածկ : Բայց սովորութիւնը կ'ընդհանրանայ, եւ արդէն իսկ 1038ին կը կառուցուի Հոռոմոսի զաւիթը, շատ աւելի կատարելագործուած, քան Սիւնիքի նախափորձերը, ժողովրդական բնակարաններու ծածկերը յիշեցնող քարաշէն վերնամասով : Իրենց աստիճանական զարգացումով՝ զաւիթները կոչուած էին հետագայ դարերու մեր ճարտարապետութեան զարդերը զառնալու :

Սիւնիքի մէջ կը հանդիպինք նաեւ կոթողներու, յաւաքներու, յաւաքներու եւ երջարկ դամբարան-եկեղծցիներու հնագոյն օրինակներէն ոմանց (Վահանավանքի եւ Յազազարի դամբարան-եկեղծցիներ) : Ճարտարապետական այս յղացումն ալ պիտի իւրացուէր ԺԱ. դարու Անիին կողմէ՝ Ծնունդ տալով Հովիտի հոյակերտ դամբարան - եկեղծցիին :

Հ. Տ.

(Շար. նախորդ քիււն եւ վերջ)

Կղճարներ

«ԶԷՐ ՀԱՍԿՑԵԼ ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ»

Իր գրական շնորհներէն կամաւորաբար մերկացած եւ կարծիք աւազանին մէջ ի ծերութեան մկրտուած մեր Հանրածանօթ Հերոսը, Կոստան Զարեան, «Անցորդը եւ իր նամբան» անուն իր առաջին ծաւալուն գործին մէջ, ինչպէս ծանօթ է, բաւական տեղ յատկացուցած է իրական զէպօքերու եւ զէմօքերու:

Ի միջի այլոց տեղադրւած է նաեւ Յովհ. Թումանեանի ի Պոլիս կատարած այցելութեան եւ անուանի բանաստեղծին առնչակից մէկ-երկու կարեւոր մանրամասնութիւններու: «Անցորդը եւ իր նամբան» հիւրընկալած «Հայրենիք» ամսագրի 1926 Նոյեմբերի թիւին մէջ՝ Զարեան կը գրէ.

«Մի քանի օր յետոյ, յայնքի «Սիլոզոստան», ի պատիւ բանաստեղծին ցերեկոյթ արբուեցաւ ու մէկը կարդաց Օշականի նաւը: Ձեռագիրը անընթեռնելի էր, քննադատականը սեղմ եւ անողոք: Մի ժամ տնեց: Բանաստեղծը կրակի վրայ էր նստած: Պատասխանեց: Խօսեց անցեալի մասին, ապագայ յայնքի, նսնացաւ, համեստութեան բուրվառների թօնեց եւ այլևս «Արուեստի տան» մասին խօսել չարեաւ:

Ուրեմն քննադատ մը կայ եւ քննադատին «սեղմ եւ անողոք» վճիռներուն տակ ինկած բանաստեղծ մը, որ պաղարիւնը չէր կրցած պահել, «կրակի վրայ էր նստած», որ շարունակեց կրակի վրայ մնալ նոյնիսկ զընդարտականին աւարտէն ետք, ու իր պոստսիանը արժանաւոր պատասխան մը չեղաւ, «նսնացաւ, համեստութեան բուրվառներ ճօնեց», ու Հարեանին ուժգնութենէն ցնցուած՝ դադարեցաւ խօսել անկա՛մ իր փայփայած «Արուեստի տան» մասին:

Իր կարգացածը Հազիւ Հասկցող ընթերցողն իսկ եղբակացուց արդէն, թէ թղթակցութեան ոճով տրուած վերի պատկերին մէջ Զարեան չէզոք է, պա՛րզ է, «սեղմ եւ անողոք» բաներ ըսող քննադատին վճիռներուն լուեխայն բաժնեկից է ու տակնուվրայ եղած բանաստեղծին դաշարումներուն շարախինդ հանդիսատես:

Մենք գիտենք սակայն, որ իր տեսածին ու դատածին ու արձանագրածին Հաւատարիմ մնալու նախանձախնդրութենէն բոլորովին զուրկ մարդու մը հետ է մեր դարձը, միշտ ինքն է, «մաքրաջրուածը», որ գրչի մէկ Հարուածով կրնայ շրջուած ձեւով մը ներկայացնել իր նախկին վկայութիւնը, նախկին քնորոշումը, Հաստատումը: Նոյնը ըրած է Օշական-Թումանեան միջադէպին առիթով եւս: Ահա թէ ինչպէս —

Լեւոն Հախվերդեան «Մի երեկոյ կատան Զարեանի հետ» խորագրով պատկերներն մը ստորագրեց այս տարի, ուր Զարեան կը յայտարարէ.

«Երբ Թումանեանը Պոլիս եկաւ՝ հոմ էի: Մի երեկոյի Օշականը համդէս եկաւ, չէր հասկացել բանաստեղծին: Անշուշտ: Վերջում Թումանեանը խօսեց, լաւ էր խօսում»:

Միշտ հոյն մարդուն հետ ենք. «Ինքն է եւ ինքը չէ... Տակնուվրայ եղած մի խեղճ, մի վեհերաս, ճգնուած, անհատացած մի էութիւն», այժմ՝ որ շտրամանկ է. գիտէ՛ ի՞նչ պէտք է ասել, ե՞րբ եւ ո՞րք»:

ՍՊԱՍՈՒՄ ԵՄ

Բանաստեղծութեան նոր երևոյթներուն, նորարարութեան եւ յարակից խնդիրներու մասին Երեւանի «Գրական թերթ»ը այս ամառ չըջարեութեան հանց հարցարան մը, որուն մէջ կայ նաեւ սա յօդուածը:

«Ո՞վ է ձեր սիրելի քանաստեղծը եւ ինչու»:

Ս. Մարինեան տրուած այս հարցումին պատասխանած է լակոնական սա ոճով:

«Հարցը ես ընդունում եմ իր քացարձակ ճշմանութեամբ: Եւ եթէ խօսքը վերաբերում է սովետախայ քանաստեղծներին, ապա ... սպասում եմ»:

Մարինեանի դժուարահասնութիւնը անհիմն չէ:

Հայ մեծ բանաստեղծներուն՝ Նարեկացիին, Սայաթ-Նովային, Դուրեանին, Մեծարեացիին, Վարուժանին ու Սիամանթոյին, թէքէններն ու Ձարենցիին ասանդներուն հիմամբ իր չափանիւնները կազմած ս'եւէ մարդ այսօրուան իրականութեան դէմ նոյն եզրակացութեան պիտի յանդէր եւ իր ամբողջ իմաստով պիտի ըմբռնէր Մարինեանի անձկալի սպասումը:

Բայց իր «քոչարձակ նշանակութեան» հաւատարիմ եւ սպասումին համար վստահելի հիմքեր ունեցող մարդ դժուար թէ կարելի ըլլայ համարել Մարինեանը, երբ աւարտէք ընթերցումը: Արիչներուն առիթով թոյլ տուած շաղկապները ամբողջովին կը խախտէ իր դժուարահասնութեան հաշտին մեր մէջ ստեղծուած համարումը: Յիշեցնելէ ետք, որ Քուսանեան, իր իսկ հաստատումով, հետեւած է Յովհաննիսեանի դպրոցին, Մարինեան կը զրէ:

«Ի դէպ, Խառակեանը նոյնպէս իրեն համարում էր Յովհաննիսեանի գրական զարգացի հետեւորդ: Նշանակում է, արդեօք, թէ անկրկնելի թուամանանը կամ հանձնարեղ Խառակեանը նորարարներ չեն: Ի հարկէ՝ այն»:

Քուսանեանը ընտրող բառը դեռ հանդուրժելի է: Բացարձակ նշանակութեան մը չունի «անկրկնելի»:

Անկրկնելի բանաստեղծները սակաւ չեն մեր մէջ եւ ուրիշներուն: Անկրկնելի է Քուսանեան: Բայց Խառակեանի անունին դիմաց դրուած «հանձնարեղ» ի տես մարդ ուղղակի կը տառապի: Առաջին հերթին պատկազիրին հաշտին:

Եւ Խառակեանը հանձնարեղի պատմուածանով մեծարողը այն քննադատն է, որ այսօրուան բանաստեղծներու բերքէն դժգոհ՝ սպասում է: Ի վերջոյ ի՞նչ է Խառակեանի բանաստեղծական անհասանելի արժանիքը, որ բարձրագոյն կէտին վրայ պատուանդան յարդարէինք իրեն եւ հանձնարեղ սանըրպետով բաժնէինք դինք այսօրուան բանաստեղծներուն տաղանդաւոր հոյլէն:

Մենք կը կարծենք, թէ սովորաբարութիւնը բաւական դեր խաղացած է Մարինեանի արժեչափերուն մէջ, այլապէս բնաւ ըմբռնելի չէ այսօրուան բանաստեղծներուն հանդէպ իր ժլատութիւնը եւ երէկուաններուն առիթով ցուցարբերած շաղկապները:

Ա. Խառակեանին հանձնարի պատմուածան ընծայող մարդը, երբ Գ. Սեւակի, Վ. Դաւթեանի, Հ. Սահեանի, Ս. Կապուտիկեանի բերքով չի լիանար ու կը սպասէ, կը ստիպուինք ընդունիլ, որ իր սպասումը առողջ հիմք մը չունի...



Ռուսն, 1 Մարտ 1939

Խորասյեա հաւատացած եւ թէ գրի առնելով այս տղերը՝ հաւատարիմ կը մնամ ընկերվարութեան այն շրթունքովն, որ ջանացած եւ բանածեւեղ բազմաթիւ յօդուածներու մէջ: Ու Հ. Յ. Կաշնակցութեան, որուն մէկ զինուորը կը մնամ, գրպանս անդամատեսեր ըլլայ կամ ոչ:

ՎԱԶԳԻՆ ԵՌԵՄԵԱՆ

(Մնայիլիս 1955, Յունուար, բացառիկ Քիւ, էջ՝ 25)

ՎԱԶԳԻՆ ՇՈՒՇԱՆԵԱՆԻ ՊԱՐԱԳԱՆ

«Մ․ Արեղեանի անուան գրականութեան ինտիտուտի գիտական խորհրդի սրբազանք» այս տարի Երեւանի մէջ լոյս ընծայուեցաւ Գեղամ Աւան կողմէն ծանօթ լղրճուկին 158 էջոց շահատակութիւնը, ի մասին Վազգէն Շուշանեանի:

Կարծես չէր բուեր խաթարուած իր էութեան ներդաղքը եւ, ահաւասիկ, օգտուելով հայրենի ընթերցողին անտեղեակութենէն՝ կը ժպտէր ի պատկերի իւրում ներկայացնել նաեւ սիրելի մեռելները: Ամբողջովին ու աննախընթաց կամայականութեամբ մը այլասերման ենթարկուած է Շուշանեանի գաղափարական անձը, որ ընթերցողին ճանչցած դէպ, ամուր, ինչն իրեն հաւատարիմ տեպարը չէ, այլ երկերեսանի մը, իր ուխտին դաւանանելու ընդունակ վատ մը, ա՛յն աստիճան՝ որ շարքային դաշնակցական եղած տարիներուն իսկ կը ծառայէր տարբեր դասանանքի եւ դրօշի:

«Դարձաւ կրօնս յեղափոխական, որի դրօշի գոյնը կարմիրն էր, միջազգային պրոլետարիատի դրօշի գոյնով»:

Ուրիշ էջի մը մէջ՝

«Արդայ եւ արկածի տղաքը՝ վէպի Երուանդից մինչեւ «Ամրան գիշերները» Վազգէնը, ուրիշ գիծ է գնում, նոյն մարդն է քայլում, եւ քայլով այդ մարդը շէր կարող վերջում շեանել կոմունիստ Ալեքսանդրին եւ շնոյնանալ նրա հետ, դառնալ այն յեղափոխականը, որի գրօշը կարմիրն է»:

Որքացած ու տարագրուած մարդու սուսայտանքներ ունեցաւ Շուշանեան, խորամուխ եղաւ ներկուակցական պայքարներու, ճիշդ է, քայց տառապած մարդու մը տառապանքներուն կորուսիտական երանգաւորում տալ կամ ներկուակցական պայքարներու մէջ կողմերէն մէկը եռոյն կուսակցութեան գաղափարաբանութեան դէմ հանել՝ ճիշդ չէ՛, Շուշանեանի պարագային անուազն անպարկեշտութիւն է, քանի որ Շուշանեանի պայքարը «Հ․ Յ․ Դաշնակցութեան փառահեղ ու վիթխարի մարմինը» իր ըմբռնումով, առաջնորդելու երազէ մը կ'առաջանար եւ ոչ թէ զայն աւելորդ համարելու ու կործանելու մոլեղութենէ մը: Եւ ինչ խօսք, Շուշանեան միշտ հաւատարիմ մնաց իր էութեան, իր ուխտին, Հ․ Յ․ Դաշնակցութեան, ինչպէս կը վկայէ շարքերէն դուրս գալէ եօթը տարի ետք արձանագրած հաւատարմութեան իր դիրքը, ուր ողջ հասակով ու հոգիով կ'երեւայ տարաբան գրադէտին անձը կազմող շատաչուն շաղախը:

Այսպէս էր Շուշանեան շարքերուն մէջ եղած ատեն, շարքերէն դուրս ելլելէ անմիջապէս ետք, «Արարկոց»ական շարժումի ամենարուան օրերուն, երբ կը քնարերգէր հայրենիքին հանդէպ ցուցաբերած դաշնակցական տղուն արու արժանիքները եւ անոր ակնարկին մէջ կը տեսնէր ճառուկազայն հայրենիքը: Այդպէս էր մահէն երկու տարի առաջ, մէկ տարի առաջ, երբք ամիս առաջ, մինչեւ վերջին շունչը: Ենթադրութիւններ չենք ընել, բաղձանքներ չենք բանձնել: Վերջին փաստերը սպուած են Վրայիլիքի մէջ, այն «Նայիրի»ին, որուն Շուշանեանի գրութիւնները հիւրընկալած 50 յայրերգական ու պարբերական թիւերէն եւ ո՛չ մէկը, ոչ իսկ Մէկը յիշատակուած է Շուշանեանի մասին լոյս տեսած դիտակա՛ն հրատարակութեան մէջ:

Առայժմ միտք պահեցէք դիմացի էջին տրուած հաւատարմութեան դիրքը: Մնացեալը՝ շուտով:

« ԱՐԵՒԱՑԻՆ ԺԱՄԱՅՈՑՅ »

Ասկէ երեք տարի ու քիչ մը աւելի առաջ, այս վերնադրով, այս թերթին մէջ քանի մը տող գրելու առիթ ունեցանք «Արեւային ժամացոյց»ի խորհուրդը բանաստեղծութեամբ լուսաւորած Արբաւանցի Ալիքեանի մասին:

Բանաստեղծութիւնը, ուրիշ քանի մը կտորներու հետ, երեւցած էր «Գրական թերթ»ին մէջ, զոր արտագրեցինք անմիջապէս եւ ուրախութեամբ փոխանցեցինք ընթերցողին:

Արեւային ժամացոյց, մայրավանճի հակատին,
Ո՞ր բայէն էր յաւերժի, երբ առաջին անգամ դեռ
Արեւի հետ, Բն՛գ նման, ժամադրուե՛ց մեր հոգին...

Որք ունէր այս բանաստեղծութիւնը, թելազրական ուժ, արտաքին երեւոյթին հետ մարդուն ներքին անձը յայտնաբերող լոյս, ձգողական չմայլք, արուեստ:

Մեր սպաւորութիւնները բացայայտող նման տողեր գրեցինք օրին, եւ ըսինք, թէ Արբաւանցի Ալիքեանի հետ «Արեւային ժամացոյց»էն հոգ միայն «ժամագրուեց մեր հոգին»:

Անցնող այս երեք տարիներուն ժամանակը ընթացաւ Ալիքեանի բանաստեղծական շնորհներուն ի նպաստ:

Նոյն տարին հրատարակ հանեց Երեւանի Մատենադարանին նուիրուած «Բարեխոսոյ Հրամանդան» անուն իր հանրայայտ պոեմը, իսկ այս տարի հրատարակեց «Աչքեր» խորագրով նոր հատոր մը, որ նոր է ամբողջութեամբ ու ամբողջութիւնը կը շնչէ թարմութեամբ, վկայելով նոյն աստիճանի ստեղծագործական արարքին սրբութեամբ մտեցող մարդու մը մասին:

Արբաւանցի Ալիքեան իր ուժերուն մէջ ծաղկեալ շրջանը կ'ապրի այս պահուն եւ անիրաւութիւն է այսուհետեւ յետադարձական շրջանի հայ բանաստեղծութեան նուիրուած առանձին յօդուածներուն կամ հատորներուն մէջ անտեսել անոր անունն ու վաստակը:

«Աչքեր» հատորին պարզեւած ուրախութենէն հոգ, Ալիքեանի մասին «Գրական թերթ»էն առնուած ահաւասիկ աղուոր լուր մը եւս:

«Մոսկուայի «Սովետսկի պիստոյ» հրատարակչութիւնը լոյս է ընծայել Արքանավ Ալիքեանի բանաստեղծութիւնների ժողովածուն՝ «Արեւային ժամացոյց» խորագրով: Սա բանաստեղծի երկրորդ գիրքն է, որ լոյս է տեսնում Եւրոպայում: ... Գիրքը լոյս է տեսել 10 հազար օրինակ տպագրութեամբ»:

Արեւային ժամացոյցին առանձին գեղեցկութիւնը առանձին գրութեամբ մը առաջին անգամ մատնանշած թերթին համար՝ ուրախութիւն է իմանալ նոյն անունով մկրտուած հատորի մը լուրը:

Արեւային ժամացոյցին արեւէն ու զարկերէն ու խորհուրդէն անմասն չեն նաև Ալիքեանի միւս բանաստեղծութիւնները, որոնք վասակաբար նշանակելի սպաւորութիւն մը պիտի գործեն ոտա ընթերցողին վրայ, ընթացիկ ճաշակներէն ու պարագաներէն ձերբազատուած բանաստեղծի մը մասին խօսք բանալու ուրախութեան մը մզելով շատերը:

... Մեր յաջող թիւով գրախօսական մը՝ Ալիքեանի «Աչքեր» խորագրուած հատորին մասին:

ԲԱԳԻՆԻ 1968-Ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

ԲԱՆԱՍԵՂՇՈՒԹԻՒՆՆԵՐ

<u>Հեղինակ</u>	<u>ԽՈՐԱԳԻՐ</u>	<u>ԹԻԻ</u>
Մ. ԻՇԵԱՆ	Դեռ քանի դար	1
> >	Գումարում-հանում	1
Ա. ԳԱՌՕՆԷ	Ուղիներում մեր հեռադար	1
Ա. ՆՐԿԱԹ	Բերդապահը	1
> >	Ֆիւնը դարձեալ	3
> >	Գարուն	3
> >	Հայաստանի տառուտ	5-6
> >	Բառերը	7
> >	Յիշատակ	9
> >	Լեւոն ռզիմ	9
> >	Էրեբունի 782 (Ն. Գ.) նրեւան 1968	11-12
ԱՇՈՏ ՆՈՒՐԵԱՆ	Գիշերապահը	1
> >	Կարօտ ու գինի	5-6
ԱՐՄԱՆՏ	Նոր դու կառ	1
> >	Ես քեզ շնչում եմ	2
> >	Նոր խարխուլը վերցուի	2
> >	Որը մի Մասիս	11-12
Հ. ՅՈՎԱԿԻՄԻԱՆ	Ի՞նչ անեմ	2
> >	Մարմնի ու ցնորի	2
> >	Փառք մեր աշխարհին	4
> >	Նրկուսիդ եմ կարօտի	8
> >	Քանդակներ	8
> >	Զիարշաւ	10
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Լուսնին	2
> >	Հովուերգութիւն լուսնային	8
> >	Բախտի աղջկան	8
ՇԱՀԱՆԴՈՒՆՏ	Մտքուած հոգիներ	2
> >	Բազմամբ	2
> >	Քննադատները	2-3
> >	Հրուէր	5
> >	Անձանօր յաշարաբը	8
> >	Այցելութիւն	9

Հեղինակ	ՈՐՈՒՅՐ	ԹԻԻ
ՌԻՄԱ ԳԱՌՕՆԷ	Մեմֆ	2
» »	Մտորում	4
» »	Միայն քեզ համար	8
» »	Հայելու խորքում	8
» »	Գրիչի իմ	9
» »	Երկիր հայրենի	11-12
Փ. ՅԱՎՈՐԵԱՆ	Լիալուսին	8
» »	Մեմֆ	5-6
» »	Ջայնը	7
Ս. ԲԵՆՈՒՆ	Նրեկոյ	8
» »	Դեպի լոյսը	8
Հ. ՅԱՎՈՐԵԱՆ	Այս գիշեր	8
Ե. ՕՏԱՃԵԱՆ	Միշտ երազ եղիր	8
Վ. ՕՇԱԿԱՆ	Բարկուքիւմ	4
ԱՐՇԻ	Մուրացող չեմ ես	4
» .	Իմ յոյս	9
»	2750-ամեակ	11-12
Վ. ՔԵՔԷՆԱՆ	Յարութեան շունչն է ակա	5-6
» : »	Կենդանութիւն հայրենի	5-6
Յ. ԳԵՂԱՐԻ	Արիւն եւ արեւ	5-6
» - »	Հովը	11-12
» ' »	Գիշերուան հետ քեանցուկ	11-12
» . »	Հրաշք	11-12
» »	Խորհուրդ	11-12
Ն. ՄԱՐՅԵԱՆ	Երբ դառնութիւնը կու գայ	5-6
ՅՈՎՀ. ՇԻՐԱԶ	Անճայն սրտով	5-6
Ա. ՄԱՀԱԿԱՆ	Նրբանիկ եմք մեմֆ	5-6
Կ. ԻԻԼԻՊԷՅԵԱՆ	Գեղօն գերագոյն հայ անկախութեան	5-6
Ա. ԱՄՈՒՐԵԱՆ	Նետածիգ Արեշը	7
Ն. ՊԷՐՊԷՐԵԱՆ	Հոգիս ամենուն	8
Գ. ԳԵՂԱԿ	Հայոց պատմութիւն	9
Փ. ՃԵՐԱՆԵԱՆ	Շուքս	10
» - »	Գու պատկերիդ եամաճայն	10
Վ. ՔԵՔԷԱՆ	Նոստալգիա Ինտիա	10
» »	Խորագիրը՝ իրաւ որ	10
»		
»		
»		
»		
»		
ԱՐՁԱԿ		
Ա. ՀԱՅՎԱԶ	Կորեկի արտին մէջ քաւալիւր առողջարար չէ	1
» »	Մայիս ամիսը	5-6
» »	Միայն Սասունի Գաւիթը չէ	6
» !	որ փոփոխակներ ունի	7
Հ. ԶԱՐԴԱՐԵԱՆ	Ժամանակ եւ խորհուրդք իւր	1

Հեղինակ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻԻ
Ն. ՊԷՇԻԿՔԱՇԼԵԱՆ	Ինչեք պիտի ըսեիմ անասունները	1
»	Հայկական հարցը	4
»	Յիսնամեակ հայկական հրաշքի	5-6
»	Նարագոյն հայ բանաստեղծութեան հայ հիմնադիրը	9
»	Ալպեաններու մէջ	11-12
Բ. ԿՈՒՆԵԱՆ	Հրաշք մը պատահած է ինծի...	1
»	Մտորումներ	11-12
Ն. ՊԱՐԹԵՆԵԱՆ	Գրական գրայց	1
»	Գիտականը	5-6
Ժ. ԱԹՔԱՐԵԱՆ	Գրեցէ՛ք... բացակայ	2
»	»	3
»	»	4
»	»	5-6
»	Փշուտ ճամբան, Անդ ճամբան	5-6
Գ. ԱՃԻՄԵԱՆ	Լուսբեան համաձայց	2
Ղ. ԺԻՐԱՅՐ	«Մակ»-ի մէջ	2
»	Թրքուհիին համբոյրը	8
Կ. ՍԱՍՈՒՆԻ	Սարերու Ասլանը	2
»	»	3
»	Անկախութեան Յիսնամեակը	5-6
»	Հայկական յիմերութիւն	11-12
Պ. ԳԱՆՈՒՍՏԵԱՆ	Պատրանաբալի «Ուսթազը»	2
»	Ժառանգակաճութեան հնայում կամչը	8
»	«Երանի աչքովս նայելիք»	9
Ա. ԱՐԾՐՈՒՆԻ	Գայրուցիս վախրիկ ճամբան	2
»	Ակասիի անկծէք	4
»	Ես իմ հայրենի Մայիսը կ'ուզեմ	5-6
»	Մովսէսեանի ճամբան	8
»	Հայու աչքեր	10
Ս. ՍԱՀԱԿԵԱՆ	Հայ ապրիմէ հարարք	3
»	Mystifications	11-12
Վ. ԱՐՄԷՆ	Ամէն սիրտ իր ճամբով	3
Ա. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ	Արդարութիւնը	4
»	Ողջակէզը	9
ՆԵՐՄԷՍ ՎԱՐԳՍՊԵՏ	Գեղեցիկ, դեմքեր, ապրումներ	4
Ժ. ՓԼԷՆ	Ճառախօսութիւն բուսակերներու Միջազգայն յիմի հիմնադրութեան հարիւրերորդ տարնդարձիմ առիթով	4
Ն. ՎԻՐԱՊԵԱՆ	Սրճնի թորոտ	4
»	Այգրնհաուրը մեռաւ	4
»	Կայրի մը տեսութիւնը	5-6
»	Հացի համար	8
»	Աւարայրի ոգեկոչումը	5-6
Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ	Խորհրդանշան միջին խորհրդարան	5-6
ՕՀԱՆ ԿԱՐՕ	Հայացման գործողութիւններ	5-6
Մ. ՅԻԵՏԻՍԵԱՆ	Յաղթանակներու օր	5-6
Յ. ՕՇԱԿԱՆ		

Հեղինակ	Խորագիր	Թիվ
Գ. Վրդ. ՊԱՆՈՒՅԵԱՆ	Յեղիմ յարութիւնը	5-6
Լ. ԲԱՇԱԼԵԱՆ	Երևոյց Բեռլինի Երևան	5-6
Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ	Անաստի վերջիմ օրեր	5-6
Մ. ԻՇԵԱՆ	Կարօտ դոշի	5-6
Ն. ՋԱՐՆՈՒՏԵԱՆ	Ոսկեգոյն արշալոյսը	5-6
ԵԻ. ՊՕՅԱՅԵԱՆ	Անկախութեան խորհուրդը	5-6
Յ. ՄԿՐՏՉԵԱՆ	Անյայտ շիրիմը	5-6
ԳՐ. ԹՈՐՈՍԵԱՆ	Ուրիշին ամուսինը	5-6
»	»	7
Պ. ՄԱՊԵԱՆ	Ազատներուն օտանդութիւնը	5-6
Ս. ՍԱՆԻՆԵԱՆ	Մի պատմութիւն	9
»	»	10
Յ. ԳԵՂԱՐԳ	Հպարտ ազգը	7
»	»	9
Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆ	Տէր, ընկալ քաղցրութեամբ	9
Ա. ԱՐՓԻՆԷ	Պատմաբան Ա. Բանասանի շունդայից գիրքը	7
Յ. ՓԱՓԱՋԵԱՆ	Չարիքէն բարիք	8
»	Պէտք է փրկել Արարատը	8
»	Հայկական վաճառանիշ	11-12
Բ. ԵՂԻԱՅԵԱՆ	Ատանայի սերվիշը	9
Ս. ՍԱՐԳԻՍԵԱՆ	Բարեկամներս	9
Յ. ԿԱՐԱՊԵՆՅ	Գոնասլ Առաքիլը	10
Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ	Ջրայց	10
Վ. ԳԵՈՐԳԵԱՆ	Մատնուձի եւ հառայանքի շիքեր	10
Վ. ԳՐՈՍՄԱՆ	Երկար արեւ Երևանին	11-12
ՅՈՎՀ. ՄԵԼԻՔՈՆԵԱՆ	Բարին ընդ ձեզ	11-12
Վ. ԲԱՂԳԱՍԱՐԵԱՆ	Կտուցեց քաղաք...	11-12

ԻՄԱՑԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Կ. ԱՍՍՈՒՆԻ	«Բագին»ի նամակ	1
»	Գրական անդառտան	4
»	Ազատութեան արշալոյսը	5-6
»	Ռուբէն Գարրինսան	7
Վ. ԳԵՈՐԳԵԱՆ	Սփիւռքի գրական ճիգերը	1
Բ. ՓԱՓԱՋԵԱՆ	Լուիսի ֆիլանտրոպիո	1
Լ. ՄԿՐՏՉԵԱՆ	«Հայոց Արեւելից կողմանք»	1
»	»	2
»	»	3
»	»	4
»	Մայիսեան Հայաստանի ոգին	5-6
»	«Հայոց Արեւելից կողմանք»	7
»	»	8
»	»	9

Հեղինակ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻԻ
Մ. ԹԷՕԼԷՕԼԵԱՆ	Ապամամ սերտագութիւն	2
»	Մուտք	7
»	Ա. Երկաթ	11-12
ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ	Հագեղինացած ճիւղը	2
Հ. ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ	Հայկական մարտարազետութեան ոսկեղարը	2
»	»	3
»	Հայ դասական մարտարազետութեան առաջին վերածնունդը 9-11-րդ դարերուն	10
»	»	11-12
Գ. ԹՈՐՈՍԵԱՆ	Բանաստեղծի մը հեֆիաթը	3
Յ. ՄԱՐԳԱՐԵԱՆ	Լուսարագ գրագէտը	4
Ն. ՊԱՐԹԵՆԵԱՆ	Ճաշակեցէ՛ք եւ կերէ՛ք, զի քաղցր է	4
Ս. ՎՐԱՏԵԱՆ	Մայիս 28	5-6
Ն. ԱՂԱԿԱՆ	Մայիս 28	5-6
Շ. ՏԵՐ ՄԵԼՔՈՆԵԱՆ	Հայ երիտասարդութեան վերելքը	8
Մ. ԻՇԽԱՆ	Շ. Նարդունի	8
Յ. ԳԵՂԱՐԳԻ	Ռ. Դարբինեան եւ Շ. Նարդունի	8
Մ. ԿՈՐԳԻ	Յեղափոխութիւն եւ մշակույթ	8
Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ	Շարլ Գաղտնիք	9
»	»	10
»	»	11-12
Պ. ՄՆԱՊԵԱՆ	Քննադատական ընդարձակ վատնում եւ մե- նագրական սկիզբ «Ձիւներն ի վեր»	9
Գ. ՊԵՂՏԵԱՆ	Մեծարեցի համար	10
Հ. ՄԱԹԵՆՈՍԵԱՆ	Այսպէս կոչուած գիւղագրութեան մասին	10
Ա. ԵՐԿԱԹ	Հայ լեզուն	11-12
Բ. ԹԱՇԵԱՆ	Ուզերձ՝ Ա. Երկաթին	11-12
Ե. ՍԻՄՔԷՇԵԱՆ	Ա. Երկաթ	11-12

ԳՐԱԽՕՍՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

Պ. ՄՆԱՊԵԱՆ	Բ. Կռանեանի «Հայկական կատակերգութիւնը»	1
»	Ա. Հայկազի «Պանդակ»ը	7
Բ. ՓԱՓԱԶԵԱՆ	Տ. Վարժապետեանի «Բժիշկը կեանքին եւ մտաւան հետ»	2
»	Յ. Թորոսեանի «Թատրերգութիւններ»ը	2
Յ. ԳԵՂԱՐԳԻ	Մ. Իշխանի «Տառապանք»ը	7
Ն. ՊԵՇԿՅԱՆ	Ա. Արփիմէի «Կեանքի կատակերգութիւն»ը	8
»	Յ. Գեղարդի «Ուկանք»	9
Տ. ՈՍԿՈՒՆԻ	Ն. Վիրապեանի «Նայն քաղի մարդիկ»ը	8
Հ. ԽԱԿԱՆ	Հ. Յովսէփեանի «Հարսի կանգը»	8
Լ. ՄԿՐՏԶԵԱՆ	Ա. Արծրունիի «Վիրաւոր ծիծեռնակը»	8

ՆՇԱՄԱՐՆԵՐ

	<u>ԹԻԻ</u>
«Գրում եմ դժուարութեամբ»	1
«Այո կին-ծուր»	1
Գրել, արդիւնաւորել	2
Պէտք է խնայել «Գրական թերթ»ին	2
«Գեղեցիկ դժուարը»	2
Գրական մրցանակներ	3
«Բարի ընթերցում»	3
Ալեքսանդր Կինգսթրիկի եւ իր ընկերներուն պարագան	4
«Գէտըզ Մելիսիմեցի» եւ «Հայկ Արեւմտիկի» մրցանակները	7
«Զարեանը օրինակելը դժուար բան մը չէ»	7
«Ընկեր Մուրատին եւ իր սիւնն կայծակնավագ»	7
«Ամենակարեւորը ինձ համար»	7
Գրութիւններէն ետք, գիրքերէն առաջ	8
Աստու լոյս եւ շահեր անհարկի	9
«Պատգամ»ը	9
«Չէր հասկացել բանաստեղծին»	11-12
«Միջատում եմ»	11-12
Շուշաննանի պարագան	11-12
«Արեւային ժամացոյց»	11-12


ՔԱՏԵՐԱԿԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ ՔՐՈՆԻԿՆԵՐ

<u>ՀԵՂԻՆԱԿ</u>	<u>ԽՈՐԱԳԻՐ</u>	<u>ԹԻԻ</u>
Բ. Փ.	«Սալիմի վիակները»	7
Պ. Ս.	«Ո՞րն է հշմարիտը»	7
Ա. Ա.	Լիսի Կեօշերեանի ցուցահանդէսը	8

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիւ 4, 5, 8 9



digitised by A.R.A.R.@

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

**APPLES OF IMMORTALITY (նւիրում եայիպան հեֆաթնթուն
առածներուն եւ ասացումսներուն), Լեւոն Սիպմէլեան**

**ՀՌՈՄԿԱՅ - պարբերաբերք Լեւոնի ժողովուրդներու. Նախարար
Կարսիմալ Գ. Պ. Ազանունիի Քահանայական յիմունեայ յարկ-
եանին):**

ՄԵՐ ՆԱԻԸ (վեպ), Հրամկ Գանգրունի, 1968, Պէյրուք

ՅԱՐՏԵԱՆ ԲԱԺՆԵՐԷՆ

ԷՖԻԱՆՆ 22 Լ. ՈՍԿԻ
ԵՐՏԱՍՈՒՄԱՆ 8 ՏՈՂԱԲ
ՆՍՏԱՎԱՅԱԹ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ --

G. SASSOUNI

Rue Sélim Boustani,
Beyrouth-Liban

digitised by A.R.A.R.@